

26. 416

Խ. Ս. Շ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ

«ՀԱՅ ԳՅՈՒՂ ԿՈՊՊ»

ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(1926 թ. 1/X—1928 թ. 1/VII)



334.63  
2-24

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂ ԿՈՊՊ»-Ի

ԵՐԵՎԱՆ

1928



5 .06. 2013

26.416

17 FEB 2010

Հ. Խ. Ս. Հ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱ

334.63  
2-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ

«ՀԱՅԳՅՈՒՂԿՈՊ»

ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(1926 թ. 1/X — 1928 թ. 1/VII)

1003  
13855

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՊ»-Ի Ա ՄՅԱՆԿՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ





10 3 FEB 2016

Գրասեղանային № 1463 (բ) տիրած 500
Հայկական 2-րդ սպ. Յերևան № 690

### ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առաջին անգամն է, վոր Հայաստանի յերիտասարդ Գյուղատնտեսական Կոոպերացիան լույս է ընծայում իր գործնականութեան հաշվետվութիւնը: Պարզ է, վոր ինչպես ամեն մի նոր գործում, այստեղ յեւս վորոշ թերութիւններ անխուսափելի յեն:

Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, վոր հրատարակման աշխատանքները կատարված են շտապ կարգով, Գյուղկոոպերացիայի ցանցից անհրաժեշտ թվական տվյալները ստացվել են շատ դանդաղ, վոչ իրի վորի հետեւանքով մինչեւ տպարան ուղարկելու որը փոփոխութիւններ են մտցվել հաշվետվութեան մեջ:

Անկասկած, այս բոլոր թերութիւնները ուղղեցույց կլինեն մեզ խուսափելու հետագա հաշվետվութիւններում սխալներ կատարելուց:





պես: Անհրաժեշտ է հիշել, վոր վարկային կոոպերացիան վերելից, իշխանության թելադրանքով և խոշոր նյութական միջոցներով եր ցանցավորվում ժողովրդական տնտեսության մեջ և ունի հատուկ նպատակ, այն է՝ ստեղծել ուժեղ կուլակային գյուղական տնտեսություններ, քայքայելով միջակ և թույլ գյուղացիական տնտեսությունները:

Վարկային կոոպերացիայի բնագավառում բոլոր անաչառ ուսումնասիրությունները միաբերան վկայում են, վոր շատ ցածր է յեղել Վարկային կոոպերացիայի սոցիալական նշանակությունը: Նրա անդամների մոտ 75% -ը կուլակ և ուժեղ տնտեսություններ են կազմել, 25% -ը՝ միջակները այսպիսով, վոր մի չքավոր տնտեսություն չի բավարարվել կամ ոգտվել այդ վարկերից: Վարկը գոյություն է ունեցել գյուղական կուլակային տնտեսության ստեղծման և զարգացման համար:

Հետևապես այն՝ ինչ մեղ համար եյակուն է ու անհրաժեշտ, անցյալում կամ գոյություն չի ունեցել, կամ՝ ինչ յեղել է՝ գործել և տրամագծորեն հակառակ ուղղությամբ և խմաստով:

Այստեղից պարզ է, վոր Գյուղատնտեսական կոոպերացիան Խորհրդային Հայաստանում իր ներկա կատարելիքով ու նպատակով չի ունեցել իր անցյալը, դա նոր յերևույթ է, նոր հիմունքներով, անցյալից մնացած՝ տնտեսապես քայքայված յերկրում:

Հայաստանի Խորհրդայնացման հենց առաջին օրերին Պարթոլովի մի վորոշմամբ կոոպերացիայի բոլոր տեսակները միասնական սկզբունքով համախմբվում են Սպառողական կոոպերացիայի շուրջը, վորի ղեկավար կենտրոնն էր այն ժամանակ Հայկոոպը:

1921 թ. գարնանը, հենց Հայկոոպի հրահանգչական բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվում է Յերևանում «Այգեստան» անունով առաջին Գյուղատնտեսական կոոպերատիվն այգեգործական ուղղությամբ: Այդ ընկերությունը գործում է մինչ 1924 թ., բացելով իր ճյուղերը Եջմիածնում, Աշտարակում և Ղամարիվում:

Մինչև 1924 թ. Հայաստանի գանազան գավառներում մեծ մասամբ տեղական նախաձեռնությամբ կազմակերպվում են գյուղատնտեսական կոոպերացիայի նաև այլ տեսակները՝ վարկային, մեղվաբուծական ընկերություններ, կաթնարտերներ և այլն: Նույն 1924 թ. Հայկոոպին կից կազմակերպվում է Գյուղկոոպերացիայի ժամանակավոր կենտրոն, վորը սկսում է զարգացնել ինքնուրույն կազմակերպչական աշխատանք: Նույն թվի սեպտեմբերի 20 - 30-ին Յերևանում հրավիրվում է Գյուղկոոպերացիայի ցանցի լիազորական առաջին համագումարը և վերջնականապես ձևակերպվում է նրա (Գյուղկոոպերացիայի) գործունեությունը նպատակն ու հիմունքները, տարվ նրան «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ» անունը:

Հայաստանը տիպիկ գյուղատնտեսական յերկիր է և նրա յերիտասարգ Գյուղկոոպերացիային առաջադրված են հսկայական աշխատանք ու բազմաթիվ խնդիրներ, վորը պետք է լուծվի և իրագործվի աստիճանաբար ու մեծ համառությամբ:

Իբ գոյություն չի ունի տարվա ընթացքում նա կարողացել է ընդգրկել և իր գործնեյությունը շրջանի մեջ առնել Հայաստանի գյուղացիական տնտեսությունների 40% -ը (61648 տնտեսություն), վոր կազմակերպված են 265 կոոպերատիվում. ուժեղացրել է իր փայական զբաղաբերությունը մինչև 348,033 ուրբուր, իսկ ընդհանուր տարեկան ապրանքաշրջանառությունը հասցրել մինչև 16200400 ուրբ. (1926—27 թ.):

Թե Գյուղկոոպերացիան ինչպես է հասել այդ խոշոր հաջողություններին, թե ինչ հանգամանքներ են նպաստել կամ խանգարել կոոպերատիվ աշխատանքներին, ինչպիսի թերություններ են յեղել այդ աշխատանքի մեջ՝ այդ ամենը կասենք հաշվետվություն մեջ: —

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### Ստորից ցանցի

1925/26 և 1926/27 հաշվետու տարիները, ինչպես

### զարգացումը.

և առաջին 1924/25 տարին, բնորոշվում են վորպես

Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման շրջան, յերբ վերջնականապես ձևակերպվել է այդ սխեմայի յուրաքանչյուր միավորը (միություններ և առանձին կոոպերատիվներ) և կազմվել է ամեն մեկ միավորի հիմնական աշխատանքների ավելի կամ պակաս չափով հաստատուն ծրագիրը:

Մեր յերկրի ժողովրդական ամբողջ տնտեսության ընդհանուր զարգացումը, գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնացման աճումը, գյուղացիություն մեջ տեղի ունեցող շերտավորումը, աշխատավորության ընդհանուր բարեկեցությունը բարձրացումը — այս բոլորն անպայման եյակուն աղբյուրություն են ունեցել կոոպերատիվ ցանցի զարգացման և ազգարնակչության կոոպերացման ընթացքի վրա: Հիմնական դիրեկտիվը, վորով առաջնորդվել է Գյուղատնտեսական կոոպերացիան իր աշխատանքի ընթացքում յեղել է՝ ուժեղացնել գյուղատնտեսական մասսայական տնտեսական շարժումը, տանելով այդ շարժումը գյուղական տնտեսությունների և ինդուստրացման սոցիալիստական ուղղիով: Գյուղացիական չքավոր և միջակ տնտեսությունների միացմամբ ստեղծել այնպիսի տնտեսական ձևեր, վորոնց միջոցով հնարավոր լինի մոտենալ գյուղատնտեսական արտադրության լիակատար համայնացմանը. — ահա այն հիմնական խնդիրը, վորը կանգնած է յեղել ու շարունակ կանգնած կմնա Գյուղկոոպերացիայի ղեկավարող կենտրոնի, Հայգյուղկոոպի և նրա ցանցի առաջ՝ նրանց աշխատանքի ամբողջ ընթացքում:

### Զարգացման ուղ-

### ղությունը.

Յերկրի տնտեսական առանձնահատկություններն ազդել են նաև Գյուղկոոպերացիայի սխեմայի զարգացման ուղղության վրա: Հայաստանում մենք

հանդիպում ենք գյուղատնտեսություն համարյա բոլոր ճյուղերին: Յերկրի բնությունն խիստ բազմազան է և ազգարնակությունը բնականաբար պետք է ընտրել այն զբաղմունքը, վորը համապատասխան լինի իր շրջանի և ընտրել այն զբաղմունքը, վորը համապատասխան լինի իր շրջանի և աշխարհագրական պայմաններին: Զարմանալի չէ, վոր գյուղացիությունը զբաղվում է և՛ դաշտավարությամբ և՛ անասնապահությամբ և՛ մեղվաբուծությամբ և՛ շերամապահությամբ և՛ տեխնիկական կուլտուրաների զարգացմամբ և այլն: Այդ է հիմնական պատճառը, վոր Գյուղկոոպերացիան հենց սկզբից գնաց այն ուղղությամբ, վոր միաժամանակ սկիզբ առան դրա մասնագիտական տեսակները՝ առանձին-առանձին: Հայգյուղկոոպից բաժանվեցին յերկու մասնագիտական միությունները՝ Պանիլյուղկոոպերացիան և Այգգիլկոոպը, սկսելով սպասարկել իրենց ցանցը: Ավելի լայն կենտրոնը և Այգգիլկոոպը, սկսելով սպասարկել իրենց ցանցը: Ավելի լայն մտքով կարելի է համարել կոոպերացիայի մասնագիտական տեսակը և վարկային կոոպերատիվների ցանցը, վոր ընդգրկում է գյուղացիություն կոոպերացած մասի կեսից ավելին, այն գյուղացիություն, վոր ի դեպ է ասել, խիստ կարիք է ունեցել վարկի՝ վերականգնելու իմպերիալիստական



և ազգամիջյան կռիվների հետևանքով իր քայքայված անտեսությունը:

Այդպիսով Գյուղկոտայերացիան մեղանում զարգացել է մինչ այժմս իր տասնհինգ տեսակը, ինչ խոսք, վոր առաջ են գալիս ևս նոր տեսակներ:

Կոոպերատիվ ցանցի գինամիկան ևս տեսակներ.

№	ԳՅՈՒՂԿՈՒՊԵՐԱՅԻՍՅԻ	1/10 1924 թ.	1/10 1925 թ.	1/10 1926 թ.	1/10 1927 թ.	1/1 1928 թ.	1/7 1928 թ.	0/10-ով 24 թ. նկատ.
1.	Գյուղատնտեսական վարկային ընկերություն.	16	30	36	41	41	41	256,2
2.	Սառն գյուղատնտես. ընկ.	8	15	12	4	4	3	37,5
3.	Մասնագիտակ. ընկերութ.	52	100	154	170	169	164	315,4
4.	Կոլտնտեսություններ և կոմունաններ.	—	2	3	9	8	57	—
	Ընդամենը	76	147	205	224	222	265	348,7
	Աճումը 0/10-ով նախընթաց ժամանակաշրջանի նկատմամբ	—	93,5	39,5	9,2	0,9	19,4	—

Ամենից առաջ աչքի յե ընկնում Գյուղկոտայերացիայի ցանցի անշեղ աճումը, չհաշված 1927 թ. վերջին յեռամսյակը, յերբ ցանցը քիչ իջնում է (0,9% նախորդ շրջանի նկատմամբ): Դա առաջ է յիկել նրանից, վոր հենց այդ յեռամսյակում կատարվել է ստորին ցանցի առողջացումը (нормализация), վորի մասին խոսք կլինի ստորև: Ցանցի տարեկան միջին աճումը տալիս է 66,3% սկզբնական շրջանի, այսինքն 1924 թվի հոկտեմբերի նկատմամբ, ընդ վորում աճման թափը հետզհետե իջնում է (1924/5 թ. հավասար է 93,5%, 1925/26 թ. 39,5% և 1926/27 թ. 9,2%, 1928 թ. 1-ի կիսամյակում 19,4% նախորդ տարվա նկատմամբ):

Այդ յերևույթը պետք է համարել ըստ ամենայնի բնական (նկատվում է նաև հարեան Սորհրդային Հանրապետություններում), վորովհետև զարգացման սկզբնական շրջանում աշխատանքը միշտ գնում է լայնություն և ապա արդեն վորոշ շինարարական կազմակերպչական փորձառություն ձեռք բերելուց հետո ուղղորդվում է աշխատանքի խորացման վրա: Կոոպերատիվների ներկա 1-ին կիսամյակի համեմատաբար աճումը (19,4%) հետևանք է կոլլեկտիվ տնտեսությունների զարգացման: Դիտելով կոոպերատիվների տեսակները մենք տեսնում ենք, վոր ամենից շատ են մասնագիտական ընկերությունները, վորոնք 1924 թ. առ 1-ն հոկտեմբերի կազմում են բոլոր կոոպերատիվների 68,4%-ը, առ 1-ն հոկտեմբերի 25 թ.—68,0%-ը, առ 1-ն հոկտեմբերի 26 թ.—75,1%, առ 1-ն հոկտեմբ. 27 թ.—76,0% և առ 1-ն հուլիսի 28 թ.—61,9%: Այդպիսով մասնագիտական ընկերությունների թիվը և թե տեսակաբար կշիռը աստիճանաբար աճում է (բացի վերջին կիսամյակից), այլ խոսքով ցանցը լայնանում է Գյուղկոտայերացիայի մասնագիտական տեսակների ուղղությունը, ինչպես նշել ենք առաջ: Ընդհակառակը, խոսք տալիս ընկերությունների տեսակաբար կշիռը անշեղ ցածրանում է և 1928 թվի հուլիսի 1-ին հավասարվում է 1,1%: Ամենախոշոր աճում տալիս են կոլլեկտիվ տնտեսությունները (տարեկան միջին աճումն հավասար 735,0%),

նամանավանդ վերջին կիսամյակում, բայց տեսակաբար կշիռը ցանցի մեջ շարունակում է մնալ ցած (առ 1-ն հուլիսի միայն հասնում է 21,50%): Այստեղ հարկավոր է նշել, վոր հաշվետու շրջանում բավարար ուղղորդվում է զարձրված յեղել գյուղական տնտեսությունների կոլլեկտիվացման գործին և այդ տեսակետից մենք բավական հետ ենք մնացել այլ Սորհրդային Հանրապետություններից: Կոլլեկտիվ տնտեսությունների աճման զարկ է տրված միայն սույն տարվա սկզբից:

Գյուղատնտեսական վարկային ընկերությունները Գյուղկոտայերացիայի ամբողջ ցանցում ամենաուժեղն են՝ թե անդամների թվով և թե աշխատանքի ծավալով: Դրանց թիվը համաձայնեցվում է հանրապետության զավառակների թվին, կամ ազգաբնակչության վորոշ քանակին, դրա համար էլ դրանք չեն կարող թվական ուժեղ աճում ապա: Այնուամենայնիվ վարկային ընկերությունները, ինչպես 1-ին ազյուսակն է ցույց տալիս, անշեղ աճում են, տալով 41,7% տարեկան միջին աճում:

**Ցանցի հոսուև բնույթը.**

Յեղնելով յերկրի եկանոմիկայից և առհասարակ տեղական այլ պայմաններից, Գյուղկոտայերացիայի ցանցը իր գործառնություններով և տեսակներով չի կարող կայուն լինել: Գյուղկոտայերացիայի տեսակների կայունությունը խախտվում է նաև յերկրի գյուղատնտեսական շրջանացման բացակայության և վորոշ կոլտուրանների զարգացման համար հատուկ շրջաններ չլինելու հետևանքով: Այս վերջին հանգամանքը Գյուղկոտայերացիային մեծ դժվարությունների առաջ է կանգնեցրել այն լիմաստով, վոր պարզ չի յեղել, թե վորտեղ Գյուղկոտայերացիայի վոր տեսակին պետք է զարկ տալ ու խրախուսել: Հաճախ է պատահել, յերբ գործող կոոպերատիվները կամ վերակազմված յան են յենթարկվել, կամ բոլորովին լուծվել: Որինակ, խառն ընկերություններն աստիճանաբար վեր են ածվում մասնագիտական տեսակների, մեքենայական ընկերությունները վերածվում են կոլտնտեսությունների և այլն: Բացի դրանից, շատ ընկերություններ չեն ցուցաբերում հարկավոր ակտիվություն, աշխատում են անտնտեսավար ու վրասներով:

Ահա այդ հանգամանքները Հայգյուղկոտային առաջադրեցին ցանցի առողջացման հարցը:

Հարկ է նշել, վոր մասնագիտական կոոպերատիվների վոշ բոլոր տեսակներն են առաջ յիկել ու զարգացել միակերպ:

Դրանց զարգացման թափը տալիս է հետևյալ ազյուսակը (տես էջ 10):

Ամենից առաջ աչքի յե ընկնում այն, վոր Հայգյուղկոտայի կազմակերպման շրջանում մասնագիտական ընկերություններից գոյություն են ունեցել կաթնատնտեսական արտեղները, գինեգործական, մեղվաբուծական, ծխախոտագործական և շերամապահական ընկերությունները և վոր դրանցից ամենից շատ յեղել են կաթնատնտեսական արտեղները (63,4%): Մյուս մասնագիտական ընկերությունները առաջ են յիկել հետո, 1925 և 1926 թ.թ. ընթացքում: Դա շատ հասկանալի յե և բնական, վորովհետև բացի հացի ցանքերից Հայաստանի գյուղացիության հիմնական զբաղմունքը կազմում է կաթնատնտեսությունը (Փամբակ-Լոռու և Նոր Բայազետի գավառներ), այգեգործությունը (Յերևանի և Եջմիածնի գավառներ), մեղվաբուծությունը (Դիլիջանի և Փամբակ-Լոռու գավառներ): Բամբակագործական ընկերությունների կազմակերպումն է, վոր շատ է դանդաղել: Ներա-



Մասնագիտական կոոպերատիվների զարգացումը

№ ըստ կարգի	Մասնագիտական կոոպերացիայի տեսակները	Առ 1/10	Առ 1/10	Առ 1/10	Առ 1/10	Առ 1/10	Առ 1/10	Վճարված 1924 թ. նկատմամբ
		1924 թ.	1925 թ.	1926 թ.	1927 թ.	1928 թ.	1928 թ.	
1	Կաթնարտելներ	33	71	72	81	81	95	297,8
2	Այգիկործ ընկեր.	8	9	12	21	23	25	312,5
3	Բամբակագործ »	—	—	12	18	18	14	—
4	Ծխախոտագործ »	1	2	5	11	11	6	600,0
5	Մեղվարուծակ. »	9	16	19	13	13	13	144,4
6	Շերամապահակ. »	1	1	1	3	3	3	300,0
7	Վոչխարաբուծ. »	—	—	2	—	—	—	—
8	Թռչնարուծակ. »	—	—	3	3	3	—	—
9	Մեքենագործագ. »	—	—	27	19	17	8	—
10	Այլ ընկերություն.	—	1	1	—	—	—	—
Ընդամենը		52	100	154	170	169	164	315,4
Աճումը %-ով նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ			92,3	54,0	10,4	-0,6	-3,0	

մասնագիտական ընկերությունների քիչ քանակը բացատրվում է նրանով, Վոր Հայաստանում շերամապահությունը զբաղվում են գլխավորապես Մեղրիի և Զանգեզուրի գավառների ազգաբնակչությունը: Ծխախոտի կուլտուրան իր ինտենսիվ ձևով նոր և մուտք գործում Հայաստան և դա էլ բռնի լայն տարածություն ու չի կարող արագ կազմակերպվել կոոպերատիվ ձևով:

Զնայած, Վոր վոչխարաբուծությունը և թռչնարուծությունը բավականի տարածված և մեր յերկրում և Վոր գյուղատնտեսությունն այդ ճյուղերը մեծ ապրանքայնություն ունեն (բուրդ, պանիր, ձու և այլն), բայց և այնպես Գյուղկոոպերացիան հարկ յեղած ուշադրություն չի դարձրել համապատասխան տեսակի կոոպերացիայի զարգացման վրա: Ծիշտ և, Հայ-գյուղկոոպի կողմից փորձեր յեղել են կազմակերպելու վոչխարաբուծական (Վ. Բասար) և թռչնարուծական (Կոտայք) ընկերություններ, բայց արդյունք չի ստացվել, նախ, Վոր այդ ընկերությունները յեղել են շատ մանր և յերկրորդ՝ Վոր մի աշխատանք և ակտիվություն չեն ցույց տվել:

Գյուղկոոպերացիան իր մատաղ լինելու հետևանքով դեռ չի կարողացել թափանցել գյուղացիական տնտեսությունն բոլոր ծախքերը:

Համեմատաբար աճման հավասար թափ են ունեցել գինեգործական ընկերությունները և մասամբ կաթնատնտեսական ու ծխախոտագործական ընկերությունները, ընդ Վորում գինեգործական ընկերությունները 1926—27 թ. ունեցել են ուժեղ աճում (75,0%), կաթնատնտեսական արտելներ 1924—25 թվին (115,0%) և ծխախոտագործական ընկերությունները 1926—27 թվին (120,0%):

Մեղվարուծական և մեքենագործական ընկերությունները հասել են ամենամեծ քանակի 1926 թ. հոկտեմբերի մեկին և ապա պակասել: Դա առաջ և յեկել կազմակերպչական թերություններից և բացատրվում է նրանով, Վոր նախապես բավարար չափով չեն ուսումնասիրվում տեղային պայմանները, Վորոնք կարող եյին նպաստել այդ ընկերությունների նորմալ զարգացմանը:

**Կոոպերատիվների Համեմատելով կոոպերատիվների քանակն յուր-ուրումը յեվ փոփոխությունները** բաքանչյուր տարվա վերջին, դժվար է նկատել այն բոլոր փոփոխությունները, Վոր կրել է կոոպերատիվի տվյալ տեսակը այս կամ այն տարվա ընթացքում: Յեղել են դեպքեր, յերբ կոոպերատիվն առաջ է յեկել ու մարել տարվա միջին, Վորը չի արտացոլվում այս աղյուսակում:

Այդ ճիշտ է հատկապես բամբակագործական ընկերությունների նկատմամբ, Վորոնք առաջին տարին (1926—27 թ.) խիստ արագ բազմացան, հասնելով 29 միավորի, ապա տարվա վերջին յենթարկվեցին վերակազմություն, ձուլվեցին միմյանց հետ հասնելով 18-ի: Ընթացիկ տարում դրանք նորից վերակազմվեցին, Վորով դրանց թիվը իջավ 14-ի:

Այլի հավասար աճում ունեն շերամապահական ընկերությունները, Վորոնց շրջանում տեղի չեն ունեցել վերակազմության կամ լուծարքի դեպքեր:

Մեքենագործական ընկերությունների քանակի աստիճանաբար նվազելու պատճառով թե դրանց անկենսունակ լինելն է մեր պայմաններում, այլ այն, Վոր ձգտում է յեղել խոշորացնելու այդ ընկերությունները: Հայաստանը մեծ կարիք ունի գյուղատնտեսական մեքենաների, գլխավորապես տրակտորների: Վարելահողի խոշորագույն քանակը կարելի է տրակտորով հերկել: Տարեկան միջին ամենախոշոր աճումը տալիս են ծխախոտագործական ընկերությունները (130,0%), հետո այգեգործական (56,2%), և ապա կաթնարտելները (50,0%): Վերջիններս, Վոր առաջին յերկու տարում աճման ուժեղ թափ են ունեցել, վերջին 26—27 թվին 31,6%-ով ցածրանում են:

Թե ինչ փոփոխություններ է կատարվել Գյուղկոոպերացիայի ցանցի քանակի և տեսակի մեջ՝ սկսած 26 թ. հոկտեմբերից մինչև այժմ, պատկեր է տալիս հետևյալ աղյուսակը (տես էջ 12):—

Մեծ փոփոխություն են յենթարկվել մասնագիտական ընկերությունները, մասնավորապես կաթնարտելները:

Յերեք տարի և ինն ամսվա ընթացքում կազմակերպվել են 308 կոոպերատիվ միավոր կամ ունեցածի 405,3%, վերակազմվել են 19 միավոր կամ 25,0%, կազմալուծվել են 70 միավոր կամ 92,1% և արված է այլ կոոպերատիվ միությունների 3 միավոր կամ 3,9%:

**Ցանցի առողջացումը**

Ինչպես վերևում ասացինք, Հայգյուղկոոպի վարչությունը 1927 թ. վերջին յեռամսյակում ծրագրել էր Վորոշ չափով վերակազմել և առողջացնել ցանցը: Մանր ընկերությունների անգործնեյությունը, դրանց պարբերաբար վնասը հարց էր դրել Հայգյուղկոոպի առաջ առողջացնելու ցանցը: Պարզ էր, Վոր պետք էր այդ եյական փոփոխությունը համաձայնեցնել կոոպերատիվների անդամների և տեղական կուսակցական ու Խորհրդային մարմինների



№ ըստ կարգի	ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՏԵ՝ ՍԱԿՆԵՐԸ	Յեզիկ և սու 1 10	Կազմակերպվել ևն նորերը	Վերակազմվել են սու տեսակի	Միացել են միասնականների հետ	Կազմալուծվել են	Տրված և սլվ վոչ-դ. ս. միությունները	Կան սու 1 7—28 թ.
		1924 թ.						
1	Գյուղավարչային	16	28	—	—	3	—	41
2	Ստոր Գ. Տ. ընկերութ.	8	9	7	—	7	—	3
3	Մասնագիտական	52	205	10	27	53	3	164
<b>Վարից</b>								
ա.	Կաթնարտերներ	33	89	5	3	19	—	95
բ.	Այգեգործական ընկեր.	8	21	—	—	4	—	25
գ.	Բամբակագործ.	—	29	—	13	2	—	14
դ.	Ծխախոտագործ.	1	13	—	2	6	—	6
յ.	Մեղվարուծակ.	9	13	—	3	6	—	13
զ.	Շերամապահակ.	1	2	—	—	—	—	3
է.	Վոչխարարուծ.	—	2	—	—	2	—	—
ը.	Թռչնարուծական	—	3	—	—	3	—	—
թ.	Ձիարուծական	—	1	—	—	1	—	—
ժ.	Ձկնորսական	—	1	—	—	1	—	—
ժա.	Մեքենաողա.	—	28	5	6	9	—	8
ժբ.	Տնայնագործ.	—	2	—	—	—	2	—
ժգ.	Միլիտարտիվ	—	1	—	—	—	1	—
4	Կորնտեսութ.	—	66	2	—	7	—	57
<b>Ընդամենը . . .</b>		<b>76</b>	<b>308</b>	<b>19</b>	<b>27</b>	<b>70</b>	<b>3</b>	<b>265</b>

հետ: Բացի այդ մեծ դժվարություն են առաջ բերում լուծարքի կամ վերակազման յենթարկվող կոոպերատիվի ունեցվածքի և պարտքերի հարցը: Հարկավոր են այդ խնդիրները տեղերում լուծել և ընդհանուր ժողովներում անցկացնել: Հարմարվելով կոոպերատիվների անտեսական ու հասարակական պայմաններին, Հայկոպերատիվները ցանցի մեջ մտցրել և հետևյալ փոփոխությունները:

№ ըստ կարգի	Կոոպերատիվների սեռակները	Կազմ. սու 1 հոկտ. 1927 թ.	Լուծար-վել են	Վերակազմվել են	Միացան սլվ կոոպեր.	Կազմեցին նորերը	Կան սու 1 հոկտի 1928 թ.
1	Ծխախոտագործական . . .	11	5	—	1	1	6
2	Մեքենաողագործ. . . . .	17	—	2	7	—	8
3	Թռչնարուծական . . . . .	3	3	—	—	—	—
4	Բամբակագործ. . . . .	18	—	—	5	1	14
5	Վոչխարարուծական . . .	1	1	—	—	—	—
<b>Ընդամենը . . .</b>		<b>50</b>	<b>9</b>	<b>2</b>	<b>13</b>	<b>2</b>	<b>28</b>

Ինչպես տեսնում ենք առողջացման յենթակա յեն յեղև աղյուսակում հիշված հինգ տեսակի կոոպերատիվները, բացի կաթնարտերից, վորոնք վերակազմվել են Պանիրյուղկենտրոնի գծով: Բոլորովին կազմալուծվել են 9 կոոպերատիվ միավոր, վերակազմվել են յերկուսը (կոլեկտիվ անտեսություն), միացել են այլ միատեսակ առողջ կոոպերատիվների 13 միավոր, նոր կազմակերպվել են 2-ը: Այսպիսով 50 միավորներից ստացվել են 28 ավելի խոշոր և կենսունակ միավորներ: Գլխավորապես խոշորացման յենթարկվել են մեքենաողագործական և բամբակագործական ընկերությունները:

ները: Ելմիսանի գավառի 8 մեքենաողագործական ընկերություններից, վորոնք բոլորը միասին 1926—27 թ. ունեցել են 2485 ուրբ. փաս, այժմս վերակազմվել են յերկու խոշոր ընկերությունների, վորոնք ինչպես նախատեսվում և ներկա տարում, պետք և ունենան մոտ 1000 ո. ոգուտ: Բամբակագործական ընկերություններից փոքրերը, վորոնց ցանքսը չի հասնում 500 դեսյատինի (բ. Վեդիի, Աղամզալուի, Ղարաղլաղի, Ն. Ղարխունի և Աղջարիի) միացել են մոտիկ գանվող ավելի խոշոր ընկերություններին: Ղամարլու գյուղում կազմակերպվել են նոր ընկերություն: Ունեցած 3 թռչնարուծական ընկերությունները անգործություն մատնված լինելու հետևանքով բոլորովին լուծարքի յեն յենթարկվել: Յենթարուծությունը զարկ տալ կոլեկտիվ անտեսություններում ստանալով այդ նպատակի համար հատուկ վարի: Յանցում յեղած մեկ հատ վոչխարարուծական ընկերությունը (Բ. Վեդիի) լուծարքի չի յենթարկվել, բայց փաստորեն մատնված և անգործություն:

խոշոր նշանակություն տալով վոչխարարուծության զարգացմանը, Հայկոպերատիվները վորոնք և կազմակերպել 10 խոշոր ընկերություններ՝ վոչխարարուծական վայրերում, ինչպիսին են՝ Լենինականի, Ն. Բայազետի գավառների վորոշ մասերը: Այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Ծխախոտագործական ընկերություններից լուծարքի յեն յենթարկված 5-ից մինչև 10 դեսյատին ցանքս ունեցող մանր ընկերությունները, վորպիսին են Վ. Բասարի, Ն. Յեվդոկիայի, Մուլա-Բայազետի և Աղբաշ ընկերությունները: Նորը կազմակերպվել և Բաշ-Գյանիում: Պետք և շեշտել, վոր ծխախոտագործության տարածման վայրերի հարցը դեռ վերջնականապես չի լուծված, վորի հետևանքով Գյուղկոոպերացիան այդ ընկերությունների համար ըստ վայրերի վերջնական զարգացման հեռանկարներ չի ընդգծել:

**Յանցի զարգացման հեռանկարները**

Հետագա տարիներում Գյուղկոոպերացիայի ցանցը Հայաստանում պետք և զարգանա յերկու հիմնական ուղիով—կոլեկտիվացման և մասնագիտացման: Մի կողմից Գյուղկոոպերացիան պետք և ընդգրկել գյուղատնտեսություն բոլոր ճյուղերը և կոոպերացման յենթարկի այդ ճյուղերի արտադրությունը, զարկ տալով նրանց արտադրանքի ապրանքայնացմանը, մյուս կողմից պետք և խորացնի և լայնացնի գյուղատնտեսության պրոցեսաների համայնացման աշխատանքները: Այդ նպատակով պետք և զարկ տալ կոլեկտիվ անտեսությունների զարգացմանը:

Մասնագիտական ընկերությունների մի մասը, վորոնց միջոցով խորացել և համայնացումը, ընդգրկելով նաև անդամների արտադրությունը, ինչպիսին են՝ որինակ մի շարք կաթնարտերներ, այգեգործական և շերամապահական ընկերություններ, — պետք և վերածել կոլտնտեսությունների, վորովհետև դրանք բնականաբար փաստորեն վերափոխվելու յեն կոլտնտեսությունների:

Պետք և զարգացման ուժեղ թափ ստեղծել վոչխարարուծական և թռչնարուծական ընկերությունների համար, կազմակերպել նոր մասնագիտական ընկերություններ, ինչպիսին են՝ պտղարուծական և այլն: Միանգամայն պետք և վերջ տալ խոշոր տեսակի ընկերություններին, վորոնց կազմակերպման ձևը հնարավորություն չի տալիս խորացնելու աշխատանքները և շահագրգռել կոոպերացված մասսաներին: Նրանց անդամների համապատասխան ցանկությունը և ընկերության զարգացման բազա ունենա-



լու դեպքում, նպատակահարմար և խառը ընկերութիւնները վերածել կոլ-  
լեկտիվ տնտեսութիւնների:

Այնուամենայնիվ, ցանցի ապագա զարգացման գործում անհրաժեշտ  
է առանձնահատուկ զգուշ վերաբերմունք և կազմակերպվելիք ընկերութիւն  
տնտեսական հեռանկարների ու աշխարհագրական պայմանների խորն ու-  
սուեմասիրութիւն: Այլապէս առաջ կգա լուծման յենթակա հիվանդոտ  
միավորներ:

**Գյուղկոոպերացիայի  
անգամների ֆանակը**

Գյուղկոոպերացիայի ստորին ցանցի ան-  
դամներն են, ինչպես ընդհանուր կանոն անհատ  
տնտեսութիւնները: Շատ զեպքերում ան-  
դամազրկում են նաև գյուղատնտեսութ. հետ կապված հասարակական կազ-  
մակերպութիւններ (որինակ ՓՈԿ-ը, դպրոցը և այլն): Գյուղի աշխատավոր  
մասսաների մեկ կոոպերացիայի խորանալն ու հզորանալը պարզվում և  
վոչ այնքան կոոպերատիվների քանակով, վորքան նրանց անդամների բազ-  
մութիւնով: Կոոպերատիվների անդամների պլանաչափ աճման մասին պատ-  
կեր և տալիս հետևյալ աղյուսակը:

№	Կոոպերացիայի տեսակները	1/10 1924 թ.	1/10 1925 թ.	1/10 1926 թ.	1/10 1927 թ.	1/1 1928 թ.	1/7 1928 թ.	0,0/0 1924 թ. նկատ.
1	Գյուղվարկային ընկերութիւն	5240	11492	18156	27097	28610	34248	653,6
2	Սնան գյուղատնտ.	225	509	660	247	260	270	20,0
3	Մասնագիտական	3454	7139	11189	18629	20365	25988	752,4
4	Կոլտնտեսութիւն և կոմունաներ	—	13	70	358	389	1142	—
	<b>Ընդամենը</b>	<b>8919</b>	<b>19153</b>	<b>30375</b>	<b>46331</b>	<b>49624</b>	<b>61648</b>	<b>691,2</b>

Աճումը 0/0-ով նախընթաց ժամա-  
նակաշրջանների նկատմամբ — 114,7 57,0 54,1 7,1 24,2

Այս թվերը վկայում են, վոր կոոպերատիվների անդամների քանակը  
անշեղ աճում է, և աճման թափը (0/0 հարաբերութիւնը նախընթաց տար-  
վան նկատմամբ) կոոպերատիվների գործունեութիւնն առաջին տարիներին  
ավելի ուժեղ և յեղել, քան հետագա տարիներին (1924-25 թվին—114,7/0,  
1925/26 թ.—56/0, 1926/27 թ.—54,1/0): Համեմատելով կոոպերատիվների  
քանակի աճումը նրանց անդամների քանակի աճման, տեսնում ենք, վոր  
յերկուսի աճումն էլ հետզհետե դանդաղում է, բայց կոոպերատիվների  
քանակի աճումը վոչ միայն ավելի դանդաղ և դնում, այլ ընթացիկ տար-  
վա առաջին յեռամսյակում կանգ և առել և դրանց քանակը նույնիսկ պա-  
կասել է (0,9/0): Այս հանգամանքը դրական յերևույթ է և պարզ ցույց է  
տալիս, վոր մեր կոոպերատիվները խոշորանում են: Հետևապես Գյուղկոո-  
պերացիայի ստորին ցանցն ըստ ամենայնի առողջ աճում ունի, այլ խոս-  
քով կոոպերատիվների քանակական աստիճանական զարգացման ուղեկ-  
ցում և դրանց աստիճանաբար խոշորացումը: Յերկրորդ ամենուժեղ ա-  
ճումն ունեն' թե իրենց միավորների և թե իրենց անդամների քանակով  
կոլտնտեսութիւնները, թեև դրանց տեսակաբար կշիւրը շատ ցածր է (բո-  
լոր կոոպերատիվների անդամների քանակի 1,8/0 է): Ապա գալիս են մաս-  
նագիտական ընկերութիւնները (տարեկան միջին աճումն է 174,0/0) և  
Վարկային ընկերութիւնները (147,6/0): Թեև Վարկային ընկերութիւն-

ների անդամների թիվը աճում է ավելի թույլ (27,4/0), քան Մասնագի-  
տական ընկերութիւնները, բայց Վարկայինները դեռ շարունակվում են  
զերիշխել իրենց անդամների քանակով (բոլոր անդամների թվի 55,6/0-ը'  
հանդեպ 42,2/0-ի, վորը կազմում են Մասնագիտական ընկերութիւնների  
անդամները):

Սնան ընկերութիւնների անդամների քանակը, վորը խիստ նվազում  
է 1926/27 թ. ընթացքում, այնուամենայնիվ այս տարվա հունվարի մե-  
կին 15,6/0 աճում է տալիս 1924 թվի հոկտեմբերի նկատմամբ, իսկ տա-  
րեկան միջին աճումն է 5,3/0:

**Մասնագիտական կոոպերատիվների  
անգամների ֆանակը** Մասնագիտական կոոպերատիվների անդամների  
քանակական աճման թափը ցուցահանում է հե-  
տևյալ աղյուսակը:

№	Մասնագիտական կոոպերա- ցիայի տեսակները	Ա. 1/10 1924 թ.	Ա. 1/10 1925 թ.	Ա. 1/10 1926 թ.	Ա. 1/10 1927 թ.	Ա. 1/1 1928 թ.	Ա. 1/7 1928 թ.	0/0 24 թ. նկատ.
1	Կաթնարտելներ	2254	5325	5742	6040	6260	8256	366,3
2	Այգեգործակ. ընկերութիւն.	527	875	1607	3866	4310	5145	976,5
3	Բամբակագործ.	—	—	934	5714	6574	3679	929,7
4	Ծխախոտագործ.	25	183	527	540	561	426	1704,0
5	Մեղվարուժական	638	693	1509	1073	1307	1693	265,4
6	Շերամապահական	10	28	28	614	627	1259	12590,0
7	Վոշխարարուժ.	—	—	89	71	—	—	—
8	Թռչնարուժակ.	—	—	91	116	—	—	—
9	Մեքենադուրաց.	—	—	602	595	610	530	—
10	Այլ ընկերութիւն.	—	35	60	—	—	—	—
	<b>Ընդամենը</b>	<b>3454</b>	<b>7139</b>	<b>11189</b>	<b>18629</b>	<b>20365</b>	<b>25988</b>	<b>752,4</b>
	Աճման 0/0-ը նախընթաց ժամա- նակաշրջանի նկատմամբ	—	106,7	56,7	66,5	9,3	27,6	—

Համազրկելով բոլոր կոոպերատիվների անդամների քանակական աճու-  
մը նախընթաց տարվան տեսնում ենք, վոր այդ աճումը խիստ բարձր է  
յեղել 1924/25 թվին (106,7/0), ապա նվազում է այդ աճումը, վորը ընա-  
կան է և վորը տեսանք նաև նախկին աղյուսակում: Իսկ 1926/27 թվի  
աճման տատանումը (66,5/0 հանդեպ 56,7/0) բացատրվում է նրանով,  
վոր Բամբակագործական ընկերութիւնները կազմակերպվել են 1926/27  
տարվա սկզբին ու հետևյալ տարին տվել են խիստ խոշոր աճում (518,4/0  
նախընթաց տարվա նկատմամբ): Այստեղ էլ կրկնվում է նույն յերևույթը,  
այսինքն 2-րդ տարվա աճումն ընդհանուր առմամբ ամենից բարձր է յե-  
ղել:

Չննելով կոոպերատիվների առանձին տեսակները, նկատում ենք, վոր  
ամենից բազմանդամ են Բամբակագործական ընկերութիւնները (ընդհա-  
նուրի 33,4/0), յերկրորդ տեղը բռնում են Կաթնարտելները (31,7/0), 3-րդ  
տեղը Այգեգործական ընկերութիւնները (20,0/0), քնացածները միասին



կազմում են ընդհանուրի 14,9%-ը: Դրանց զինամիկան ցույց է տալիս, վոր 3<sup>3</sup>/<sub>4</sub> տարվա ընթացքում կաթնարտերը իրենց առաջնակարգ տեղը զիջել են բամբակագործական ընկերություններին: Այգեգործական ընկերություններն ամբողջ ժամանակ պահել են իրենց տեղը (3-րդ) և 1925-26 թվի սկզբում, նույնիսկ բռնել են ժամանակավորապես 2-րդ տեղը, վոր առաջ պատկանում էր մեղվաբուծական ընկերություններին: Բամբակագործական ընկերությունները, վոր իրենց կազմակերպչական առաջին շրջանում (առ 1-ն հոկտեմբերի 26 թ.) բռնել են 4-րդ տեղը, մի տարուց հետո (առ 1/7-28 թ.) արդեն զբաղվում են առաջին տեղը: Մեղվաբուծական ընկերությունները հետզհետե կորցրել են իրենց տեղը (2-րդ) և այժմ կանգնած են 4-րդ տեղում (6,5%): 3 <sup>3</sup>/<sub>4</sub> տարվա ընթացքում անընդհատ աճում են տալիս են առաջին հինգ կազմակերպությունները, այն է՝ կաթնարտերը, այգեգործական, բամբակագործական, մեղվաբուծական և շերամապահական ընկերությունները: Մյուսների աճումը գնում է կամ առանուսնեղով, (ծխախոտագործական, մեքենադադրական) կամ խիստ դանդաղ (թռչնաբուծական) և կամ աճումը վերի աստիճանից (վոչխարաբուծական և այլն): Ամենաուժեղ տարեկան միջին աճում տալիս են շերամապահական ընկերությունները (3336,0%), ապա գալիս են բամբակագործական (535,3%), ծխախոտագործական (428,0%), մյուսների տարեկան միջին աճումը յեղել է ավելի թույլ: Ընդհանուր առմամբ մասնագիտական կազմակերպությունների տարեկան միջին աճումն է 174,0, այսինքն մասնագիտական ընկերությունների անդամները տարեկան միջին թվով ավելանում են մոտ 6000 անդամով:

Գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների քանակական զինամիկայի այս հակիրճ ընթացքը պարզորեն ցույց է տալիս, թե գյուղացիությունն ինչպիսի ընդհանուր ձգտումով կազմակերպվում է այս կամ այն տեսակի Գյուղատնտեսական կոոպերատիվների մեջ:

**Ձեռագործների միջին կոոպերատիվ կազմակերպության ուժը կախված քիվը մեկ կոոպերատիվում** և ընդհանուր առմամբ և գլխավորապես նրա անդամների քանակից, այլ խոսքով նրա խոշորությունից: Այդ պատկերը պարզվում է հետևյալ աղյուսակում, վորտեղ ցույց է տրված, թե զանազան տեսակի կոոպերատիվներից ամեն մեկին զանազան ժամըջաններում միջին թվով վորքան անդամ է գալիս:

№ ըստ կարգի	Կոոպերատիվների տեսակները	1/10-1924 թ. - 1/7-1928 թ.							1/10-1924 թ. նկատմամբ
		1/10-1924 թ.	1/10-1925 թ.	1/10-1926 թ.	1/10-1927 թ.	1/1-1928 թ.	1/7-1928 թ.		
1	Գյուղավարկային ընկեր.	327	383	504	661	698	835	255,4	
2	Պան գյուղատնտ.	28	34	55	62	65	90	321,4	
3	Մասնագիտակ.	66	71	73	110	121	158	239,3	
4	Կոոպերատիվներ և կոմունաներ	—	7	23	40	49	20	—	
	Ընդամենը . . .	117	130	147	207	224	233	199,1	
	Աճումը %/0-ով նախընթաց ժամանակաշրջանի նկատմամբ . . .	—	11,1	13,1	40,8	8,4	4,0	—	

Այս փոքրիկ աղյուսակից կարելի է հանել Գյուղկոոպերացիայի համար հետևյալ զբաղան հետևումները:—1. Գյուղկոոպերացիայի բոլոր տեսակները միշտ անշեղ կերպով խոշորանում են (կուլեկտիվ տնտեսությունների բացառությամբ, այն էլ վերջին կես տարին), 2. Այդ խոշորացման թափը, հակառակ ցանցի և նրա անդամների աճման թափին, առաջին տարիներում ընթանում է ավելի թույլ և հետզհետե ուժեղանում է (11,1%, 13,1%, 40,8%), 3. Ավելի մանր կազմակերպությունները (կուլտնտեսությունները և խոսքը գյուղատնտեսական ընկերությունները) խոշորանում են ավելի ուժեղ թափով. 4. Ս շորացման ամենաուժեղ թափն ունեն խոսքը ընկերությունները (յերեք անգամից ավելի) և 5. Ամենախոշորն յեղել են և միշտ մնում են վարկային և հատ մասնագիտական ընկերությունները:

Այս ամենը գալիս են մեղ համոզելու, վոր Գյուղկոոպերացիայի սիստեմը զբաղված է առողջ հիմքերի վրա, նվազ ու թույլ կոոպերատիվ կազմակերպությունների փոխարեն ստեղծվում են խոշոր և հետևապես ուժեղ միավորներ:

Նույն զրույթունը ցուցաբերում են մասնավորապես մասնագիտական կոոպերատիվների տեսակները, վորոնց պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը:

**Ձեռագործների միջին քիվը մասնագիտական կոոպերացիայում**

№ ըստ կարգի	Մասնագիտական կոոպերացիայի տեսակները	1/10-1924 թ. - 1/7-1928 թ.							1/10-1924 թ. նկատմամբ
		1/10-1924 թ.	1/10-1925 թ.	1/10-1926 թ.	1/10-1927 թ.	1/1-1928 թ.	1/7-1928 թ.		
1	Կաթնարտեր	68	75	80	75	77	87	128,0	
2	Այգեգործակ. ընկեր.	66	97	134	184	187	206	312,1	
3	Բամբակագործ	—	—	77	317	365	620	805,2	
4	Ծխախոտագործ.	25	92	105	49	51	71	284,0	
5	Մեղվաբուծակ.	71	44	79	83	101	133	180,6	
6	Շերամապահակ.	10	28	28	205	209	420	4200,0	
7	Վոչխարաբուծ.	—	—	45	71	—	—	—	
8	Թռչնաբուծակ.	—	—	30	39	—	—	—	
9	Մեքենադադր.	—	—	22	31	36	66	—	
10	Այլ ընկերություն.	—	—	60	—	—	—	—	
	Ընդամենը . . .	66	71	73	110	121	158	239,3	
	Աճումը տոկոսներով նախընթաց ժամանակաշրջանի նկատմամբ . . .	—	7,3	2,8	50,7	10,0	30,6	—	

Այստեղ պարզ նկատվում է կոոպերատիվների խոշորացումն, առանձնապես մանր կազմակերպությունների, բայց վոչ այնքան ակնբարև ու հետևիվողական կերպով, նրանցից յուրաքանչյուրում առանձին—առանձին: Ամենամեծ չափով խոշորանում են շերամապահական կոոպերատիվները (42 անգամ), ապա բամբակագործական ընկերությունները (8 անգամից ավելի) և այգեգործական ընկերությունները (3 անգամից ավելի) և այլն: Ուժեղ տեսակներից զանազակ չափով խոշորանում են կաթնար-

13855





տեղները (ընդամենը 28,0<sup>0</sup>/<sub>10</sub>ով 3 <sup>3</sup>/<sub>4</sub> տարվա ընթացքում): Բացի դրանից, այդ աղյուսակից յերևում է, վոր կոոպերատիվներից մի քանիսը վորոշ շրջանում զգալի չափով խոշորացել են, ապա մասնացել: Այդպես, նույն կաթնարտեղներում անդամների միջին թիվը առ 1-ն հոկտեմբերի 26 թ. հասել է 80-ի, առ 1-ն հոկտեմբերի 27 թ. իջնում է 75-ի, առ 1-ն հունվարի 28 թ. նորից բարձրանում է 77-ի, իսկ առ 1-ն հուլիսի 28 թ. 87-ի: Կամ թե ծխախոտագործական ընկերությունները, վոր յերկու տարի անընդհատ խոշորանում են չորսից ավելի անգամ (105 ընդդեմ 25-ի), իսկ հետո կրկին մանրանում, առ 1-ն հունվարի 28 թ. ունենալով միջին թվով 51 անդամ: Այդ հանգամանքը բացատրվում է մասամբ նրանով, վոր վերջին տարիներում կազմակերպվել են մանր կոոպերատիվներ և մասամբ ել նրանով, վոր կոոպերատիվներից հեռացել են վորոշ քանակություններ, խորթ տարեր, վորոնց մուտքը կոոպերատիվ բնագավառը պետք է համարել բացասական յերևույթ և հետագայում կազմակերպչական աշխատանքները պետք է տանել այնպես, վոր նման յերևույթ այլևս չկրկնվի:

**Կոոպերացման կոնֆիցենց**

Կոոպերատիվներին, նրանց անդամներին բացարձակ ու միջին քանակի բարձրացումը մեզ ասում են՝ թե ինչպես է զարգացել Գյուղկոոպերացիայի սիստեմը, ինչ թափ և ուղղությունն է ունեցել այդ զարգացումը. ընդամենն աչքի յերևնում այն հանգամանքը, վոր Գյուղկոոպերացիան ընդհանուր առմամբ զարգացել է մասնագիտական ուղղությունը և բավարար ուշադրություն չի նվիրվել գյուղատնտեսական արտադրություն համայնացման գործին, այսինքն գյուղական տնտեսությունների կոլեկտիվացման աշխատանքին (կոլեկտիվացման մասին մանրամասն կխոսենք առանձին):

Այժմ անցնենք այն հարցին, թե գյուղկոոպերացիան վորքան է խորացել գյուղական ազգայնականության մեջ, վոր աստիճան է կոոպերացումը և ինչպես է բարձրացել այդ կոոպերացումը հաշվետու շրջանում: Այդ հարցը պարզելու համար կոոպերացված տնտեսությունների քանակը պետք է համեմատել գյուղական բոլոր տնտեսությունների քանակի հետ: Այստեղ պետք է նշել, վոր կոոպերացած տնտեսությունների ճիշտ թիվը վորոշել դժվար է, առանց հատուկ հետազոտություն կատարելու այդ նպատակով: Դժվարություն պատճառներն են՝ 1. հստակ միևնույն տնտեսությունը անդամագրվել և յերկու և ավելի կոոպերատիվներում. մեծ մասամբ միաժամանակ անդամագրություն լինում են վարկային և մասնագիտական ընկերություններում, 2. միևնույն տնտեսության անդամներից յերկուսը կամ յերեքը անդամ են մի քանի տարբեր կոոպերատիվների, 3. կան դեպքեր, յերբ կոոպերատիվների անդամներ են գրվել բացի անհատ տնտեսություններից նախվ կազմակերպությունների և հիմնարկների, որինակ փոխողովմները, դպրոցները, կամ թե մեկ գյուղատնտեսական կոոպերատիվ անդամ է մյուս գյուղատնտեսական կոոպերատիվի կայն: Այս բոլորը թեև դժվարեցնում է կոոպերացված տնտեսությունների ճիշտ քանակը պարզելը, այնուամենայնիվ դա հնարավոր է պարզել վորոշ ուղղումներ մտցնելով հաշվարկման մեջ, վորը ընդունված է բոլոր հանրապետությունների վիճակագրական աշխատանքներում:

Հետևյալ աղյուսակը տալիս է կոոպերացման զինամիկան, կամ ինչպես ասում են՝ կոոպերացման կոնֆիցենտի տոկոսի պատկերը:

№ № ըստ կարգ	Թվականներ	Գյուղաց. տնտեսութ. ընդհ. թիվը	Կոոպերաց. տնտեսութ. յուն. թիվը	Կոոպերաց. 0/0-ը (պայ- մանական)
1.	Առ մեկն հոկտ. 24 թ.	149,720	8,919	5,9
2.	Առ մեկն հոկտ. 25 թ.	151,163	19,153	12,7
3.	Առ մեկն հոկտ. 26 թ.	152,606	30,075	19,7
4.	Առ մեկն հոկտ. 27 թ.	158,900	46,331	29,2
5.	Առ մեկն հունվ. 28 թ.	159,100	49,624	31,2
6.	Առ մեկն հուլիս 28 թ.	161,000	61,648	38,5

Նշանակում է՝ նախ կոոպերացման տոկոսը աստիճանաբար և անշեղ բարձրանում է և այդ բարձրացումը կատարվում է ավելի ուժեղ թափով, քան գյուղական տնտեսությունների քանակի աճումը. յերկրորդ՝ 3 <sup>3</sup>/<sub>4</sub> տարվա ընթացքում կոոպերացման տոկոսը ավելացել 6<sup>3</sup>/<sub>2</sub> անգամ. յերրորդ՝ սույն թվի հուլիսի 1-ին գյուղացիական տնտեսությունների 38,5<sup>0</sup>/<sub>10</sub> արդեն զբաղվել է կոոպերացիան (մտցնելով վերոհիշյալ ուղղումը անդամների կրկնությունը չհզոքացնելու իմաստով, այդ թիվը կարող է մեր կարծիքով պակասել վորոշ 0/0-ով):

**Կոոպերացման տոկոսը յեվ ըստ գյուղատնտեսության առանձին ճյուղերի**

Վերոհիշյալ ընդհանուր կոոպերացման տոկոսը չի ցուցադրում, թե ինչ աստիճանի յե խորացել կոոպերացումը գյուղատնտեսության տարբեր ճյուղերում զբաղվող գյուղացիություն մեջ: Այս կարելի յե պարզել՝ համեմատելով կոոպերացված տնտեսությունները և գյուղատնտեսություն միևնույն վորոշ ճյուղով զբաղվող յերկրի բոլոր տնտեսությունները: Հայտնի յե վոր Հայաստանում գրեթե չկան այնպիսի տնտեսություններ, վորոնք զբաղվեն միայն գյուղատնտեսության հատուկ տեսակով, որինակ՝ միայն և միայն բամբակագործություն կամ մեղվաբուծություն և այլն: Տնտեսությունների գերազանցություն խոշոր մասը միևնույն ժամանակ զբաղվում է գյուղատնտեսության տարբեր տեսակներով: Այդ դեպքում նպատակահարմար է համեմատել իրար գերազանցություն գյուղատնտեսության մի վորեք տեսակով զբաղվող կոոպերացված և ընդհանուր տնտեսությունները:

Այդ տեսակետից համեմատելով ընդհանուր և կոոպերացված տնտեսությունները 1927 թ. նկատմամբ ստանում ենք հետևյալ պատկերը.

(Գինամիկան տալ հնարավորություն չկա, վորովհետև ընդհանուր տնտեսությունների վերաբերյալ մի շարք տարիների ստույգ տեղեկություններ չունենք) (տես էջ 20):

Գերազանցապես մեղվաբուծություն, ծխախոտագործություն և շերամապահություն զբաղվող գյուղացիությունն ընդգրկված է հարյուր տոկոսով, այդ ասպարեզում հետագայում անհրաժեշտ է ներդրավել և այն գյուղացիություն, վորը մասամբ է զբաղվում սվյալ կուլտուրայով:

Բամբակագործության և այգեգործության ասպարեզում նույնպես հարկավոր է ուժեղացնել աշխատանքը, ներդրավելով առաջին հերթին այն գյուղացիություն, վորը գերազանցություն զբաղվում է այդ կուլտուրայով:



2)

№ № ըստ կարգի	Գյուղատնտեսություն տեսակները	Տնտեսությունների թիվը 27 թ. (Կ.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ.)	Կոոպերացված տնտեսությունների թիվը	Կոոպերացման % -ը
1.	Անասնապահություն	16,165	6,260	38,7
2.	Այգեգործություն	7,199	4,310	60,0
3.	Բամբակագործություն	9,734	6,574	67,0
4.	Ծխախոտագործություն	561	561	100,0
5.	Մեղվաբուծություն	1,359	1,357	100,0
6.	Շերամապահություն	627	627	100,0

**Կոոպերացումն ըստ գավառների**

Գյուղատնտեսական կոոպերատիվների քանակը, դրանց անդամների թիվը և գյուղացիական տնտեսությունների կոոպերացման տոկոսը՝ գավառներով՝ պատկերացնում և հետևյալ աղյուսակը.

№ № ըստ կարգի	ԳԱՎԱՌՆԵՐ	Առ 1 ն հունվ. 26 թ.			Առ 1-ն հունվ. 28 թ.			Առ 1-ն հունվ. 28 թ.		
		Կոոպերացվածների թիվը	Անդամների թիվը	Կոոպերացման % -ը	Կոոպերացվածների թիվը	Անդամների թիվը	Կոոպերացման % -ը	Կոոպերացվածների թիվը	Անդամների թիվը	Կոոպերացման % -ը
1	Յերևանի	22	4434	16,8	41	11217	42,3	49	13927	52,7
2	Լենինականի	13	2617	10,1	29	5931	23,1	42	6923	26,6
3	Եջմիածնի	21	3427	13,5	41	10916	42,8	40	13107	51,4
4	Փամբակ-Լոռու	56	5287	24,0	56	8174	35,5	62	10103	40,0
5	Նոր Բայազետի	10	1506	8,3	20	3491	19,1	20	4465	26,1
6	Դիլիջանի	18	2323	17,0	15	4867	30,4	23	6442	40,0
7	Զանգեզուրի	9	878	6,4	12	2661	17,2	14	3229	20,4
8	Դարալագյազի	4	408	6,8	5	964	14,8	12	1417	21,2
9	Մեղրիի	3	468	29,2	3	1403	63,8	3	2035	90,0
Ընդամենը		156	21348	14,0	222	49624	31,2	265	61648	38,5

Ամենից առաջ աչքի յն ընկնում այն բազմազանությունը, վոր ունի կոոպերատիվների քանակը, նրանց անդամների թիվը և կոոպերացման տոկոսը գանազան գավառներում: Այս աղյուսակը հնարավորություն է տալիս պատկերացնելու կոոպերատիվ ստորին ցանցի կառուցվածքի փոփոխման ամբողջ ընթացքը յերկու և կես տարվա ընթացքում և հետևյալ յեղբակացությունները հանել. — 1. յերկու և կես տարվա ընթացքում Գյուղկոոպերացիայի ցանցը լայնացել և մոտ 70 տոկոսով (ավելացել և 109 միավորով), անդամների թիվը բարձրացել և ավելի արագ՝ մոտ 3 անգամ (188,7%), իսկ կոոպերացման տոկոսն ուժեղացել և 24 50%-ով: 2. Առանձին գավառներին, ըստ կոոպերացման տոկոսի առաջին տեղը բռնում և Մեղրին (90,0%), վորը դեռ 26 թ. հոկտեմբերի 1-ին ուներ կոոպերացման ամենաբարձր տոկոսը (29,2%), ապա Եջմիածնի, Յերևանի գավառները, միջին տեղն են բռնում Փամբակ Լոռու և Դիլիջանի գավառները, իսկ հետին տեղը են բռնել ընթացիկ տարվա կիսին և այդպես էլ մնում են Ն. Բայազետի, Զանգեզուրի և Դարալագյազի գավառները: Զգալիորեն հետ և

մնում Լենինականի գավառը (կոոպերացման 26,6%): Փամբակ Լոռու գավառը, վոր առ 1-ն հոկտեմբերի 26 թ. բռնել էր 2-րդ տեղը, իսկ առ 1-ն հոկտեմբերի բռնում և 4-րդ տեղը:

3) Ըստ կոոպերացման շարժման կամ աճման՝ կրկին առաջին տեղը բռնում և Մեղրին, ապա Եջմիածնի և Յերևանի գավառները. այստեղ Դիլիջանի գավառը հավասարվում և Փամբակ-Լոռու գավառին, մյուս գավառները նորից մնում են հետին տեղում:

Կոոպերացման թափի այս բազմազանությունն ավելի մեծ տարբերություններով նկատվում է նաև գավառակներում ու Գյուղկոոպերացիայի տարբեր տեսակներում:

Այս ամենը գալիս են ասելու, վոր կոոպերացման շարժման վրա գանազան գավառներում գանազան կերպով են ազդում մի շարք տարբեր բնութի ֆակտորներ, այն է՝ բնական և տնտեսական պայմանները, ազգաբնակչության կուլտուրական բարձրությունը (Մեղրի), գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնացման աստիճանը (Յերևանի և Եջմիածնի գավառներ), գյուղատնտեսության վորոշ ճյուղերի դիֆերենցիացիան (Փամբակ-Լոռու), կոոպերացման յենթակա այս կամ այն որբեկտի ներկայությունը, գյուղական ազգաբնակչության սոցիալական դեմքը և այլ:

**Գյուղացիության Գյուղկոոպերացիայի աճման վերաբերյալ այստեղ վերաբերմունքը բերված բոլոր թվերը միաժամանակ լուսարանում են**

գյուղացիության վերաբերմունքը դեպի Գյուղկոոպերացիան: Թեև մեր գյուղական ազգաբնակչությունը կուլտուրապես հետ է մնացել, թեև նրա մեջ արմատացել և մասնավոր սեփականություն և միանձնյա տնտեսավարություն գաղափարը, այնուամենայնիվ նա հասկացել է կոոպերացիայի նշանակությունը և իր տնտեսության արտադրանքը միանական կոոպերատիվ ձևով վաճառահանելու ոգտավետությունը: Ծիշտե, կոոպերատիվի վորևե, թեկուզ փոքրիկ անհաջող աշխատանքն իսկույն հիասթափեցնում է մեր գյուղացիության, բայց կոոպերացիան արդեն իր հիմքին և դրել գյուղում, և հետագա կանոնավոր կոոպերատիվ աշխատանքն ըստ ամենայնի կապահովի ազգաբնակչության կոոպերացման գործը գյուղում: Այստեղ անհրաժեշտ է նշել, վոր գյուղացիության ցանկությունն անդամագրվել կոոպերատիվին կամ կազմակերպել նոր կոոպերատիվ՝ հաճախ չի բավարարվել Հայգյուղկոոպի կազմհրահանգչական բաժնի կողմից այս կամ այն պատճառով: Ուշադրություն են առնում կոոպերատիվների այս կամ այն ցանցերի սոցիալական կազմը, ապագա կոոպերատիվի գործնեյությունը շրջանը, նրա տնտեսական նշանակությունը և մի շարք այլ պայմաններ: Ի հարկե ազգաբնակչության վոչ բոլոր խավերը բարյացակամ են դեպի կոոպերացիան, գյուղական կուլակությունը ակներև կամ քողարկված պայքար է մղում կոոպերատիվի դեմ, վոչ մի ջանք չի խնայում վարկաբեկել կոոպերացիան գյուղի աշխատավոր մասսայի աչքում: Սակայն այդ պայքարը հաջողություն չունի, վորովհետև կոոպերատիվ աշխատանքը (գյուղատնտեսական ապրանքների իրացումը, գյուղատնտեսական գործիքների, մեքենաների մատակարարումը և այլն) ձառայում և ակնհայտ կերպով չքավորին ու միջակին, վորոնք հենց այդ պատճառով քիչ են ընկնում կուլակի ազդեցության տակ:



**Կոոպերացված ագ- Բացի ընդհանուր բարյացակամ վերաբերմուն-**  
**գաբնակութայան ալ-** **քից դեպի կոոպերացիան, վերջին տարիներս կո-**  
**թիվությունը.** — **ոպերացված գյուղացիությունը հայտնաբերում է**  
 ահաբիվ աշխատանք: Այդ բանին ապացույց է ծառայում այն, վոր վեր-  
 ջին տարիներս ընդհանուր ժողովներին հաճախողների տոկոսը խիստ բարձ-  
 րացել է, հատկապես այն ժողովներին, ուր վարչական մարմինների ընտ-  
 րություն է կատարվում: Ժողովներում բուսն յեկույթներ են տեղի ունե-  
 նում հիմնական հարցերի, մանավանդ վարչություն ու վերստուգիչ հանձ-  
 նաժողովի գեկուցումների ու հաշվետվությունների առթիվ: Բացի դրա-  
 նից, բարձրացել է նրանց տնտեսությունների արտադրանքի կոոպերատի-  
 վի միջոցով վաճառահանման տոկոսը և այլն, մի խոսքով, նկատելի յե,  
 թե ինչպես կոոպերատիվի սոսկական անդամը կենդանի հետաքրքրություն  
 է ցույց տալիս դեպի կոոպերատիվ աշխատանքը:

**Կոոպերատիվի ան-** **Մեզ համար կարեւորագույն նշանակություն**  
**գամների կազմը.** ունի և իր վրա յե բեվեռում մեր ուշադրություն-  
 նը կոոպերատիվի անդամների սոցիալական կազմի հարցը: Անհրաժեշտ է  
 ժամանակին պարզել, կարգավորել այդ և ցանկալի լուծում տալ:

ձիշտ է, անդամների ընդունելություն ժամանակ կոոպերատիվի վար-  
 չություններն, այսպես թե այնպես հետաքրքրվում են, թե ում են ներդրա-  
 վում կոոպերատիվի մեջ, բայց հաճախ ճշտությունը չեն կիրառվում մեր  
 կուսակցական քաղաքականությունից բխող հրահանգները կոոպերացման  
 վերաբերյալ:

Գյուղկոոպերացիայում ընդգրկված մասսայի դեմքը լիովին պարզելու  
 նպատակով Հա. գյուղկոոպը 26 թվի վերջին (հոկտեմբերից - դեկտեմբեր)  
 կազմակերպել է հատուկ հետազոտություն: Սակայն պետք է ստել, վոր  
 հետազոտություն ծրագրերը շատ նեղ է կազմվել, ստացած նյութը հնա-  
 րավորություն չի տալիս կոոպերացած գյուղացիության սոցիալական  
 դեմքն ըստ ամենայնի պարզ ցուցադրելու: Այնուամենայնիվ, չնայած այս  
 և այլ թերություններին, այդ հետազոտությունը վորոշ արժեքավոր արդ-  
 յունք է տալիս:

Գյուղկոոպերացիայի ստորին ցանցի ընդգրկած 32667 անդամներից  
 (առ 1-ն հունվարի 1927 թ.) հետազոտվել է 24514 անհատ գյուղացիական  
 տնտեսություն, վորը կազմում է անդամների ընդհանուր թվի 75% -ը:

Գյուղկոոպերացիայի առանձին տեսակների հետազոտությունն ընդ-  
 գրկել է վարկային կոոպերացիայում անդամների 80,0% -ը, այգեգործա-  
 կան ընկերություններում՝ 100,0%, կաթնարտելում՝ 81,6%, բարակա-  
 գործական ընկերություններում՝ 83,2%, մեքենաագործական՝ 64,8%, շե-  
 րամապահական՝ 100,0%, ծխախոտագործական՝ 55,5% և մեղվաբուծական՝  
 16,5%: Ինչպես տեսնում ենք հետազոտությունը կոոպերատիվների ուժեղ  
 տեսակներն ավելի մեծ տոկոսով է ընդգրկել, քան միջին տոկոսն է: Դա  
 հիմք է տալիս հետազոտություն արդյունքները համարել ըստ ամենայնի  
 բեպրեզենտատիվ (ներկայացուցիչ) և հետևումները տարածել գյուղացիական  
 տնտեսությունների ամբողջ կոոպերացած մասի վրա:

**Սեզոնների սոցիա-** **Նախ քան սոցիալական կազմի մասին խոսելը,**  
**լական կազմը.** տանք հետազոտված տնտեսությունների և Հա-  
 յաստանի գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի քանակա-  
 կան համեմատությունը՝ մի քանի հատկանիշներով:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	Գյուղկոոպե- րացիայում (հետազոտ- ված).	% 0%-ային հարաբերու- թյունը.
Գյուղացիական տնտեսու- թյունների թիվը . . . . .	452606	24514	16,6
Բացարձ. թվ.	23836	2940	12,3
Ցանք չունեցող տնտես. թիվը % 0/0	15,6	12,0	
Բացարձ. թվ.	78305	9800	12,5
Բանող անասուն չունեցող տնտեսությունների թիվը % 0/0	51,3	40,0	
Բացարձ. թվ.	84902	12625	14,8
Ինվենտար չունեցող տնտե- սությունների թիվը % 0/0	55,4	51,5	—

Ստացվում է բավական պարզ պատկեր, վոր առանց ցանքի, առանց բա-  
 նող անասունի և առանց ինվենտարի տնտեսությունները տալիս են կոոպե-  
 րացման ավելի պակաս տոկոսը, քան կոոպերացման ընդհանուր տոկոսն է  
 (12,3% 12,5% 14,8% հանդեպ 16,6%-ի): Վորպես հետևանք դրան, այդ  
 կարգի տնտեսությունները կոոպերացված մասսայում ավելի քիչ տոկոս են  
 կազմում, քան ընդհանուր գյուղացիական տնտեսությունների մեջ: Այսպի-  
 սով չքափորական հատկանիշներ ունեցող տնտեսությունների տեսակարար  
 կշիռը կոոպերացիայում ավելի ցարձ է, քան ընդհանուր գյուղացիական  
 տնտեսությունների մեջ:

Նույն պատկերն է ստացվում, յերբ համեմատությունը կատարում  
 ենք ունեվոր տնտեսությունների նկատմամբ՝ ստորև բերված աղյուսա-  
 կում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Հայաստա- նում	Գյուղկոոպե- րացիայում	% 0/0
Տնտեսությունների ընդհա- նուր թիվը . . . . .	152606	24514	16,6
Բացարձ. թվ.	10386	589	5,7
5 դես. ավելի ցանք ունեցող % 0/0	6,8	2,4	—
Բացարձ. թվ.	17731	2579	14,5
4 գլխ. ավելի բանաստու- նեցող % 0/0	11,6	10,5	—

Այս յերկու աղյուսակը ակներև ապացուցում են, վոր Գյուղկոոպե-  
 րացիան գյուղացիություն յերեք խավերից ավելի պակաս չափով է ներգրա-  
 վում չքափոր տնտեսություններին, քան կազմում է նրանց տեսակարար  
 կշիռը վորջ գյուղացիություն մեջ:



Հայգյուղկոտայի հետազոտութեան նյութը մշակվել է ըստ բնական հատկանիշների (ցանքի, այգու և բանոց անասունների կամբինացիայով), վորը տալիս է կոտայերացված անտեսութեանները անտեսական կարողութեան պատկերը: Այն չափ, վորչափ անտեսական կարողութեանը հատկանիշ է սոցիալական դրութեան, ստացված խմբերը ներկայանում են վորպես սոցիալական խմբեր: Հատուկ հանձնաժողովի վորոշմամբ անտեսութեանները խմբավորված են ըստ յերեք գյուղատնտեսական ուսյոնների, ամեն մեկ ուսյոնում բաժանվելով յերեք խմբի՝ թույլ, չքավոր, միջակ և ուժեղ, ըստ վորում չբարոր անտեսութեաններն անցել են միջակների շարքը: Հետևյալ աղյուսակը տալիս է այդ խմբերի պատկերն ըստ կոտայերացիայի տեղերի՝ բացարձակ և տոկոսային հարաբերութեամբ:

№ ըստ կարգի	ԳՅՈՒՂԿՈՊՈՒԹՅԱՅԻ ԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Հետազոտված անտեսութ.	Գ Ր Ա Ն Ց Ի Ց		
			Թիվը	Թույլ	Միջակ
1.	Բացարձ. թվ.	15776	5626	9483	607
	Գյուղվարկ. ընկեր. % 0/0	100,0	35,8	60,3	3,9
2.	Բացարձ. թվ.	172	109	56	9
	Խառը գյուղատնտ. ընկեր. % 0/0	100,0	63,4	32,5	4,1
3.	Բացարձ. թվ.	4563	573	3455	535
	Կաթնարտիկներ % 0/0	100,0	12,6	75,7	11,7
4.	Բացարձ. թվ.	1976	19	1916	41
	Այգեգործակ. ընկեր. % 0/0	100,0	1,0	97,0	2
5.	Բացարձ. թվ.	962	267	662	33
	Բամբակագործ. ընկ.	100,0	27,8	68,8	3,4
6.	Բացարձ. թվ.	217	114	103	—
	Ծխախոտագործ. ընկեր. % 0/0	100,0	52,5	47,5	—
7.	Բացարձ. թվ.	243	81	137	25
	Մեղվաբուծակ. ընկ. % 0/0	100,0	33,3	56,4	10,3
8.	Բացարձ. թվ.	241	120	120	1
	Շերամապահական ընկեր. % 0/0	100,0	49,8	49,8	0,4
9.	Բացարձ. թվ.	424	150	262	12
	Մեքենատրակտոր. % 0/0	100,0	35,4	62,8	2,8
	Բացարձ. թվ.	24514	7059	16194	1261
	Ը ն դ ա մ ե ն ը % 0/0	100,0	28,8	66,1	5,1

Այս աղյուսակից կարելի է յի հանել մի շարք կարևոր հետևումներ, վոր ընորոշում են Գյուղկոտայերացիայի աշխատանքն ազգաբնակչության դանազան խավերում:—

1. Կոտայերացված անտեսութեանների հիմնական մասսան կազմում են միջակ անտեսութեանները (66,1%), ապա գալիս են թույլերը (28,8%), վերջին տեղը բռնում են ուժեղները (5,1%): Նկատի ունենալով թույլ անտեսութեանների քանակն ազգաբնակչության ընդհանուր թվի մեջ և բարձր մարմինների դիրեկտիվը՝ թույլ խավերին ամբողջապես կոտայերացիայում ընդգրկելու մասին կարող ենք ասել, վոր Գյուղկոտայերացիայի աշխատանքն այդ տեսակետից անցյալում յեղել է թույլ:

2. Ուժեղ անտեսութեանների տեսակարար կշիռը Գյուղկոտայերացիայում ընդհանուր առմամբ մեծ է (5,1%), բայց դրանք գրավել են համեմատաբար ավելի մեծ տեղ, կաթնարտիկներում (11,7%) և մեղվաբուծական ընկերութեաններում (10,3%):

Ով Հայաստանի եկանոմիկան գիտե, նրա համար պարզ է, թե ինչու Գյուղկոտայերատիվներից այդ յերկուսն ուժեղ անտեսութեաններից ավելի մեծ տոկոս են ներգրավել: Գյուղատնտեսութեան այդ յերկու ճյուղերը դարգացել են ամենից ուժեղ Փամբակ-Լոռու և մասամբ Դիլիջանի գավառում, ունեն մեծ ապրանքայնութեան ու կազմում են մեծ մասամբ միջակ և ուժեղ անտեսութեանների զբաղմունքը:

3. Թույլ անտեսութեանները մեծ տոկոս են կազմում գյուղատնտեսական խառը ընկերութեաններում (63,4%), ծխախոտագործական (52,5%) և շերամապահական (49,8%) ընկերութեաններում: վերջիններում համարյա չկան ուժեղ անտեսութեաններ: Այդ բացատրվում է նրանով, վոր գյուղատնտեսութեան այդ ճյուղերով մեզանում դեռ քիչ չափով են զբաղվում, մանավանդ ծխախոտագործութեամբ, վորով մեծ մասամբ սակավավոր գյուղացիութեանն է զբաղվում:

4. Տիպիկ միջակային կոտայերատիվ են ներկայանում այգեգործական ընկերութեանները, վորտեղ ըստ այդ տվյալների միջակութեանը գրավում է 97%, մյուս խավերը համարյա դեր չունեն այդտեղ: Դա բացատրվում է նրանով, վոր գյուղատնտեսութեան այդ ճյուղի արտադրանքը ամբողջապես յինթակա յե ապրանքայնացման: Ուժեղները կարողանում են սեփական միջոցներով մշակել այգիները և արտադրանքը ինքնուրույն շուկա հանել, թույլերը այգի չունեն, միջակներն են մնում, վոր մտնում են կոտայերացիայի մեջ:

**ՑճԵՏՈՒՔՅՈՒՆՆԵՐԻ** Այժմ անցնենք հետազոտված անտեսութեաններում ևս յի խմբավորմանը, ըստ գյուղատնտեսական ուսյոն-ճճԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ:

**ԳՆԵՐԻ** Հայաստանը հաճախ բաժանում են բազմաթիվ աշխարհագրական գոնաների, անտեսական ու գյուղատնտեսական շրջանների: Հայաստանի շրջանացման վերաբերյալ աշխատանքները դեռ չեն ավարտված: Մենք Հայաստանը բաժանել ենք յերեք հիմնական գյուղատնտեսական շրջանի հիմք ունենալով պրոֆ. Զիլինցի բաժանումը, միայն նրա յերկու շրջանը՝ աշնանացան և գարնանացան հացահատիկների շրջանները մենք միացրել ենք, և անվանել հացահատիկների շրջան, ինչպես անում է և Հայկենտովիճվարը:







Աղյուսակից յերևում է, վոր կոոպերատիվի իրական սեռի անդամների տնտեսությունները կազմում են 3, 1<sup>0</sup>/<sub>0</sub>, ընդ վորում այդ տոկոսը տատանվում է առանձին դավառներում 0,4—6,5<sup>0</sup>/<sub>0</sub>: Ամենամեծ տոկոսը տալիս է Մեղրիի գավառը, իսկ ամենացածր Գարալագյազ: Պետք է յենթադրել, վոր բացի ուրիշ պատճառներից, այդ խնդրում գեր է խաղում ավյալ գավառի ժողովրդի կուլտուրական մակարդակը: կուլտուրայիս հետ է ընկած մեր գավառները տալիս են կանացի տնտեսությունների կոոպերացիան ամենացածր տոկոսը (Գարալագյազ 0,4<sup>0</sup>/<sub>0</sub>, Նոր-Բայազետ 0 8<sup>0</sup>/<sub>0</sub>, Չանգեզուր 1,1<sup>0</sup>/<sub>0</sub>):

Այժմ տեսնենք թե կոոպերացիայի վոր տեսակն է համապատասխանում կանացի աշխատանքի կիրառման.

№ կոոպերատիվի	ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Հեռագրոված սեռեսուրյունների բաճակը		
		Արական	Իգական	Ընդամ.
1.	Բացարձ. թվ.	15396	320	15716
	Գյուղվարկային ընկ.	98,0	2,0	100,0
2.	Բացարձ. թվ.	169	3	172
	Պատն ընկերութ.	98,3	1,7	100,0
3.	Բացարձ. թվ.	7437	126	4563
	Կաթնարտելներ	97,2	2,8	100,0
4.	Բացարձ. թվ.	1691	285	1976
	Այգեգործական ընկերութ.	85,6	14,4	100,0
5.	Բացարձ. թվ.	959	3	962
	Բամբակագոր. ընկ.	99,7	0,3	100,0
6.	Բացարձ. թվ.	14	3	217
	Ծխախոտագ. ընկ.	98,6	1,4	100,0
7.	Բացարձ. թվ.	239	4	213
	Մեղվարուծ. ընկ.	98,4	1,6	100,0
8.	Բացարձ. թվ.	227	14	241
	Շերամապահ. ընկ.	94,2	5,8	100,0
9.	Բացարձ. թվ.	423	1	224
	Մեքենադատ. ընկ.	99,6	0,2	100,0
Ը ն դ ա մ ե ն ը		23755	759	24514
%		96,9	3,1	100,0

Աղյուսակը պարզ ցույց է տալիս, վոր կանանց մասնակցությունը Գյուղկոոպերացիայում ամենից շատ է արտահայտվում զինեղգործական (14,4<sup>0</sup>/<sub>0</sub>) ու շերամապահական (5,8<sup>0</sup>/<sub>0</sub>) և ամենից քիչ մեքենադատագործական (0,2<sup>0</sup>/<sub>0</sub>), բամբակագործական (0,3<sup>0</sup>/<sub>0</sub>) և մեղվարուծական (1,6<sup>0</sup>/<sub>0</sub>) ընկերություններում: Այստեղից կարելի չէ անել հետևյալ կոնկրետ հետևումները.— ա) անհրաժեշտ է ուժեղացնել կանանց կոոպերացումն այն կոոպերատիվներում, վորոնք այդ տեսակետից հետ են մնում: Ուղղություն ընդունել տարածելու կոոպերացիայի այն տեսակները, վորոնք տալով ավելի ամեն

տնտեսական եֆֆեկտները, միաժամանակ հնարավորություն են տալիս կանանց մասնակից դարձնելու կոոպերատիվ աշխատանքներում, որինակ կաթնարտելներում, շերամապահական և թռչնաբուծական ընկերություններում: Կանանց մասնակցությունը Գյուղկոոպերացիայում ուժեղացնելու նպատակով պետք է խրախուսել, վորպեսզի միևնույն տնտեսությունը անգամազրկի մի քանի կոոպերատիվում, այն պայմանով, վոր կանայք մասնակցեն մասնագիտական կոոպերատիվներում, իսկ տղամարդիկ վարկային կոոպերատիվներում:

**Ֆեդալցիների ազգային կազմը** ման ասպարիդում Հայաստանի կոոպերացիան ձեռք է բերել համեմատաբար զգալի հաջողություններ: Խոշոր նվաճում պիտի համարել այն, վոր Հայաստանում ասլորդ բոլոր ազգություններն այս կամ այն քանակով մտնում են կոոպերացիայի մեջ և մասնակցում են նրա աշխատանքներին: Բավական է ասել, վոր ազգային փոքրամասնության կըշիտն ընդհանուր ազգաբնակչության մեջ կազմում է 15,5<sup>0</sup>/<sub>0</sub>, մինչդեռ կոոպերացիայում նրանք կազմում են 19,6<sup>0</sup>/<sub>0</sub> (4798 անդամ՝ 24514-ից):

Փոքր ազգությունները Գյուղկոոպերատիվներում ըստ գավառների ունին հետևյալ դասավորումը.

№ կոոպերատիվի	ԳԱՎԱՌՆԵՐ	Ա. զ. գ. ո. ս. թ. յ. ո. զ. զ. զ. զ.					
		Հայ	Թուրք	Ռուս	Ասորի	Յեզիդ	Այլ
1.	Յերևանի	4046	1164	34	120	—	8
2.	Լենինականի	2174	1	3	—	97	3
3.	Եջմիածնի	4865	247	2	23	—	22
4.	Փամբակ-Լոռու	2890	652	1549	—	2	1
5.	Նոր-բայազետի	1378	38	144	—	—	1
6.	Գյուլիշանի	2244	168	106	—	—	2
7.	Չանգեզուրի	1041	65	33	—	—	—
8.	Գարալագյազի	400	124	—	—	—	—
9.	մեղրիի	679	188	—	—	—	—
Բացարձ. թվ.		19717	2647	1871	143	99	37
%		80,4	10,8	7,6	0,6	0,4	0,2

Ինչպես պետք է սպասել՝ հայերից հետո կոոպերացիայում առաջին տեղը բռնում են թուրքերը (10,8<sup>0</sup>/<sub>0</sub>), յերկրորդ տեղը ռուսները (7,6<sup>0</sup>/<sub>0</sub>), ապա գալիս են ասորիները (0,6<sup>0</sup>/<sub>0</sub>), յեզիդիները (0,4<sup>0</sup>/<sub>0</sub>) և մյուսները (0,2<sup>0</sup>/<sub>0</sub>): Այս վերջիններիս մեջ մտնում են լեհերը (Եջմիածնի գավառում), հույները (Փամբակ Լոռիի) և մի քանի անհայտ ազգություններ (հետազոտություն ժամանակ ազգությունը ցույց չի տրված): Իհարկե ըստ առանձին գավառների ազգային հարաբերությունը չի պահպանված:

Այդ առանձնապես աչքի չէ ընկնում թուրքերի նկատմամբ (որինակ ն. Բայազետի գավառում, վորտեղ կոոպերատիվի անդամ են 38 տնտեսություն կամ կոոպերացված տնտեսությունների 2,4<sup>0</sup>/<sub>0</sub> ը, մինչդեռ թուրքերը այդ գավառում կազմում են ազգաբնակչության 14,2<sup>0</sup>/<sub>0</sub> ը): Ապագայում անպայման կոոպերատիվների կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առանձին ազգությունների տեսակարար կշռի վրա և վերացնել նշված թերությունները:

Այն հարցին, թե կոոպերացիայի վոր տեսակներն ինչ ազգություններ և ինչ քանակով են ընդգրկել — պատասխանում է հետևյալ աղյուսակը:



№ համար	ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Ա Ղ Վ Ո Ւ Թ յ Ո Ւ Ն Ն Ե Ր					
		Հայ	Թուրք	Ռուս	Ասորի	Յեզդի	Այլ
1	Գյուղավարկային ընկեր	13159	1971	365	92	97	32
2	Սառն »	172	—	—	—	—	—
3	Կաթնարտելներ	2638	451	1471	—	2	1
4	Այգեգործական ընկերություն	1924	24	—	28	—	—
5	Բամբակագործ. »	883	53	—	23	—	3
6	Ծխախոտագործ. »	174	73	—	—	—	—
7	Մեղվարուծակ. »	238	3	2	—	—	—
8	Շերամապահակ. »	170	71	—	—	—	—
9	Մեքենաողտագ. »	389	1	33	—	—	1
Բացարձ. թ.		19717	2647	1871	143	99	37
Հիմանը %/0		80,4	10,8	7,6	0,6	0,4	0,2

Այստեղ տեսնում ենք, վոր թուրքերը կոոպերացման են յենթարկվել մեծ մասամբ վարկային կոոպերատիվներում (74,4%) և կաթնարտելներում (17,0%), ռուսները՝ կաթնարտելներում (78,8%) և վարկային ընկերություններում (19,5%), ասորիները՝ վարկային (64,3%) և այգեգործական ընկերություններում (19,5%), իսկ յեզդիները գրեթե բացառապես վարկային ընկերություններում: Պարզ յերևում է, վոր մանր ազգաբնակչությունները մասնակցում են Գյուղկոոպերացիայի այն տեսակին, վորը ընդգրկում է նրանց զլխավոր զբաղմունքը, իսկ վարկային կոոպերացիան ներգրավել է բոլոր ազգություններին բավարար չափով:

**Գյուղացիության մեջ կոոպերատիվի կենսունակությունը** խոշոր չափով կապված է նրա սեփական միջոցների գումարից: Սեփական միջոցների զլխավոր աղբյուրն է կազմում վաճառված գրամագուլները: Կոոպերացիան պետք է ձգտի իր շրջանառություն մեջ գրավել գյուղացիությունից ազատ միջոցները նաև իբրև ավանդ:

Այդ հնարավոր է անել նախ՝ ձեռք բերելով գյուղացիությունից վստահությունը, յերկրորդ՝ նրա նյութական պայմանները բարելավելու միջոցով, այլապես կոոպերատիվը չի կարող զգալի չափով ուժեղացնել իր գործառնությունը և իր ապրանքաշրջանառությունը:

Այդ տեսակետից տեսնենք, թե ինչ արդյունք են տվել Գյուղկոոպերացիայի աշխատանքները:

**Սեղանների փայերի մուծումները** Գյուղկոոպերացիայի կանոնադրությամբ սահմանված փայերը չեն գանձված հարկավոր քանակությամբ և ժամանակին՝ մի շարք կազմակերպչական և այլ թերությունների պատճառով, վորոնք են՝ ա) փայերը սահմանված են գանազան չափերով և գանազան սկզբունքներով—կամ ըստ կոոպերացիայի տեսնությունից (մեծ մասամբ վարկային կոոպերացիայում) կամ

ըստ կոոպերացիայի որեկտի միավորի (մեծ մասամբ և զլխավորապես մասնագիտական կոոպերատիվներում): Որինակ վարկային կոոպերատիվներից, վորոնց մեծագույն մասում փայը վորոշված է 10 ուրլի մեկ անդամից, յերկուսը (Նորագավթի և Փարաքարի) կանոնադրությամբ վորոշել են 25 ու, Վաղարշապատում՝ 20 ու և ապա 4 կոոպերատիվում՝ 15-ական ուրլի: Պարզ է, վոր այս կոոպերատիվներում չեյին կարող փայերը հավաքել այն քանակությամբ, ինչ քանակությամբ հավաքել է վարկային կոոպերացիայի մեծ մասը. բ) Փայերի գանազա հավաքման գործում ազդեցություն են ունենում տվյալ կոոպերատիվի անդամ չքավոր տնտեսությունները. վորքան շատ է կոոպերատիվում չքավորի թիվը, այնքան քիչ է հավաքվում փայը, գ) Այն կոոպերատիվները, վորոնք առաջ են յեկել համեմատաբար ավելի ուշ, կամ վորոնց անդամների թիվը համեմատաբար ավելի ուշ է բազմացել, զրանք փայը գանձել են ավելի քիչ, քան հին կոոպերատիվները, վորոնց անդամների թիվը ավելի գանազա է աճել. դ) Հնդհանուր առնաժամանակ գծվարություններն անցյալում, կամ այսպես կոչված մկրատը չեյին կարող բացասաբար չանդրադառնալ փայերի գանձման գործում և այլն:

Հետոյալ աղյուսակը տալիս է Գյուղկոոպերացիայի ստորին ցանցի փայի զինամիկան:

№ ը/կ	ԹՎԱԿԱՆՆԵՐԸ	Տարիկապես ավելցող կոոպերատ. թիվը	Նրանց անդամների թիվը	Հարկավոր փայերի մուծումը	Մեկ անդամին հասնում է	Փայերի մուծումը %/0-ի ընդհանուր փայերի համարը
1	Ա. 1/10 - 2925 թ.	49	13163	125003	9.50	56,8
2	Ա. 1/10 - 1926 թ.	146	27376	231401	8.46	62,2
3	Ա. 1/1 - 1928 թ.	171	45745	397379	8.70	73,5
4	Ա. 1/7 - 1928 թ.	157	55665	550895	9.90	70,4

Պարզ յերևում է, վոր 2/3 տարվա ընթացքում փայական կապիտալը բարձրացել է 477 675 ուրլ. կամ 382,1%: Սակայն փայական կապիտալի բացարձակ աճումը դեռ չի խոսում հոգուտ փայի արագ գանձման: Կարևոր է հետևել, թե ինչպես է փոխվում հավաքված գումարի %/0-ը: Ինչպես տեսնում ենք, այդ տեսակետից պատկերը բավարար է, — հավաքված փայի տոկոսը աստիճանաբար բարձրանում է և այժմ կազմում է հավաքվելիք գումարի 3/4-ից ավելին: Ի նկատի ունենալով, գյուղի ներկա տնտեսական պայմանները և գյուղացիությունից վճարելու ունակությունը՝ կարճ ժամանակում հավաքված փայերի տոկոսը պետք է համարել բավարար:

**Փայերի մուծումը** Ի նկատի ունենալով փայական զրամագլխի խոսքը կոոպերացիայից. շոր նշանակությունը կոոպերացիայի համար և վոր էր սեսակների նա հիմք է ծառայում կոոպերատիվի գործառնություններին զարկ տալու խնդրում, հետաքրքրական է իմանալ, թե վոր տեսակի կոոպերատիվն ինչ չափով է գանձել իրեն հասանելիք փայական զրամագուլները:



№ Ը/Կ	ԿՈՐՊՈՐԱՏԻՎՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ	Ա.Ռ. 1/X 26 թ.		Ա.Ռ. 1/I 28 թ.		Ա.Ռ. 1/VII 28 թ.	
		Փանձաված հազար ռ.	Փանձման 0/0-ը	Փանձաված հազար ռ.	Փանձման 0/0-ը	Փանձաված հազար ռ.	Փանձման 0/0-ը
1	Գյուղավարկային . . . . .	157,1	54,0	238,7	75,1	302,9	75,1
2	Խառը ընկերություն . . . . .	4,5	41,3	1,7	53,7	1,8	63,0
3	Կաթնարտանային . . . . .	լրիվ տեղեկություններ չկան					
4	Այգեգործական ընկերություն . . . . .	17,4	35,5	38,9	53,9	51,1	56,9
5	Բամբակագործ . . . . .	2,6	40,0	45,8	67,7	57,2	65,5
6	Ծխախոտագործ . . . . .	5,6	82,2	2,3	80,8	1,9	50,0
7	Մեղվարուծական . . . . .	2,4	66,2	2,4	60,0	4,3	70,6
8	Շերամապահակ . . . . .	0,6	23,9	2,1	79,5	4,9	56,0
9	Մեքենատապագործ . . . . .	2,4	38,9	1,8	62,7	3,0	63,0
10	Կոլտնտեսություններ . . . . .	լրիվ տեղեկություններ չկան					
		192,6	62,2	333,7	72,4	427,1	70,4

Աչքի առաջ ունենալով, վոր ս. թ. 1-ին կրսամյակում անդամների թիվն ուժեղ չափով ավելացել է, այն էլ չբավոր խավերի հաշվին, փայերի գանձման տոկոսը (70,4%) պետք է համարել բավարար: Բացի այդ, մի շարք կոոպերատիվներում (վարկային, այգեգործական, շերամապահական և այլն) փայի չափն ավելացված է, վորպիսի հանգամանքը նույնպես ազդել է գանձման տոկոսի վրա:

Այնուամենայնիվ առ 1-ը հուլիսի գանձման տոկոսը ցածր է այգեգործական (56,9%), ծխախոտագործական (50,0%) և շերամապահական (56,0%) ընկերություններում: Տնտեսությունների միջերկրի վաճառքից հետո (նոյեմբեր-դեկտեմբեր), անշուշտ կուժեղանա փայերի գանձումը: Փայերի գանձման պատկերը չեն տալիս կուլիկալով տնտեսությունները, վորոնց փայական և այլ դրամագլուխները միասին և զրված և ապա կաթնարտանայինը, վորոնք բավարար վորակի տեղեկություններ չեն տվել:

Փայերի անկանոն գանձումն անշուշտ ազդել է կոոպերատիվների ֆինանսական դրություն վրա: Կոոպերատիվների վարչությունները պետք է հետևեն իրենց կոոպերատիվների անդամների փայերի գանձման ընթացքին: Անհրաժեշտ է ուժեղ և կուլակային տնտեսություններից անմիջապես լրիվ կերպով գանձել փայերը, միջակ տնտեսությունների համար սահմանել գանձման կարճատև ժամկետ, իսկ չբավորներին թույլ տալ մուծելու ըստ հնարավորություն և նրանց փոխարեն գանձել չքավորական ֆոնդից:

**Կոոպերատիվների փայերի մ. ԼՈՒՄՔ** Պետք է պարզ կերպով ընդգծել, վոր կոոպերատիվները համարյա չեն մուծել իրենց փայը Միություններին, վորպիսի հանգամանքն խոշոր չափով է անբարավորություն և նրանց փոխարեն գանձել չքավորական ֆոնդից:

Այդ պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը:

№ Ը/Կ	ՄԻՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ	1/10 - 1926 թ.		1/1 - 1928 թ.		1/7 - 1928 թ.	
		Փանձաված և հազար ռուբ.	Փանձման 0/0-ը	Փանձաված և հազար ռուբ.	Փանձման 0/0-ը	Փանձաված և հազար ռուբ.	Փանձման 0/0-ը
1	Հայգյուղավարկային	39,4	67,1	37,5	58,0	37,8	47,8
2	Պանիրըյուղակենտրոն	9,3	88,6	6,5	58,1	6,5	51,2
3	Այգիներկոոպ	—	—	7,4	94,8	7,5	70,1
Ընդամենը . . . . .		48,7	70,4	51,4	61,5	51,8	51,6

Ուրեմն, գանձման տոկոսն ի՞նչ թե ավելանում է, այլ նույնիսկ մուծված փայերի բացարձակ թիվը պակասում է,—մի յերևույթ, վոր ցույց է տալիս, թե ցանցը վորքան անտարբեր է վերաբերվում դեպի իր պարտականությունը: Համեմատաբար բարեխիղճ վերաբերմունք են ցույց տվել այգեգործական ընկերությունները (70,1%): Անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում գանձել որինական փայավճարները, զիջելով և ժամկետ նշանակելով միայն այն կոոպերատիվների համար, վորոնց ֆինանսական դրությունը կայուն չէ և վորոնք մի քանի տարի շարունակ վնասի մեջ են:

Գյուղկոոպերացիան չի կարող առողջ ընթացքով զարգանալ և պետությունը ցանկալի ֆինանսական ուժանդակություն ցույց տալ, մինչև ցանցի գանձվելիք գումարները իր ժամանակին լրովին չգանձվեն:

**Ս.Վանդանի 6 գործառ. Ավանդները և ընթացիկ հաշիվները**, վոր մուծվել են գլխավորապես վարկային կոոպերացիայի զբաղմունքով, տալիս են ի՞նչ այնքան բավարար պատկեր: Այն պատճառները, վորոնք ազդում են փայերի մուծման, էլ ավելի ուժեղ ազդեցություն ունեն ավանդների մուծման գործի վրա:

Ավանդների մուծման գինատիկան բերված է հետևյալ աղյուսակում:

№	ԹՎԱԿԱՆՆԵՐ	Տեղեկություններ կոոպերատիվների կողմից	Ներանց անգամների թիվը	Ավանդների և ընթացիկ հաշիվների գումարը	Մեկ անգամից գումարի քանակը
1	Ա.Ռ. 1-ն հոկտ. 25 թ.	31	11500	40707	3—50
2	Ա.Ռ. 1-ն հոկտ. 26 թ.	39	16791	48671	2—90
3	Ա.Ռ. 1-ն հունվ. 28 թ.	50	28923	188331	6—50
4	Ա.Ռ. 1-ն հուլիսի 28 թ.	90	40867	404334	9—90

1925—26 թվի ընթացքում թեև ավանդների բացարձակ գումարը մի քիչ ավելացել է (7964 ռուբլով կամ 19,6%-ով), բայց ավանդների միջին քանակը մեկ տնտեսություն համար պակասել է 60 կոպեկ կամ 17,0%-ով: Ավանդները զգալի չափով աճել են 1926-27 թվին: Բացարձակ թիվը հա-



սել և 188331 ո. կամ աճել և 387,0<sup>0</sup>/<sub>10</sub>-ով, կազմելով միջին թվով մեկ տըն-տեսութեանը 6 ուր. 50 կ.: Այդ աճումը շարունակվում և և այս տարի տարվով կես տարում 38,6<sup>0</sup>/<sub>10</sub>, հասնելով մեկ անդամին 9 ո 90 կ.: Դա ցույց է տալիս ուժեղ շարժում մեռյալ կետից և հիմք է տալիս յենթադրելու, Վոր ապագայում փայերի մուծումն ել ավելի զարկ կտանա: Վորպեսզի անհատ գյուղական տնտեսութուններն իրենց ավանդները և սոհասարակ դրամական խնայողութունը հանձնեն կոոպերացիային, վերջինս պետք է ստեղծի նպաստավոր պայմաններ այդ գործողութունների համար և մեծ ճշտութեամբ պահպանի ավանդների որինական իրավունքը, — այն է՝ պահպանել որևէքով սահմանված ավանդների գաղտնիքը, ժամանակին և առաջին հերթին բավարարել ավանդատերի պահանջները և այլն:

Միութենային գործառնութունները չեն զարգանում և հեռանկարներ ել չունեն զարգանալու շատ հասկանալի պատճառով: Հայ-գյուղկոոպում և Պանիրյուղկենտրոնում ավանդներ կան շատ չնչին գումարով (առ 1-ն հուլիսի ս/թ. 5861 ո. և 3282 ո.) վորը առանձնապես նշանակութուն չի կարող ունենալ:

**Ըճգհանուր ծախսեր** Գյուղկոոպերացիայի գործառնութունների և գործնեյութեան շրջանի լայնացմամբ բնականորեն մեծանում են և նրա ծախքերը: Սակայն ծախքերի տարբեր նոմեկլատուրան, վոր ընդունված է կոոպերացիայի տարբեր տեսակներում և այն, վոր առաջարկում են Բանդյուղտեսչութունն ու Առևտրական ժողովմատը, հնարավորութուն չի տալիս համեմատել և հետեել այդ ծախքերի փոփոխման: Բացի դրանից մի շարք կոոպերատիվներ չեն ուղարկել անցյալ տարվա ծախքերի հաշիվը, վոմանք ուղարկել են ընդհանուր գումարներով և վոչ առանձին հատվածներով: Այդ պատճառով ել այս չափազանց կարևոր հարցն անկաշիլի յե լրիվ լուսարանել Հայգյուղկոոպի ամբողջ սիստեմում անցյալ տարվա գործնեյութեան նկատմամբ:

Գյուղկոոպերացիայի ընդհանուր ծախքերի քանակի մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը.

№ ը/կ	ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ	Տեղեկութուն ավոց կոոպերատ. թիվը	Բացարձակ թվերով հար ուրի		Կրճատման 0/10-ը	Մեկ կոոպերատիվին գալիս է, բացարձակ թվեր	
			1926/27 թ.	Ցենթադր. 28 թ.		Բարձր ցածր	1926/27 թ.
1	Գյուղվարկային ընկեր.	36	256,2	144,9	43,4	7117	4025
2	Բամբարգործ. »	11	75,2	53,2	29,2	6839	4836
3	Այգեգործական »	21	50,2	43,6	12,8	2381	2076
4	Կաթնարտելներ . .	26	67,6	57,5	14,9	2600	2212
5	Ծխախոտագործ. ընկեր.	7	6,5	5,2	21,5	929	729
6	Մեղվաբուծական »	5	3,5	2,7	22,9	700	540
	Ընդամենը . .	106	459,0	307,0	33,1	4,330	2896
	Միութենային . .	3	453,4	393,4	13,2	151.100	131100
	Ընդամենը Գյուղկոոպեր.	109	912,4	700,4	23,2	8.400	6400

Պարզվում է, վոր անցյալ տարի ստորին ցանցի ապագրատը ավելի թանկ է յեղել Միութենային կենտրոնական ապագրատից: Մոտավոր հաշվով ստորին լրիվ ցանցի անցյալ տարվա ծախքերը հավասար են 690 հազար ուրբու, այսինքն 52<sup>0</sup>/<sub>10</sub>-ով ավել կենտրոնական ապագրատի ծախքերից. — ա) Ամենաթանկ ապագրատ ունեն վարկային և բամբարկագործական ընկերութունները, վոր ծախսել են տարեկան միջին թվով 7117 և 6836 ուրբի, իսկ ամենաեղև ապագրատը՝ մեղվաբուծական ընկերութուններն են, ծախսելով 700 ո. բ) Ընդհանուր առմամբ յենթադրվում է ընթացիկ տարում ծախքերը կրճատել անցյալ տարվա համեմատութեամբ միջին թվով 23,9<sup>0</sup>/<sub>10</sub>, մասնավորապես կրճատման ամենախոշոր տոկոսը, ինչպես պետք է սպասել, ունենալու յեն վարկային ընկերութունները (43,3<sup>0</sup>/<sub>10</sub>) և բամբարկագործական ընկերութունները (29,2<sup>0</sup>/<sub>10</sub>). ամենապակաս տոկոսը այգեգործական ընկերութուններն են (12,8<sup>0</sup>/<sub>10</sub>) վորոնք ունին իրոք ամենաեղև ապագրատը՝ իրենց առևտրական և արտագրական խոշոր գործառնութունների հանդեպ:

Աղյուսակում բերված կրճատումները անհրաժեշտ է իրագործել, վորպեսզի վորոչ չափով թեթևանա ֆինանսական այն լարված գրութունը, վորը ապրում է Գյուղկոոպերացիան վերջին տարիներում:

Այժմ տեսնենք ընդհանուր ծախքերի ինչպիսի կրճատումներ են նախատեսվում առանձին միութենային համար Անդրպետպլանի առաջարկած ծախքերի նոմեկլատուրայով, վորի մեջ մտնում են բացի անձնակազմի, դրասենյակային, շինքերի ու պահեստների վործի, փոստ-հեռագրական, տնտեսական, շրջագայութեան և գործուղման ծախքերից, ինչպես ցույց է տրված աղյուսակում, — նաև փոխառութունների համար վճարվելիք տոկոսները, առևտրական, արգյունարերական տուրքերը, մուծումները և այլն:

№ ը/կ	ՄԻՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1926/27 թ. հազար ո.	Մարտերի ավոց բանբարձրմանու վոր 0/10-ը կազմում է 1928 թ. (հազար ուրբ.)	Մարտերի ավոց բանբարձրմանու վոր 0/10-ը կազմում է (ինքնաբերից)	Կրճատման 0/10-ը	
1	Հայգյուղկոոպ	334,8	5,1	290,6	3,7	13,2
2	Պանիրյուղկենտրոն	178,0	11,8	162,0	7,0	9,0
3	Այգեգինկոոպ	57,3	6,1	124,4	5,5	117,1
	Ընդամենը	570,1	6,3	577,0	4,0	1,2

Աղյուսակից յերևում է, վոր ընդհանուր ծախքերը համեմատաբար բարձր են յեղել Պանիրյուղկենտրոնում (11,8<sup>0</sup>/<sub>10</sub>), վորը տալիս է և կրճատման ամենափոքր տոկոսը (9,0<sup>0</sup>/<sub>10</sub>), դրա համար ել պետք է յենթադրել, վոր սրա ապրանքաշրջանառութունն ընթացիկ տարում ավելի արագ է աճելու, քան մյուս միութենայիններում:

Այգեգինկոոպի նկատմամբ պետք է ասել, վոր նա կազմակերպվել է միայն 1927 թ. ապրիլին, ծախքեր և կատարել միայն ինն ամիս, պարզ է, վոր 1928 թ. ընթացքում նրա ծախքերը ավելի շատ կլինեն: Ընդհանուր առմամբ աղյուսակը ցույց է տալիս, վոր իրական ծախքերն ընթացիկ տա-



բում յենթագրվում է բարձրացնել շատ քիչ (1,20%-ով) իսկ ծախքերի տոկոսը ապրանքաշրջանառութեան նկատմամբ իջեցվելու յե 2,50%-ով:

Ծախքերի հոգվածները առանձին առանձին քննելիս աչքի յե ընկնում այն, վոր փոխառութեաններին արված տոկոսները խոշոր գումար են կազմում, յերկրորդ տեղը բռնելով ընդհանուր ծախքերի մեջ (առաջին տեղըն անձնակազմի վարձատրութեանն է բռնում): Այդ տոկոսները Հայ-գյուղկոտայում կազմում են ընդհանուր ծախքերի 28,60%-ը, Պանիրյուղկենարոնում—30,00%-ը, Այգզինկոտայում—30,30%-ը: Ընդամենը 1926/27 թվին այս Միութեանները միասին վճարել են փոխառութեան տոկոսներ 116.600 ու., վոր կազմում է նրանց ընդհանուր ծախքերի 29,20%-ը: Այստեղից բխում է այն, վոր Գյուղկոտայերային, աշխատելով գերազանցորեն փոխառու միջոցներով, դրանով մեծացնում է իր ծախքերը և կանգնում է խոշոր ծախքեր ունեցող հիմնարկութեանների շարքում:

Վատ է, վոր ստորին ցանցի վերաբերյալ անհրաժեշտ սովյալներ չկան, վոր կարելի լինի համեմատել և վորոշ յեղբակացութեան գալ: Հիմք կա ընդունելու, վոր ընթացիկ տարվա վերջին ստորին ցանցն իր կատարած ծախքերի մասին կտա լրիվ տեղեկութեաններ՝ այդ նոտատակով նըրանց ուղարկված միատեսակ ձևով: Այն դեպքում հնարավոր կլինի ըստ ամենայնի լուսարանել ծախքերի պատկերը և դրանց նպատակահարմար բաշխումը:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր Հայգյուղկոտայի կատարած ապարտտի ռացիոնալացումն արտահայտվել է վոչ միայն ծախքերի կրճատումով, այլ կատարվել են նաև հաստիքների կրճատում՝ ինչպես կենտրոնում, նույնպես և ստորին ցանցում: Գործավարութեանը կատարվում է քարտային սխեմով, վորը հնարավորութեան է տալիս պահել ձևուն, փոքր գրասենյակային ապարտտ և խիստ արագացնել գրագրութեանների ընթացքը:

Հրահանգի և համապատասխան գրականութեան միջոցով կոտայերատիվ աշխատանքի ռացիոնալացման սկզբունքները հետզհետե թափանցում են ստորին ցանցը, վորի հետևանքով կոտայերատիվ ապարտտը դառնի չափով ձևուն և դարձել: Սակայն մի շարք կոտայերատիվներում դեռ հիմա ել նկատվում են ձգձգումներ և բյուրոկրատիկ վերաբերմունք: Գյուղկոտայերային պետք է վճարական պայքար մղի հիշյալ թերութեանների դեմ և ըստեղծի վորակյալ, փորձառու և եժան ապարտտ:

**Կոոպ. աշխատակից-** Գյուղկոտայերային աշխատակիցների վորակյալ գերի կազմի մասին կազմը չունի հենց այն պարզ պատճառով, վոր նա Հայաստանում նոր յերևույթ է, պատմութեան և փորձառութեան չունի: Գյուղկոտայերային գլխավոր անելիքները մեկը պետք է լինի՝ աստիճանաբար պատրաստել փորձված և վորակյալ կոոպ. աշխատակիցների կազմը: Այդ նպատակով Միութեաններն ամեն տարի իրենց փորձված աշխատակիցներից ուղարկում են դանազան բարձրագույն և միջնակարգ դպրոցները՝ սովելի կատարելագործվելու և մասնագիտանալու: Այժմ Միութեաններն ունեն 17 թոշակառուներ դանազան դպրոցներում: Բացի այդ, Հայգյուղկոտայը նախանցյալ տարի դասընթացներ երբացել ցանցի հաշվետարների վերապատրաստման համար: Հոգեժողովատի հետ միասին բացվել են տրակտորիստների դասընթացներ, վորտեղ պատ-

րասովեցին մի շարք տրակտորիստներ՝ կոտայերատիվ միավորներում աշխատելու համար:

Հայգյուղկոտայի կոոպից միջոցներ են ձեռք առնվում, հնարավորին չափ վորակավորելու աշխատակիցների կազմը, ուժեղացնելով թե կուսակցական ընկերների և թե մասնագետների թիվը:

**Հրահանգչական աշխատանքներ**

Ցանցի աշխատանքները ստուգելու և կանոնավորելու համար գործուղվել են հրահանգիչներ, վորոնք 25-26 թ. կատարել են 92 քննութեան, 65 հետազոտութեան և 123 այցելութեաններ: Ընդամենը ծախվել է 649 որ: Այդ շրջանում հրահանգիչների թիվը միջին հաշվով տատանվել է 4-5-ի, ուստի մի հրահանգիչի բանվորական որերը միջին հաշվով մի տարում յեղել է 129 որ: Ի հարկե այս չափը պիտի համարել նվազ: Ընդհանրապես հրահանգիչի տարեկան բանվորական որերը համարվում է նորմալ՝ 240-250 որ, միջին հաշվով ամսեկան 20 որ: Վերոհիշած թերութեանը բացատրվում է նրանով, վոր հրահանգչական կազմը բավական հոսուն են յեղել: Պիտի շեշտել նաև այն, վոր հրահանգչական կազմի վորակը նույնպես ցածր է յեղել: Կատարված քննահետազոտական աշխատանքների մեջ բացակայել է միատեսակութեանն ու ծրագրայնութեանը: Այդ իսկ պատճառով ցանցի սպասարկման աշխատանքները վորակով և աշխատանքի մեթոդների տեսակետից իր կոչման վրա կանգնած չի յեղել: Ի հարկե այս հանգամանքները չեն կարող վրիպել Հայգյուղկոտայի վարչութեան ուղղութեանը: Հաշորդ տարում, այն է 26-27 թ. ըստ ֆինանսական հնարավորութեանների վարչութեանը միջոցներ ձեռք առնելով կարողանում և հրահանգչական կազմի վորակը և քանակը վորոշ չափով լավացնել: Կազմբաժինն իր հրահանգիչներով և մյուս կոոպից աշխատանքների մեթոդների մեջ մտցնելով փոփոխութեան, և քննական ու հետազոտական աշխատանքներին տալով ծրագրված որացուցային ընույթ, հնարավորութեան է ունենում 1926/27 թ. ցանցի սպասարկման գործը կանոնավորել: Այդ ժամանակաշրջանում կարողանում է 6 հրահանգիչի միջոցով կատարել 658 ստուգում, 24 հետազոտութեան և 306 այցելութեան՝ 1296 բանվորական որվա ընթացքում: միջին հաշվով յուրաքանչյուր հրահանգիչին ընկնում է 232 որ: Այս տարի խոշոր ուղղութեանը դարձվեց ստուգման աշխատանքներին: Վարկային ընկերութեանները լիովին քննութեան յենթարկվեցին, ուղղութեան առնելով ռացիոնալացման աշխատանքները: Պետք է նկատել, վոր անցած տարի յեղել են ընկերութեաններ, վորոնք յերկու տարի շարունակ չեն քննվել: Հնարավորութեան սահմաններում ներկա տարում վերացված է այս բացը՝ այն չափով, վորչափ քննական աշխատանքների համար ծրագրել կա:

Ցանցի այս աշխատանքները կատարվել են, վոչ թե առանձին հրահանգիչի, այլ կազմբաժնի հատուկ ծրագրով:

**Կազմակերպչական կոլեկտիվների ցանցը**

Հայգյուղկոտայի կազմբաժնի կից միայն 1926-27 թվից է ստեղծվում կազմակերպչական: Կազմակերպչայի կազմը բաղկացած է յեղել 7 հոգուց (կազմբաժնի վարիչ, հրահանգիչ-խորհրդատու, ազրոբյուրոյի, վիճակնթարածնի վարիչներ, մասնագիտական կենտրոնների՝ Պանիրյուղկենարոնի և Այգզինկոտայի և Բամբակսեկցիայի ներկայացուցիչներից): Կոլեկտիվն քննութեան



և յինթարկել ցանցում և Միությունում կատարվելիք աճխատանքները, լսել և հրահանգիչների զեկուցումները: 1926-27 թ. կուլլեկիան ունեցել և 42 նիստ, քննված հարցերի մեծ մասը վերաբերել են ցանցին, քննված են 295 հարց, վորից կազմակերպչական՝ 125, հրահանգիչների զեկուցում՝ 110 և տարբեր հարցեր՝ 60:

**Հրահանգչական խորհրդակցություններ** Յանցի հրահանգչական աշխատանքների մեթոդների և ծրագրերի քննությունը կատարվել և հրահանգչական խորհրդակցություններում: Յերկու տարվա ընթացքում տեղի յն ունեցել 4 խորհրդակցություն:

**Ցանցի յեկ կեցուցիչ կապը** Յանցի հետ կապը պահպանվել և՛ ա) շրջաբերա կանների միջոցով, բ) գրավոր և բանավոր կոնսուլտացիայի, գ) իրավաբանական ոգնություն ցույց տալով և գլխավորապես, ի հարկե հրահանգիչների միջոցով: Այս կամ այն հարցը լուծելու համար մեկնել են տեղերը բաժինների վարիչները և այլ պատասխանատու աշխատակիցները:

Յանցը ստացել և հետևյալ բովանդակությամբ շրջաբերականներ.

№ ը/կ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	25/26 թ.	26/27 թ.
1	Սեփական միջոցների ուժեղացում (փոխավճարների գանձում, ավանդների ներգրավում, ավանդների ընդունում)	4	6
2	Գները իջեցում և ապարատի ուսցիտնալիզացիա	4	5
3	Հաշվական գործի վերստուգ. հանձնաժողով աշխատ. կանոնավորման հրահանգներ	4	18
4	Մասնաշաղկապ տոնակատ (Բերքի և Միջազգ. կոոպ.)	3	5
5	Գույքի ապահովագրման, մետրական չափ. կիրառմ.	6	4
6	Կոոպերացիան (չքավոր-բատրակների կանոն)	1	3
7	Կուլտ-աշխատանքներ	1	1
8	Զանազան	17	32
Ընդամենը		40	74
1	Հայթայթման գծով	21	19
2	Մատակարարման գծով	13	31
3	Ազրոկուլտ	8	14
Գուժարը		82	138

Բացի այդ, առանձին կոոպերատիվներին տրվում են բանավոր և գրավոր խորհուրդներ՝ ստորյա գործնական խնդիրների մասին: Այս աշխատանքների հաշվառումն այս յերկու տարիներում տարված չի, միայն այս թվից հաշվառում և մտցված: Սակայն ընդհանուր բաժնից քաղված տեղեկություններից պարզվում և, վոր ցանցին մոտ 900 գրություն և ուղղված գանազան բովանդակությամբ: Յանցից ստացված արձանագրություններին պատասխանված և և գրված են հրահանգչական նամակներ:

**Վիճակագրական աշխատանք** Հայգյուղկոոպի կազմակերպչական բաժնի Տընտեսա-վիճակագրական յինթարածինը շատ համեստ ապարատով և աշխատել: Հաշվետու ժամանակամիջոցում սկզբում աշխատակիցների թիվը յերկու յեր, ապա դարձավ յերեք: Նրա աշխատանքները բաժանվում են յերկու մասի. 1) ընթացիկ աշխատանքներ և 2) հիմնական ուսումնասիրություններ:

Ընթացիկ աշխատանքներն են՝ հավաքել, քննել, մշակել և անալիզի յինթարկել Գյուղկոոպերացիայի ստորին ցանցի և Միությունների ամսական ու տարեկան մթերային, դրամական գործնեյության և այլ աշխատանքների հաշվետվությունները: Պատրաստել նյութեր զեկուցումների համար, նայել լույս ընծայել կարևոր նյութեր: Ինֆորմացիոն տեղեկություններ են տրվել Հայգյուղկոոպի, ինչպես կենտրոնական մասերին, նույնպես և ցանցին ու այլ հիմնարկություններին և կազմակերպություններին՝ գործնական աշխատանքների ընթացքում ոգտագործելու համար: Հիմնական աշխատանքն և՛ կազմել վերևում հիշված Գյուղկոոպերացիայի ստորին ցանցի անդամ տնտեսությունների հատուկ հետադրության նյութերի մշակումը: Այդ աշխատանքը տեղի և մոտ վեց ամիս:

Այդ բոլոր աշխատանքների ընթացքում հանդիպել և մի շարք դժվարությունների: Ամենից առաջ յինթարածին ապարատը փոքր և, առանձին Միությունները՝ Այգդիկոոպ, Պանիրյուկենտրոնը չունեն վիճակագրական ապարատ, նրանց բոլոր նյութերը կուտակվում են յե/բաժնում և աշխատանքի ծավալը մի քանի անգամ բարդացնում: Նյութերն ու հաշվետվությունները տեղերից ստացվում են թերի, վոչ ժամանակին: Վոչ մի աշխատանք չի յեղել, վորի նյութը զանազան տեղերից ժամանակին ուղարկվեն: Վոչ մի նյութ իր ամբողջությամբ, լրիվ ու անթերի չի յեղել: Յե/բաժինը շատ անգամ ստիպված և յեղել նյութերը հետ ուղարկել տեղերը կրկին ստուգման: Թերի և անկատար ստացված նյութերի համար տեղերին ուղարկված են բազմիցս պահանջներ, վորոնք չեն բավարարվել և հարկադրված նյութերը մշակվել են թերի և անկանոն դրության մեջ: Այս ամենը վերին աստիճանի բացասաբար և անդրադառնում աշխատանքի արտադրականության, վորակի և բավարար արդյունքի վրա:

Անհրաժեշտ և կտրուկ միջոցներ ձեռք առնել Գյուղկոոպերացիայի ստորին ցանցում հաշվապահությունն ու գործավարությունը դնելու նորմալ պայմանների մեջ: Այսպես շարունակել անկարելի յն:

**Պլանային աշխատանք** Տնտեսա-վիճակագրական յինթարածին վրա յե ծանրացած նաև Գյուղկոոպերացիայի պլանային աշխատանքները: Ընթացիկ տարուց արդեն Հայգյուղկոոպը սկսել և պլանային հիմունքներով սխտեմատիկ աշխատանք տանել և վորովհետև պլանային աշխատանքը պետք և իրագործվի Գյուղկոոպերացիայի ամբողջ սխտեմում (ստորին ցանցում, մասնագիտական Միություններում և Հայգյուղկոոպում), կազմակերպչական բաժնին կից կազմվել և Միությունների և բաժինների ներկայացուցիչներից բաղկացած պլանային հանձնաժողով, վորը քննում և Գյուղկոոպերացիայի բոլոր պլանային աշխատանքներն ու յինթարդությունները:

Գյուղկոոպերացիան իր ամբողջ սխտեմով դեռ յերիտասարդ և և նա աճում և զգալիորեն արագ թափով: Խոշոր են նրա աշխատանք-



ները և բազմաբանագ, այսուհետև ել ավելի խոշոր են լինելու: Խիստ անհրաժեշտ է հենց այժմյանից պլանի յենթարկել և վիճակագրական թվերով լուսարանել այդ բոլորը, իսկ զրա համար պահանջ է դրվում Տնտեսա-վիճակագրական յե/րաժինը ուժեղացնել նոր ուժերով, հաստիքը լայնացնել այն չափով, վոր հնար լինի այդ հսկա աշխատանքներն ընդգրկել ըստ ամենայնի լրիվ ու հիշտ:

**Ագրոկուլտուր ագ- լասագներ** Հայդուղիտուրի կողմ. բաժնի Ագրո-կուլտ յենթարժինը կազմակերպվել է 1926 թ. հունիս ամսի 2-րդ կեսերին: Առաջին ամիսներին յե/րաժինն ուներ 8 հ. գուց բողկացած աշխատակիցների կողմ (վարիչ, մասնագետ, այգեգործ, մեղվաբուծ, թռչնաբուծ, ծխախոտի յերկու մասնագետներ, գյուղատնտեսութան հրահանգիչ և պրակտիկանտ): Հետագայում աշխատակիցներից յերեքն արձակվեցին (թռչնաբուծը, այգեգործութան և ծխախոտագործութան մեկական հրահանգիչները): Ագրո-կուլտուր նախաձեռնումները կիրառման միջոցին ոգտագործվում են ագրո-կուլտուր աշխատանքների բոլոր մեթոդները, վորոնք մշակված եյին հասարակական ագրոնոմիայի փորձով: Բացի դրանից, ձգտում է յեղել ագրոկուլտուր աշխատանքները կենսագործել Գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքների ընդհանուր ծրագրում, կապելով գյուղատնտեսական արտագրանքի վաճառահանման, մատակարարման և կոոպերացիան նախաձեռնումների հետ: Թեև սկզբնական շրջանում Ագրոկուլտուր յենթարժինի յուրաքանչյուր աշխատակից ուներ աշխատանքների համապատասխան ծրագիր, բայց մի շարք հանգամանքների պատճառով, հնարավոր չեղավ լրիվ կերպով իրականացնել ծրագիրը: Այդ պատճառներից գլխավորը պետք է համարել կողմ. բաժնի տրամագրութան տակ համապատասխան հրահանգչական կողմ չլինելը (հաճախ ստիպված ենք յեղել ոգտագործելու կազմբաժնի մասնագետ հրահանգիչներին) և մասնագետների պաշտոնավարութան կարճատևութունը:

Սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ յե/րաժինը կատարել է հետևյալ աշխատանքները. —

**Այգեգործութան ասպարեզում**

Այգեգործութան մասնագետները շարունակաբար այցելել են այգեգործական ընկերութունները և հրահանգներ տվել այգիների փաստունների դեմ պայքարելու վերաբերմամբ: Բոլոր ընկերութուններում կազմակերպված են յեղել այգիների ցուցադրական բուժում: Մատակարարման բաժինն ընկերութունների անդամների կարիքների համար վարելով մատակարարել և բուժման նյութեր (ծծումբ, արջասպ, փարիզյան կանաչ) և այգեգործական գործիքներ (սրակիչ մեքինաներ և ծծումբի փուքսեր): Սկզբում բավարար չափով քիմիկոսներ ու սրակիչներ չլինելու և այգեգործների անշարժութան հետևանքով, փաստունների դեմ պայքարը տարված է թերի, ուստի պայքարի զրական արդյունքներն արտահայտվում են միայն նրանով, վոր այգեգործները վերջնականապես համոզվեցին, վոր պայքարը միանգամայն զրական արդյունքներ է տալիս: Հետագայում այգիների բուժման պայքարը տարված է ավելի ուժեղ թափով, ինչպես որինակ 1927 թ. բուժվել են կոոպերացրած անդամների այգիների մոտ 80% -ը, իսկ 1928 թ. — 90—100% -ը:

Հաշվետու ժամանակամիջոցում այգեգործական ընկերութուններում (Թեհանյու, Բուրաստան, Դավալու, Վաղարշապատ և Ոչական) կառուցվել են որինակելի դինու պահեստներ:

Ընկերութուններին տակառներ մատակարարելու նպատակով կազմակերպված է տակառագործարան արհեստանոց, վորը մոտավորապես պատրաստել է 1000 տակառ:

1928 թ. Արիմից ստացված է 4000 հատ ամենալավ տեսակի պտղատու տունկեր՝ ընկերութունների կարիքների համար: Այդ տունկերի մեծ մասն ուղարկված է այգեգործական շրջանները (Բուրաստան, Վաղարշապատ և Ոչական): Բացի այդ, շերամապահական շրջաններին բաժանված է մոտ 20,000 հատ թթի տունկեր և 20 գրամ թթի սերմ: Երամապահական ընկերութուններին թթի տունկեր մատակարարելու համար այս տարի Ապիանում և Իջևանում սահմանված են անկարաններ:

Ներկայումս Այգեգիտուրի գծով կան յերկու այգեգործ-հրահանգիչներ, վորոնք սպասարկում են այգեգործական ընկերութունների անդամների կարիքները:

Անցյալ տարի յերկու ընկերութուններում կազմակերպված է ցուցադրական դինու պատրաստում: Ընթացիկ տարում, 12 գյուղերում (Քանաքեռ, Ծնող, Արաաշատ և այլն) ցուցադրված են Կալիֆորնիայի ձևով պտուղների ցուցադրական շորացում: Այդ ցուցադրական աշխատանքները միանգամայն բավարար են:

Ներկա տարում Ամարլու և Բուրաստան գյուղերում կազմակերպվել են յերկշաբաթյա այգեգործական դասընթացներ, վորի աշխատանքներին մասնակցել և նաև շրջանային գյուղատնտեսը: Դասընթացներին հաճախել են որական 20—25 հոգի, գլխավորապես գյուղի յերիտասարդակտիվը: Դասընթացների գործնական պարապմունքները տարվել են այգեգործական ընկերութան կից կազմակերպված ցուցադրական այգիներում:

**Բամբակագործութան բնագավառում**

Թեև բամբակագործութան գծով ագրոկուլտուր աշխատանքները տարված են Անգրբամբակումի միջոցով, սակայն կոոպերացիան վորոշ մասնակցութուն ունեցել է այդ աշխատանքներին: Կոոպերացիայի գլխավոր աշխատանքը արտահայտվել է նրանով, վոր նա մասնակցել է բամբակի վնասատուների («չոռ», «կարպրինա») դեմ տարվող պայքարում: Յուրաքանչյուր տարի բամբակագործական ընկերութուններին կից կազմակերպված են փաստունների դեմ պայքարող յեռյակներ:

Հրահանգիչները շարունակաբար այցելել են բամբակագործական ընկերութունները և պայքարի վերաբերյալ հրահանգներ տվել: Չնայած նրան, վոր բամբակի փաստունների դեմ պայքարն ամբողջապես կենտրոնացված էր Հողժողովմատի ձեռքում, վորն այդ նպատակի համար հատուկ հրահանգներ ուներ, սակայն ընկերութուններին կից կազմակերպված յեռյակների շնորհիվ, կոոպերացված բամբակացանները պայքարը տարել են ավելի հաջողութամբ, քան վոր կոոպերացված գյուղացիները: Այս հանգամանքը մատնանշված է Հողժողովմատի բույսերի պաշտպանութան բաժնի հրահանգչի գեկուցումների մեջ: Հաշվետու շրջանում 13 ընկերութունների կողմից 35 ցուցադրական ցանք է արված: Բամբա-



կազորձական ընկերութիւններին մատակարարվել են տրակտորներ, վորոնք մասնավոր գութաններէ դեմ մրցում էյին հաջողութեամբ: Մասնավոր գութանը մի դեսյատին հերկելու համար վերցնում եր 35—40 ուրբ., իսկ տրակտորը՝ անդամներէց 18 ու., վոչ անդամներէց—20—22 ուրբ.

Սակայն նորոգման արհեստանոցներ չլինելու պատճառով տրակտորները չկարողացան լրիվ աշխատանք ունենալ:

Բացի տրակտորներէց, ընկերութիւններին մատակարարվում են շարքացաններ, ձեռքի և ձիու կուլտիվատորներ: Կոոպերացված բամբակացաններին պահանջի դեպքում անհրաժեշտ գործիքներով բավարարելու համար, ներկա տարում յերեք ընկերութիւններում կազմակերպվել են վարձակետեր, բայց տեղական ազրոկազմի ղեկավարութեան թուլութեան պատճառով, փորձակետերի աշխատանքները յեղել են անբավարար:

Համաձայն բարձրագույն մարմինների համապատասխան վորոշման բամբակագործութեան գծով տարվող ամբողջ ազրոկուլտուր աշխատանքները պետք է հանձնվեն Գյուղկոոպերացիային: Այդ հարցն իր վերջնական լուծումն ստանալուց հետո, այս գծով ազրոկուլտուր աշխատանքները կկատարվեն ծրագրայնորեն և ավելի բավարար արդուներ կտան: Արդեն կազմված է աշխատանքի համապատասխան ծրագիր և նախահաշիվ, վորը կհաստատվի պատշաճ մարմինների կողմից և կտրամադրվի հարկ յեղած միջոցները:

**Ծխախոտագործութեան ասպարեզում** Լավորակ ծխախոտ ցանելու նպատակով Կրասնոարյան ասպարեզում նազարից ու Սուխումից մի քանի տեսակի սերմացու յի բերված փորձի համար ցանելու. բացի դրանից, 1928 թվի դարնան Հայաստանի բոլոր ծխախոտագործներին լավորակ սերմացու մատակարարելու նպատակով Սուխումից բերված է 3 փութ լավորակ սերմ:

Ծխախոտագործական հրահանգիչները շարունակ շրջել են ընկերութիւնները և ծխախոտի մշակման ու վերամշակման մասին անհրաժեշտ ցուցմունքներ տվել: Միջին թվով յուրաքանչյուր ընկերութիւնում հրահանգիչը տարեկան յեղել է 4—7 անգամ: Մի քանի ընկերութիւնների կից (Արմաշ, Մոլլա-Բայազետ) կազմակերպվել են ցուցադաշտեր, վորոնք չափազանց լավ արդուներ են տվել: Յուցադաշտերի բերքը 30—50% ավել է յեղել, քան սովորական դաշտերում:

Հրահանգիչների սակավութեան պատճառով հնարավոր չի յեղել ընդարձակելու ցուցադաշտերի տարածութիւնը: Ծխախոտի հիվանդութիւնների մի մասն ուսումնասիրված է և միջոցներ է ձեռք առնված յեկող տարվանից պայքարելու դրանց դեմ: Մի քանի ընկերութիւններին կից կառուցված է ծխախոտի կոլլեկտիվ որինակելի չորանոցներ:

Հատուկ հանձնաժողովի միջոցով պատրաստված է որինակելի չորանոցների նախագծեր, վորոնցով և պետք է առաջնորդվել նորերը կառուցելու համար: Հաշվետու ժամանակամիջոցում հրավիրված են մի շարք խորհրդակցութիւններ, վորտեղ քննութեան են առնված ծխախոտագործութեան զարգացման ուղիներն ու միջոցները:

Հողժողովմատի հետ միասին կատարվում է Հայաստանի ծխախոտագործութեան շրջանացման ուսումնասիրութիւնը:

**Մեղվաբուծութեան ասպարեզում** 1926 թվին և 1927 թ. սկզբին հրահանգիչն 2—5 անգամ յեղել է բոլոր մեղվաբուծական ընկերութիւններում (բացի Ջանգեղուր, Դարալագյաղ և Մեղրի), կազմակերպել է փախտի դեմ պայքարը և միաժամանակ հրահանգներ և տվել շրջանակավոր մեղվաբուծութեան ուղիղ վարելու մասին: Դարաքիլիսայում կազմակերպված է մոմաթերթի արհեստանոց, վորն արդեն գործում է, իսկ Իջևվանում հիմնված է փեթակի արհեստանոց, վորը տարեկան արտադրելու յի 4000 փեթակ: Դարաքիլիսայի արհեստանոցն արդեն յերկու տարի յի ինչ մեղվաբուծներին եժան գնով մատակարարում է ամենալավ տեսակի մոմաթերթ: Ախլատի և Դարաքիլիսայի ընկերութիւններին կից գոյութիւն ունեն ցուցադրական մեղվանոցներ:

Հաշվետու տարում հրավիրված են մեղվաբուծական ընկերութիւններին կից խորհրդակցութիւն, վորտեղ քննութեան են առնված ընկերութիւնների միջերման և մատակարարման հարցերը:

**Օւլ ազրեկուլտուր ասպարեզում** Բացի վերոհիշյալներից, ազրեկուլտուր գծով կատարված են հետևյալ աշխատանքները. —

Սորհրդային Ռուսաստանից Դիլիջանի և Նոր-Բայազետի թուշարուծական ընկերութիւնների համար գնված է 64 ազնվացեղ հավեր (Միւնորո և Լիխորոն): Հավերի մեծ մասը հիվանդութիւններ շորհրդակցութեան տեղերում, բայց նրանց ձվերի սերունդը բավականաչափ հետք է թողել այդ յերկու գավառում:

Նույն ընկերութիւններին տրված է նաև ինկուբատորներ: Թուշարուծական ընկերութիւններին սպասարկելու համար մի քանի ամսով Լուսժողովմատի մասնագետը յեղել է Հայգյուղկոոպի տրամադրութեան տակ:

Կոոպերացված գյուղացիութեան կարիքների համար 1926 թվին զընված է յեղել 5 հատ վնդերական արտադրող ձիւր, վորոնք մի տարի գտնվել են Ն. Բայազետի գավառում՝ Բասարգիչարի վարկային ընկերութեան մոտ: Ձիւրը մի տարի ողտագործվելուց հետո, պահպանման ծախքերը շատ լինելու պատճառով հանձնվել է Ն. Բայազետի Գավգործիկին:

1927 թվին Եջմիածնի և Յերևանի գավառներում տարվել են սերմագտման կոմպանիա, վորի ընթացքում գտվել է մոտ 25.000 փութ սերմացու ցորեն:

Ազրեկուլտուր յենթարժինը ակտիվ մասնակցութիւն է ունեցել մատակարարման բաժնի աշխատանքի ծրագիրը կազմելուն և միշտ էլ համապատասխան յեղրակացութիւններ և տվել վարկային և այլ գյուղկոոպերատիվ ընկերութիւններին գյուղգործիքներ, բուժման նյութեր, սերմորայք և այլն մատակարարելու ծրագրերի նկատմամբ: Գյուղացիութեան ավելի լավորակ սերմորայք մատակարարելու նպատակով, յերկրորդ տարին է, վոր անալիզի յի յենթարկվում ազգաբնակչութեան մատակարարելիք խոտարույսերի սերմորայքը:

Յուրաքանչյուր տարի շրջանային գյուղատնտեսական ցուցահանդեսներին կից կազմակերպվել են Գյուղկոոպերացիայի բաժիններ, վորտեղ ցուցադրվել են կոոպերացիայի նվաճումները: Այդ ցուցահանդեսներին եքսպոնատներ են ցուցադրել թե Հայգյուղկոոպը և թե տեղերի ընկերութիւնները: Մի շարք ընկերութիւններ արժանացել են մրցանակների ու գովասանական թերթերի: Յուցահանդեսներում բացի եքսպոնատներից կազմակերպվել են դասախոսութիւններ և զրույցներ: Այս տարում ծրա-



զբված և յեղել անասնապահական շրջաններում լայն չափով կազմակերպել խոտաբույսերի և արմատապտուղների մշակութային ցուցադաշտեր և անասունների ցուցադրական կերակրումներ, բայց գարնան խոտաբույսերի սերմերի կրիզիսի պատճառով, հնարավորություն չի յեղել կազմակերպելու ցուցադաշտեր: Իսկ կերի կրիզիսի պատճառով ցուցադրական կերակրումներ կազմակերպվել են միայն Յերևանի և Լոռի-Փամբակի գավառների 5 վայրերում:

Հաշվետու ժամանակամիջոցում հրատարակվել և չորս հատ գյուղատնտեսական սլակատներ (խոտաբույսերի մշակութային և այգիների վնասատուների վերաբերյալ) և մեկ գրքույկ գինեգործության վերաբերյալ: Տպագրության համար արդեն պատրաստ և յերկու գրքույկ ևս, վոր հրատարակվելու յե դեկտեմբեր ամսում:

Արդեն յերկրորդ ասարին և, վոր Գյուղկոոպերացիայի գծով աշխատանքներ և տանում տեղի ագրոպերսոնալը:

Գյուղկոոպերացիայի գծով բավարար և ծրագրային աշխատանքներ տանելու համար անհրաժեշտ և ուժեղացնել թե դրամական միջոցները և թե մասնագետների թիվը:

#### Կուլտ-կրթական

Գյուղկոոպերատիվ միավորների կուլտ ֆոնդի-աշխատանքները. — րի և կոոպերատիվ-կրթական աշխատանքների փորձի բացակայության հետևանքով հնարավոր չի յեղել անհրաժեշտ չափով ծավալել այդ աշխատանքները:

Մինչ այժմ 41 վարկային ընկերություններից կուլտ-հանձնաժողովներ ունեն մոտ 20-ը: Կուլտ-հանձնաժողովներ կազմակերպված են կոմունաներում և մի քանի կաթնարտելներում:

Ցանցում կուլտ-կրթական աշխատանքները ծավալելու համար, կազմ բաժինը կուլտ-հանձնաժողովների ընթացիկ աշխատանքների, կոոպիթազգային որվա, Բերքի տոնի և այլ աշխատանքների վերաբերյալ իր ժամանակին համապատասխան հրահանգներ և ուղարկել տեղերին: Բացի դրանից կոոպանկյուններ կազմակերպելու համար տեղերին ուղարկված են արվագրված լողունգներ, սլակատներ և վորոշ չափով գրականություն, իսկ կուլտ-հանձնաժողովների աշխատանքներին կազմակերպչական և մեթոդական ցուցմունքներ տալու համար կազմբաժինը հրատարակել և խմորատիպ հատուկ գրքույկ:

Տեղերում կոոպերատիվ անկյունների կազմակերպումն ընթանում և չափազանց թույլ: Կենտրոնի ուղարկած նյութերն իրենց նպատակին չեն ոգտագործվում: Այս գործում կոոպմիավորներին շատ թույլ են ոժանդակում տեղական քաղցուղարական մարմինները: Մեր ուղարկած գրականությունը խրճիթ-ընթերցարաններում չի ոգտագործվում, միավորներից շատ քչերն են գուրս գրում թերթեր ու ամսագրեր: Այդ առթիվ տեղերին աված և թե կենդանի և թե գրավոր հրահանգներ: Մի քանի գյուղերում արդեն անցել են անկյունների կազմակերպմանը (Դավալու, Բյավթառու, Քանաքևա և այլն):

Կոոպկուլտ-կրթական մասսայական աշխատանք այժմ տարվում և միայն կենտրոնում: Մեր ուժերով կենտրոնական Գյուղացու տանը սխառնատիկ կերպով կազմակերպվում են դասախոսություններ և գրույցներ, կուլտբաժնի միջոցով տարածվում են Հայգյուղկոոպի բոլոր հրատարակությունները, բացի գրանից տարվում և նախապատրաստական աշխա-

տանք՝ Գյուղացու տանը կազմակերպելու գյուղկոոպերատիվ կինո սիանսներ, աղիտ դատեր և այլն: Ռադիո զեկուցումները մինչ այժմ կրել են պատահական բնույթ, իսկ այժմ այդ աշխատանքը տարվում և պլանային կերպով: Ամեն տարի սխառնատիկ կերպով անց և կացվել Կոոպերացիայի Միջազգային Որը և Բերքի տոնը: Ուշագրություն և դարձվում նաև կինոֆիկացիայի վրա, Հայգյուղկոոպը արդեն ունի մեկ սեփական կինոնկար և նախատեսվում և ձեռք բերել սեփական շրջիկ կինո ապարատ՝ գյուղում Գյուղկոոպերացիայի վերաբերյալ նկարներ ցուցադրելու համար:

Մինչ այժմ խրճիթ-ընթերցարաններին կից գյուղատնտեսական խրվակների ծրագրում գյուղացիության կոոպերացման և կուլլեկտիվացման խնդիրներին բոլորովին տեղ չի արված: Այժմս համաձայնություն գալով Քաղցուղկոոպի հետ, տեղերին հրահանգվում և այդ խմբակները միացնել Գյուղկոոպերատիվ խմբակներին ծրագրի առանցքը դարձնել վերոհիշյալ խնդիրները:

1927 և 28 թվերին գրացրված կարմիր բանակայինների համար կազմակերպվել են Գյուղկոոպերացիայում և կուլտնտեսություններում աշխատողների կազմ պատրաստելու 15 որյա դասընթացներ:

Կազմերի պատրաստման և վերապատրաստման գործը արտահայտվել և հետևյալում. 1926 թվից Մոսկվայի բարձրագույն կոոպերատիվ կուրսերն ուղարկված և յերկու հոգի, վորից մեկը արդեն ավարտել և և աշխատում և Հայգյուղկոոպում: Անգրիկոպիսայան Կոմհամալսարանին կից կոոպըսսընթացներում սովորում են 4 հոգի և Յերևանի կոոպտեխնիկումում 15 հոգի: Հայգյուղբանի հետ միասին կազմակերպվել են հաշվապահների վերապատրաստման դասընթացներ, վորտեղ ավարտել են 42 հաշվապահներ: Ծրագրված և նման դասընթացներ կազմակերպել նաև այս ասարի: Բացի դրանից Հայգյուղկոոպը մասնակցել և տրակտորիստներ պատրաստելու դասընթացների կազմակերպմանը:

Գրականություն և սլակատների հրատարակությունը թեև կրել և պատահական բնույթ, բայց այնուամենայնիվ այդ ուղղությամբ վորոշ աշխատանք տարվել և. — հրատարակված և 3 գիրք մի շարք կանոնադրություններ և 3 տեսակ սլակատներ:

Աշխատանքների նման վոշ ծրագրային դանդաղ ընթացքը բացատրվում և՛ մի կողմից կուլտ-հրահանգչի բացակայությամբ, իսկ մյուս կողմից տեղերում Գյուղկոոպ միավորների և կենտրոնում Գյուղկոոպկենտրոնի միջև կոնտակտի ու միացյալ կուլտ-ֆոնդի բացակայությամբ:

Այժմս այդ աշխատանքներն ուժեղացնելու համար Հայգյուղկոոպը պահում և հատուկ կուլտ-հրահանգչի, վորը կուլտ-կրթական աշխատանքները տանում և ինքն անմիջապես և թե ընդհանուր հրահանգիչների միջոցով:

Կուլտ-կրթական աշխատանքները ավելի լավ հիմքերի վրա դնելու համար ծրագրված և կենտրոնացնել գյուղական կոոպերացիայի բոլոր կենտրոնների կուլտֆոնդերը և աշխատանքները տանել հատուկ կուլտ-հանձնաժողովի միջոցով, վորը կազմակերպվելու յե Հայգյուղկոոպի կազմ, բաժնին կից: Այդ հանձնաժողովը կարճ ժամանակամիջոցում պետք և կարգի բերի սկզբնական խմբակային և մասսայական աշխատանքները և ուժեղացնի հրատարակչական ու կազմերի վերապատրաստման գործը:



**Բ. ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Գյուղատնտեսության իր վարկային կոոպերատիվների միջոցով վարկավորում է կոոպերացիան գյուղացիությունը: Այդ վարկավորման գլխավոր նպատակն է բարձրացնել չքավոր և միջակ անտնտեսությունների տնտեսական մակարդակը և աստիճանաբար մեխանիզացիայի յենթարկել գյուղատնտեսական պրոցեսները: Ուստի այդ վարկավորումը զուտ նպատակային է: Գյուղին տրվելիք ընդհանուր վարկերը նախորդ Գյուղաբանկի կողմից գնաժողովում են ըստ գավառների, շրջանների և ըստ նպատակների և ապա տրվում վարկային ընկերություններին՝ կարիք ունեցող կոոպերացիան գյուղացիության վարկավորելու համար:

Ըստ Գյուղաբանկի տվյալների հետևյալ նպատակային վարկերն են տված վարկային ընկերություններին՝ գյուղացիությանը բաշխելու:

**Վարկավորումն ըստ նպատակների.**

№	ՎԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ	1925—26 թ.		1926—27 թ.		1927—28 թ.	
		Փուլ	%	Փուլ	%	Փուլ	%
1	Բանվոր անասունի	179,5	8,8	246,6	8,3	336,6	8,3
2	Յեղջուրավոր անասունի	45,3	2,2	194,1	6,6	295,0	7,3
3	Մեքենայացման	444,7	21,9	435,8	14,7	499,7	12,4
4	Այգեգործական	356,2	17,5	422,0	14,2	325,8	8,1
5	Կաթնատնտեսության	314,7	15,5	726,3	24,5	448,2	11,1
6	Մեկյուրատիվ և հողաշինարարություն	31,1	1,5	100,8	3,4	538,8	13,4
7	Դաշտավարության	283,8	14,7	167,0	5,6	529,5	13,1
8	Ծխախոտագործական	220,2	10,8	189,1	6,4	127,5	3,2
9	Շերամապահության	109,8	5,4	77,3	2,6	155,5	3,8
10	Մեղվաբուծության	34,0	1,7	36,9	1,2	5,2	0,1
11	Թռչնաբուծության	1,5	0,0	3,6	0,1	8,0	0,2
12	Վնասատուների գեմ պայթարելու	12,3	0,7	30,0	1,0	71,0	1,8
13	Չքավորական ֆոնդ	—	—	237,7	7,8	165,4	4,1
14	Այլ նպատակների	—	—	95,0	3,1	527,9	13,1
		2033,1	100,0	3030,2	100,0	4034,0	100,0
		100,0		145,7		198,4	

Այսպիսով Գյուղատնտեսության ընդհանուր գլխավոր կարիքների համար նպատակային վարկ է տրված: Վարկավորումը տարեց-տարի աճում է և 3-րդ տարում կրկնապատկվում է (198,4%): Վարկերի խոշոր տոկոսը յեղջուրավոր անասունի տրվում է անասունների գնման, գյուղատնտեսության մեքենայացման, և նրա գլխավոր ճյուղերին դարկ տալու նպատակով (այգեգործության, կաթնատնտեսության և դաշտավարության): Բամբակագործության համար տրվում է հատուկ վարկ Բամբակի մի գծով: Առա-

ջին տեղն է բունում մեկյուրատիվ աշխատանքների և հողաշինարարությունների վարկավորումը, վորը տարեց տարի ուժեղանում է: Պետք է ասել, վոր տրված վարկերից 50%-ից ավելին յերկարատե է:

**Ջեմատական ֆոնդ** 1926—27 թ. սկսած կոոպերատիվներին կից կազմակերպվում են հատուկ ֆոնդեր՝ զուտ չքավորներին վարկավորելու և կոոպերացիան յենթարկելու նպատակով: Այդ ֆոնդերը կազմվում են ոգուտներից և Գյուղաբանկի հատկացումներից: Այժմ Գյուղատնտեսության յանցում կա ոգուտներից կազմված մոտ 26.600 ա. չքավորական ֆոնդ (բացի այգեստանում նշանակված գումարից): Այդ ֆոնդը գլխավորապես գտնվում է այգեգործական կոոպերացիայի գծով՝ 10.800 ա., վարկային՝ 6356 ա. բամբակագործական՝ 6184 ա. և շերամապահական կոոպերատիվների գծով՝ 3070 ա.: Դժբաղտարար այժմ Լայպոնգյուղատնտեսում չկա այդ ֆոնդերի գործադրման ստույգ պատկերը: Անհրաժեշտ է ունենալ սպասարիչ տեղեկություններ, թե ինչքան չքավոր անտնտեսություններ են վարկավորվել այդ ֆոնդից և ինչ նպատակով, ինչքան չքավոր անտնտեսություններ են կոոպերացիան, նրանց տնտեսական դրությունը և այլն: Չքավորների վարկավորման հարցը (թե չքավորական ֆոնդից և թե այլ նպատակային վարկերից) պետք է առաջնակարգ տեղը գրավի Գյուղատնտեսության աշխատանքներում, մինչդեռ պատշաճ ուշադրություն չի դարձվում այդ աշխատանքներին:

**Վարկային կարգապահության հարցը** Այստեղ պետք է շեշտել, վոր վարկային ընկերությունները անշուշտ են կիրառել վարկավորումը ըստ վերոնշյալ նպատակների: Հրահանգչական հետազոտությունը պարզում է, վոր շատ կոոպերատիվներ կատարել են անթույլատրելի շեղումներ, վոր համապատասխան իր շրջանի եկամտիկային: Այդ յերեվույթը խոշոր նշանակություն ունի և բացասական կերպով է անդրադառնում մեր պլանային աշխատանքների վրա՝ գյուղատնտեսության այս կամ այն դարգացման ուղղություն տալու գործում: Յեկ յեթե սրան ավելացնենք նաև այն, վոր կոոպերացիան գյուղացիություն իր հերթին վարկը անշուշտ չի ոգտագործում տրված նպատակին, ապա միանգամայն պարզ կլինի, վոր գյուղատնտեսության դարգացումը վորոշ հոնով տանելու գործը բավականաչափ դժվարանում է: Պետք է խիստ կերպով կիրառվի վարկային կարգապահությունը, պետք է տեղերում հսկողությունը ուժեղացնել, վորպեսզի վարկերը ոգտագործվեն տրված նպատակին:

**Ժամկետանց վարկերը** Մյուս եյական բացը վարկավորման գործում՝ դա ժամկետանց վարկերի խոշոր տոկոսն է, վորպիսի հանգամանքը նույնպես խախտում է վարկային կարգապահությունը: Վարկերը պետք է դասավորել այնպես, վոր հնարավոր լինի դրանց մաքսիմալ (ամենալայն) չափով ոգագործումը: Ժամկետաների խախտումը միանգամայն դժվարեցնում է վարկերի մաքսիմալ ոգտագործումը:

1925/26 թ. ժամկետանց փոխառվությունները կազմել են տրված փոխառվությունների 1,4%, 1926/27 թ. այդ տոկոսը բարձրացել է 6,1-ի, իսկ 27/28 թ. 9,5 %:



**Վարկի սոցիալա-**

**կան ուղղութիւնը** գույն հարցերից մեկը համարվում է՝ անդամների տնտեսութեան բարելավման և զարգացման նպատակով նրանց փոխառութեանը տալն՝ ըստ յուրաքանչյուրի սոցիալական դրութեան:

Բարձր որդանների գերեկտիվների համաձայն, փոխառութեաններն առաջին հերթին պետք է տրվեն չքավոր և աղքատ միջակ տնտեսութեաններին:

Տեսնենք, թե ինչպես է ընթացել Գյուղկոոպերացիայի աշխատանքը (հատկապես վարկային կոոպերացիայի) փոխառութեանների բաշխման ուղղութեամբ: Այս աշխատանքը բնութագրվում է հետևյալ աղյուսակով:

№№ ը/կ	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐՅԱՆ	Նպաստ- ված տնտե- սութ. թիվը	Փոխառու- թյան ամա- ցած տնտե- սութ. թիվը	0/0- ընդ որում	Ստացված փոխառու- թյան գու- մարտը	Ստացող մեկ տնտե- սութեանը գումարն է
1	Թույլ տնտեսութ.	7059	4253	60,2	282610	66—50
2	Միջակ ,	16194	10755	65,8	727872	67—70
3	Ուժեղ ,	1261	722	57,3	71881	98—20
	Ընդամենը	24514	15730	64 2	1082363	68—80

Ճիշտ է, փոխառութեան ստացող տնտեսութեաններից թույլ և միջակ տնտեսութեանները տալիս են բարձր տոկոս, իսկ ուժեղները (60,2% 65,8% և 57,3%) բայց ամեն մի ուժեղ տնտեսութեան ստացել է շատ ավելի քան թույլ կամ միջակ տնտեսութեաններից ամեն մեկը (66 ու 50 կ., 67 ու 70 կ. և 98 ու 20 կ.): Դրա հետևանքով ուժեղ տնտեսութեանները ստացել են 6,6%: Այդ աղյուսակը պարզ ցույց է տալիս, Վոր փոխառու-  
թեանների բաշխումը կատարվել է վոչ ուղիղ և դա մեր աշխատանքի զըլ-  
խավոր թերութեանն է յեղել անցյալում:

Հիմնովին սխալ համարելով ուժեղ տնտեսութեաններին փոխառութեան տալը, վոր մեր քաղաքականութեան ազավազումն է, այնուամենայնիվ պետք է արձանագրել, վոր Գյուղկոոպերացիայի կազմակերպման սկզբնական շրջանում այսպիսի թերութեաններ անխուսափելի էին այն պատճառով, վոր մի շարք վարկային ընկերութեաններ ուղիղ վարկային քաղաքականութեան չեն վարել, միանգամայն չհասկանալով այդ առթիվ մեր գծած քաղաքականութեան էությունը: Բացի այդ լիակատար պարզ հրահանգ չի տրված այդ մասին, վորի հետևանքով առաջ են յեղել այդպիսի խոշոր ազավազումներ:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր մի շարք ընկերութեաններ չեն ոգտա-  
գործել նաև իրենց ունեցած չքավորական ֆոնդերը, վորնց նպատակն է կոոպերացման յենթարկել և վարկավորել չքավոր տնտեսութեաններին: Պետք է մտտիկ ապագայում միանգամայն վերջ տալ այդ հանցագործու-  
թեան: Մեր բոլոր միջոցները պետք է ուղղված լինեն չքավոր և միջակ տնտեսութեանների բարձրացման ու վերակառուցման նպատակին:

Հրահանգչական ավյալներից պարզ յերևում է, վոր 1926—27 թ. և 27/28 թ. փոխառութեանների սոցիալական ուղղութեանը վորոշ բավա-  
բար պատկեր է ներկայացնում: Ուրիշ կերպ էլ չեր կարող լինել, վոր ուժե-  
տե վերջին տարիներում վարկային ընկերութեաններում կազմված են չքա-

վորական ֆոնդեր՝ Գյուղականից և վարկային ընկերութեանների ստացած ոգուտներից: Այդ ֆոնդը չքավորների հատուկ վարկավորման համար է, բայց այդ, դրյություն ունի նաև չքավորների կոոպերացման ֆոնդ, վորից մուծվում են չքավորների վայրը և կոոպերացման յենթարկում նրանց այն պայմանով, վոր հետագայում չքավորները հնաբավորին չափ մուծեն իրենց վայրը:

Այսպիսով կոոպերացված մասսայի մեջ չքավորների տեսակարար կշիռը բավական ուժեղացած պետք է համարել:

**Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**

**Գյուղի մեքենայա-  
ցումը** Գյուղական տնտեսութեան վերակառուցման հիմնական նախապայմանը, վորին ձգտում է գյուղատնտեսական կոոպերացիան՝ թե իր կազմակերպչական և թե տնտեսա-  
կան գործնեյութեամբ—գյուղի մեքենայացման, կամ ավելի ճիշտն ասած՝ գյուղատնտեսութեան արտադրութեան մեքենայացման խնդիրն է:

Չնայած այդ հարցով ավելի լայն ծավալով դրադում է նաև Հող-  
մողկումաբը, վորի հետ Գյուղատնտեսական կոոպերացիան մշտապես հա-  
մաձայնեցնում է իր նախազծերն ու ծրագրերը, սակայն գյուղական տըն-  
տեսութեան գյուղատնտեսական մեքենաներով և գործիքներով անմիջա-  
կանորեն լավարարելու ամբողջ աշխատանքն ընթանում է Գյուղկոոպերա-  
ցիայի գծով, վորը և փաստորեն մատակարարում է գյուղին:

Սուշոր նշանակութեան տալով գյուղի մեքենայացման խնդիրն, վորը հարթում է դեպի գյուղացիական մանր տնտեսութեանների կոլեկտիվա-  
ցումն տանող ուղին, Հայգյուղկոոպն իր յուրաքանչյուր տարվա մատա-  
կարարման գործառնութեանների ծրագրերը կազմելիս ղեկավարվել է մի հիմնական նպատակով, այն է՝ մեքենայացումը կենսագործել այնպես, վոր-  
պեսզի մեքենան ծառայի գյուղի չքավոր—միջակ տարրերին և ազատի նրանց կուլակի տնտեսական գերազգեցութեանից:

Հարկավ, այդ աշխատանքների ընթացքում նկատվել են խոշոր սխալ-  
ներ, վոր կատարվել են մեքենան բացառապես այդ նպատակին ոգտագոր-  
ծել չկարեցող մի շարք կոոպերատիվների կողմից, վորոնք հայտնաբ-  
րել են միանգամայն անթույլատրելի վերաբերմունք գյուղգործիքների և մե-  
քենաների բաշխման գործում:

Այն ժամանակ, յերբ մեքենայացումը դուտ նպատակ ունի բարձրա-  
ցնել գյուղի չքավոր և միջակ տնտեսութեանները, գյուղգործիքների և մեքենաների մաս հինգ տոկոսը անցել է կուլակների ձեռքը: Հետագա-  
յում մեր քաղաքականութեան հիմնական գծից շեղվողները պետք է յեն-  
թարկվեն ամենախիստ պատասխանավորութեան, վորպես կուլակային և կապիտալիստական տնտեսութեանների հովանավորողների: Գյուղմեքե-  
նաները և գործիքները պետք է ծառայեն բացառապես չքավոր և միջակ գյուղացիութեան:

1925 թ. առաջին անգամ ձեռնամուխ լինելով մատակարարման գոր-



ծառնությունները, Գյուղատնտեսական կոոպերացիան յուրաքանչյուր տարի ավելացրել է այդ ոպերացիաների շրջանառությունը:

**Մասակարարում** Հաշվետու յերկու տարվա ընթացքում գլխավոր ապրանքների մատակարարման գործառնությունների զարգացման պատկերն ընդհանուր գումարով (հազար ուր.) տալիս է հետևյալ աղյուսակը.

№	ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	1925 - 26 թ.		1926 - 27 թ.		Աճման կամ իջեցման %
		Բացարձակ թիվ	%	Բացարձակ թիվ	%	
1.	Տրակտորներ, միացման գործիքներով և պահեստի մասերով.	80,0	21,0	165,0	12,1	+106,3
2.	Գյուղատնտեսական գործիքներ և այլ մեքենաներ.	120,0	51,5	180,0	13,2	+50,0
3.	Զանազան գյուղատնտեսական ինստրումենտ.	97,5	25,6	85,0	6,2	-12,8
4.	Վնասատուների դեմ պայքարելու միջոցներ.	4,0	1,0	241,0	17,6	+5925,0
5.	Սերմորայք.	33,5	8,8	35,0	2,5	+4,5
6.	Ալյուր, թեփ և քուսպ.	—	—	364,0	26,6	—
7.	Յերկաթ—յերկաթամետաղ.	46,0	13,1	250,0	18,3	+443,5
8.	Այլ	—	—	48,8	3,6	—
Ընդամենը		381,0	100,0	1369,4	100,0	+359,5

Այս աղյուսակից պետք է հետևյալ յիզրակացությունները հանել. ա) Հայգյուղկոոպի մատակարարման գործառնությունների յերկրորդ տարում գյուղի մատակարարումը մոտավորապես քառապատկել է (ավելացել է 359,5%): Սա ցույց է տալիս նախ՝ գյուղատնտեսական մեքենաների և կատարելագործված գործիքների խոշոր կարիքը մեր գյուղում և յերկրորդ՝ այն մեծ նշանակությունը, վոր Հայգյուղկոոպը տալիս է գյուղի մեքենայացման, բ) 1925—26 տարում գյուղատնտեսական մեքենաների և գործիքների տեսակարար կշիռը մատակարարման ապրանքաշրջանառության մեջ յիզել է ամենաբարձրը (31,5%), սակայն հաջորդ տարում ապրանքների այդ խումբն իր առաջին տեղը յիջում է սպառողական ապրանքներին (ալյուր, թեփ, քուսպ), վորպիսին ամբողջովին գնում է Պանրյուղկենտրոնի գծով՝ Կաթնատնտեսություններին մատակարարելու համար: Համենայն դեպս գյուղատնտեսական մեքենաների աճումն ավելացել է 50%-ով՝ նախորդ տարվա համեմատությամբ. յ) տրակտորների մատակարարումն աճում է յերկու անգամից ավել, թեև տրակտորների տեսակարար կշիռը շրջանառության մեջ 21,0%-ից իջնում է մինչև 12,4%: Պետք է հիշատակել, վոր ըստ տարեկան և հնգամյա հեռանկարային ծրագրի,

Հայգյուղկոոպը նախատեսել է ուժեղացնել տրակտորների ներմուծումն այն հաշվով, վորպեսզի աստիճանաբար մեքենայացվի Հայաստանի նախալեռնային և դաշտային շրջանների վարելահողերի հերկումը: Այդ ծրագիրը կազմելիս հաշվի յե առնված տրակտորների տարեկան հնացման և իսպառ անպետքացման տոկոսը, ղ) առաջին յերեք յամրի ապրանքների տեսակարար կշիռը 1925, 26 թ. 78,1% -ից իջնում է 31,5%-ի՝ 1926—27 թ. նկատի առնելով, վոր գյուղի մեքենայացման հիմքը հանդիսանում է այդ յերեք յամրերի ապրանքների մատակարարումը, պետք է այդ յերեռոյթը վորակավորել վորպես թերություն և հետադայում անպայմանորեն ուժեղացնել այդ ապրանքների տեսակարար կշիռը. յե) Գյուղական տնտեսության փնասատուների դեմ բուժման միջոցների յամրի ապրանքները (ծծումբ, արջասպ և այլն) 1925—26 թ. շրջանառության մեջ չնչին տեղ են բռնում (1,0%), իսկ 1926—27 թվին խոշոր աճում են տալիս և շրջանառության մեջ գրավում են յերրորդ տեղը (17,6%):

Այդ յամրի ապրանքներն առանձնապես անհրաժեշտ են մեր գյուղատնտեսության համար, վորը պետք է տարեց տարի ավելացնի գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, հետևապես անհրաժեշտ է փնասատուների և բնության անբարեհաջող յիրերոյթների դեմ ձեռք առնել կանխակալ միջոցներ:

Գյուղատնտեսական կոոպերացիան շահագրգոված է գյուղատնտեսության արտադրական պրոցեսների ինդուստրացմամբ. նպատակ ունենալով ավելի շատ գյուղատնտեսական արտադրանքներ ստանալու, ուստի և միանգամայն հասկանալի յե այդ յամրի ապրանքներով գյուղին բավարարելու գործի ուժեղացումը:

**Բաժնած գյուղգործիքների յեկ Մեքենաների տեսակները** Բացի ընդհանուր արժեքից և գյուղգործիքների ու մեքենաների յամբավորումներից, հետաքրքիր է նաև, թե ինչպիսի գյուղգործիքներ և մեքենաներ է մատակարարվել գյուղին:

Այդ մասին համապատասխան տվյալներ բերվում են հետևյալ աղյուսակում.

№№	Գյուղգործիքների և մեքենաների անունը.	1925 - 26 թ.	1926 - 27 թ.	Աճումը %
1.	Գուլթաններ դանազան	260	1796	590,8
2.	Փոցիս «Զիգ-զագ»	—	50	—
3.	Կոլտիվատոր ձեռքի	50	50	—
4.	» ձիու	30	—	—
5.	Շարքացան հացահատիկի	—	20	—
6.	» բամբակի	—	30	—
7.	Ափսեավոր փոցիս	5	—	—
8.	Բքատու (ОКУЧНИКИ)	—	35	—
9.	Տրիերներ	—	55	—
10.	Բամհարներ	—	300	—
11.	Սոսհարներ	5	15	200,0
12.	Ձիափոցիս	10	10	—
13.	Սայլ յերկու ձիու	—	31	—
14.	Տրակտորներ	31	44	41,9
15.	Սոտի մամուլ	—	4	—
16.	Սրսկիչ մեքենաներ	50	400	700,0
17.	Փուքս ծծմբի	50	400	700,0



1926—27 թ. անհամեմատ ավելի շատ գյուղգործիքներ և մատակարարվել գյուղին, քան 1925—26 թ.: Մի շարք գյուղգործիքների մատակարարումն սկսվել է նույնիսկ 1926—27 թ., ինչպիսին են՝ փոցիս «Զիզգագ», շարքացան, բքատու, արիերներ, քամհարներ և այլն: Մյուս կողմից կան այնպիսի գործիքներ, վորոնք մատակարարված են գյուղին 1925—26 թ., իսկ հաջորդ տարում Հայգյուղկոտպը ցանցից պատվերներ չստանալու պատճառով դադարեցրել է ձիու կուլտիվատորների և ավսեափոր փոցիսերի մատակարարումը: Այս անգամ մատակարարման բաժինը ձգտել է մատակարարումն ավելի հարմարեցնել թե տեղական, հողի, կլիմայական և այլ պայմաններին և թե ցանցի պահանջներին:

**Ապրանքների Մեքսագործերը** Մատակարարման գործառնությունների ընթացքի և ստորին ցանցի կողմից այս կամ այն խմբի ապրանքների գնման պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

№	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՍԲԵՐԸ.	Հ ա ղ ա ր ա ու ր լ ս Վ.				0-ը գումարին
		1925—26 թ.		1926—27 թ.		
		Մնացորդ	0-ը ներմուծ. գումարին	Մնացորդ	0-ը ներմուծման գումարին	
1.	Տրակտորներ՝ միացման գործիքներով և պահեստի մասերով.	10,0	11,1	50,0	24,3	18,4
2.	Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ.	10,8	7,7	68,0	28,6	25,0
3.	Զանազան գյուղատնտեսական ինվենտար.	47,5	2,5	41,0	52,2	15,0
4.	Վնասատուների դեմ պայքարելու միջոցներ.	1,0	20,0	10,0	4,0	3,9
5.	Սերմորայք.	12,5	27,8	25,0	52,6	9,2
6.	Ալյուր, թեփ, քուսպ.	23,9	—	22,4	6,2	8,2
7.	Յերկաթ և յերկաթամեղաղ.	4,0	8,0	50,0	17,0	18,4
8.	Այլ	—	—	5,3	9,8	1,9
Ընդամենը		108,9	23,4	271,7	17,7	100,0

Ներկա աղյուսակի տվյալները պետք է նպատակափոր համարել այն պատճառով, վոր պահասել է 1926—27 թ. ներմուծման ապրանքների մնացորդները 1925—26 թ. համեմատությամբ (17,7% ընդդեմ 23,4%):

Մատակարարման աշխատանքների սացիոնալացումը պահանջում է վորպեսզի Հայգյուղկոտպը հետադադրվի պահասեցնի ապրանքների մնացորդը, վորպես կապիտալների վոչ նպատակահարմար ներդրում՝ առանց տնտեսավարական համապատասխան ողտագործման: Ուշադրություն դարձնելով աղյուսակի մանրաստույթյանը, տեսնում ենք, վոր ինչպես 1925—26 թ. վերջում, նույնպես և 26/27 թ. վերջում խոշոր մնացորդներ են տալիս զանազան գյուղատնտեսական ինվենտար կոչվող խմբի ապ-

րանքները (32,5% և 52,2% հանդեպ դրանց ներմուծման) և սերմորայքը (27,8% և 52,6%): Այս հանդամանքը պետք է բացատրել նաև մատակարարման բաժնի կողմից ապրանքների անհաջող ընտրություններ: Ըստ վորում Հայգյուղկոտպը Գյուղընկից ստացել է մի շարք գյուղգործիքներ և մեքենաներ, վորոնք մեր գյուղատնտեսական պայմաններին համապատասխան չլինելու պատճառով չեն վաճառվել: Վորպես նոր գործ, ըստ յերեվույթին Հայգյուղկոտպը չի կարողացել բավականաչափ ուսումնասիրել տեղական պայմանները, ուր ողտագործվում են այս կամ այն տեսակի և կամ մարկայի գյուղատնտեսական գործիքները: Իսկ սերմորայքի վերաբերյալ պետք է ասել, վոր գրանք այնքան էլ բավարակ դուրս չեկան, վորի հետևանքով վորոշից չվաճառել այլ սերմորայքը:

Առաջին խմբի ապրանքների մնացորդները վերաբերում են զլխավորապես արակտորների պահեստի մասերին և այլ միացման գործիքներին, վորոնց կարիք չի զգացվում արակտորների գնողների կողմից: Մյուս տեսակի ապրանքների մնացորդներն ընդհանուր առմամբ կարելի չէ համարել բավարար՝ համեմատած դրանց ներմուծվածի քանակին:

Վերոհիշյալ յերկու աղյուսակների համադրումից պարզվում է, վոր ապրանքների նշանակալից մնացորդներն ազդում են մատակարարման շրջանառությունից գումարի վրա: Պետք է ստորադասարար նախապատրաստել գյուղական ազգաբնակչության՝ վործադրելու կատարելագործված գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, ինչպես և ստորադասարար բարձրացնել գյուղացիության տնտեսական բարեկեցությունը և վճարունակությունը:

Այսպիսով մատնանշվում է գյուղին անհրաժեշտ մատակարարման ապրանքներով բավարարելու կատարյալ նպատակահարմար և անհրաժեշտ աճումն,—այն ապրանքների, վորոնք Հայգյուղկոտպը գնել է ԽՍՀՄ արդյունաբերական կենտրոններից և արտասահմանից (արակտորներ, արիերներ և այլն):

Սակայն գյուղի մեքենայացման գործում Գյուղատնտեսական կոտպերացիան խոշոր բացեր և թերություններ ունի, վորոնց վրա անհրաժեշտ է կանգ առնել համառոտ կերպով:

**Մասակառարման աշխատանքների քերուքյուցները** Յուրաքանչյուր տարի Հայգյուղկոտպը համաձայն ստորին ցանցի ներկայացրած պահանջների, կազմում է գյուղի մատակարարման ծրագիրը՝ այդպիսին համաձայնեցնելով Հոգժողկո-

մատի մեքենայացման բաժնի հետ: Ստորին ցանցը բավականին անկանոն է վոչ ժամանակին և ներկայացնում իր պահանջները: Այդ պատճառով, Հայգյուղկոտպը կազմում է ծրագիրը հիմք ունենալով մասամբ ներկայացված պահանջները, մասամբ իր փորրիկ փորձը և գյուղատնտեսական մեքենաներով ու գործիքներով այս կամ այն շրջանը հագեցված լինելու ստորադասարար մասին ունեցած տվյալները: Այսպիսով կազմված ծրագիրը շտապ կարգով ուղարկվում է Զահեսկմաշին և Համառուսական մետաղաձուլական Սինդիկատին ու համապատասխան պայմանագրեր կընքվում նրանց հետ: Պարզ է, վոր այդ ծրագիրը լրիվ կերպով չի արտահայտի մեքենաների ու գործիքների այս կամ այն տեսակի վերաբերյալ տեղական պահանջները: Յերբեմն չափի ամենաչնչին անհամապատասխան



լինելը, տեսակի կամ մարկայի ամենաչնչին տարբերությունը միանգամայն անպետք և դարձնում ավյալ մեքենայի կամ գործիքի ոգտագործումը՝ ավյալ շրշանի պայմաններում:

**Պրագրայնուքի անհրաժեշտությունը առևտրային կառուցման համար**

Այս իսկ պատճառով արհրաժեշտ և կիրառելի պլանային սկզբունքը: Յուրաքանչյուր տարի, Հայգյուղկոտայի մատակարարման բաժնի կողմից սահմանված վորոշ ժամկետին, մատակարարման գործառնությունը վրադրող բոլոր կոոպերատիվները պետք և կազմեն անհրաժեշտ քանակություն մեքենայի, մեքենաների և մեքենաների, սերմացանների և ֆլասատուների դեմ պայքարելու միջոցների գնման իրենց տարեկան ծրարները, վորոնք պետք և համաձայնեցվին տեղական գյուղատնտեսի հետ և հաստատվեն կոոպերատիվի վարչություն կողմից: Հայգյուղկոտայը համաձայն այդ ծրագրերի, և ձեռքի տակ ունենալով Հայաստանի գանազան գավառներում և շրջաններում յեղած գանազան գործիքների ու մեքենաների վերաբերյալ ընդհանուր ավյալները ու ապա նախորդ տարիների մատակարարման չափի վերաբերյալ մատակարարման բաժնի ավյալները, աչքի առաջ ունենալով իր ֆինանսական հնարավորությունը՝ կազմում և մատակարարման լրիվ ծրագրեր: Վերջում այդ ծրագրերը պլանային հանձնաժողովի կողմից քննության առնվելուց ու Հողմողկոմատի համապատասխան բաժնի հետ համաձայնեցնելուց հետո, ներկայացվում և Հայգյուղկոտայի վարչության հաստատման: Արդևն այս հաստատումից հետո հնարավոր և միայն համապատասխան պայմանագրեր կնքել «Զուկուլմաշի» և այլ մատակարարող կազմակերպությունների հետ:

Այժմ հասկանալի չէ, վոր աշխատանքի ծրագրայնությունը հենց սկզբից խախտվում և ստորին ցանցի կողմից, վորպիսին անկանոնություն և մտցնում հետագա ամբողջ աշխատանքների մեջ:

Պետք և թիրություն համարել նաև Գյուղկոտայերացիայի մատակարարման աշխատանքների մասնակի ապակենտրոնացումը: Մինչ որս հատուկ Գյուղատնտեսական միությունները նույնպես վրադրել են մատակարարման գործառնություններով: Նրանք իրենց ստորին ցանցին մատակարարում էին անհրաժեշտ մասեր ինվենտար և սպառողական ապրանքներ (շիշ, խցան, ալյուր, թեփ, քուսպ և այլն): Նկատված են նույնպես առանց Հայգյուղկոտայի գիտություն առանձին ստորին կոոպերատիվների կողմից մատակարարման ապրանքների ներմուծման դեպքեր:

Մատակարարման գործի ուղղորդման համար անհրաժեշտ և մատակարարման վողջ գործառնությունները կենտրոնացնել Հայգյուղկոտայում, վորն արդեն կուտակել և քաղականին փորձառություն և համապատասխան հարմարություններ ունի (պահեստ, խանութ և այլն): Հատուկ Միությունները, ինչպես և ստորին ցանցը, պետք և ժամանակին իրենց պահանջները ներկայացնեն Հայգյուղկոտայ, վորը շահագրգռված Միության ներկայացրեցչի մասնակցությունը պլանային հանձնաժողովի քննության միջոցին իր ծրագրի հետ այդ պահանջները կապակցելուց հետո, համապատասխան պայմանագրեր և կնքում: Միությունների պահանջներում նշված մատակարարման ապրանքները մատակարարելու մասին:

**Տրակտորի գացիա**

Մատակարարման ծրագրերը կազմելիս առանձին խնամքով և կազմվում տրակտորի գացիայի ծրագրերը: Տրակտորը հանդիսանում և անհրաժեշտ մեքենան, վորովհետև գա մեքենայացնում և գյուղատնտեսություն ամենապոզիտիվ և յերկարատև աշխատանքը—հերկը, վորի հետևանքով իր շուրջն և խմբավորում գյուղի չքավոր-միջակ մասսաները: Այսպիսով տրակտորը հանդիսանում և չքավոր տնտեսությունների կուլիկատիվացման միջոց՝ առաջին հերթին տրակտորային կամ մեքենագոտագործման ընկերությունների ձեռով: Սակայն, դեպի տրակտորներն յերած անկարող վերաբերմունքը զգալիորեն իջեցնում և զրա աշխատանքների նշանակությունը:

Տրակտորների աշխատանքների հաշվառման, ինչպես և տրակտորով հերկված մի դեսյատին հողի ինքնարժեքը հաշվարկելու նպատակով մշակված են համապատասխան գրքերի ձևեր և ուղարկված տրակտոր ունեցող բոլոր կոոպերատիվ կազմակերպություններին՝ ամենորյա հաշվառման համար: Բացի դրանից, վորոշ ձևով յուրաքանչյուր ամիս տեղեկություններ են ստացվում տրակտորների կատարած աշխատանքների մասին: Դժբաղտարար մի շարք կոոպերատիվներ անդիտանալով այդ հաշվառման վողջ կարևորությունը՝ ինքնազուլիս չեն ներկայացնում:

Միանգամայն անթույլատրելի համարելով այնպիսի տնտեսական խոշոր նշանակություն ունեցող հարցի վերաբերյալ Հայգյուղկոտայի շրջաբերականների պահանջների խախտումը, համենայն դեպս ավելորդ չենք համարում մեր ունեցած լրիվ ավյալների հիման վրա սալ տրակտորների աշխատանքների վորոշ արդյունքները:

Բամբակագործական կոոպերացիայի 62 տրակտորների աշխատանքների մասին ավյալներից պարզվում են, վոր միջին հաշվով առ 1-ն հուլիսի 28 թ. յուրաքանչյուր տրակտոր հերկել և 43,5 դեսյատին վարելահող, վորից 22,4<sup>0</sup>/<sub>0</sub> վողջ անդամների վարելահողը: Միջին հաշվով մի դեսյատին հերկելու համար ծախսված և 19 ու 61 կ. ըստ վորում ծախսերի զլխավոր արժեքը կազմում են՝ հավթամթերքները—33,7<sup>0</sup>/<sub>0</sub>, վերանորոգում—27,3<sup>0</sup>/<sub>0</sub> և տրակտորիսանների աշխատավարձը—25,4<sup>0</sup>/<sub>0</sub>: Ընդհանուր մուտքը ամեն մի դեսյատինից կազմում և 19 ու 16 կող. (դեսյատինից 18 ուրը, անդամների համար և 22 ուրը լին վողջ անդամների համար), այսինքն կոոպերացիան յուրաքանչյուր դեսյատին հերկից ֆլասվում և 45 կող: Վերանորոգման ծախքերի և աշխատավարձի գումարները խոշոր են զլխավորապես այն պատճառով, վոր տրակտորները նպատակահարմար ձևով չեն ոգտագործվել. բոլորովին վողջ հարգելի պատճառներով տրակտորները կանգ են առել կամ վերանորոգման համար գանվել են շոֆերի մոտ (մոտագա վերանորոգման կայան չունենալու պատճառով): Մինչդեռ տրակտորի անգործության շրջանի բոլոր ծախքերը (բացի հավթամթերքից) ծանր կերպով անդրադառնում են տրակտորի ինքնարժեքի վրա:

Գյուղկոտայերացիայի մյուս տնտեսներում գործն ավելի վատթար դրություն մեջ և: Վարկային ընկերություններում (13 տրակտորների ավյալներով) մի դեսյատինի հերկման ինքնարժեքը հավասար և 36 ու 98 կող. ըստ վորում աշխատավարձը և վերանորոգման ծախքերը (պահեստի մասերի արժեքի հետ միասին) կազմում են այդ ծախքի 72,9<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Այստեղ միանգամայն աչքի չէ ընկնում բացարձակ անտնտեսավար վերաբերմունքը, այլապես չեր կարող այսպիսի չափազանց մեծ ծախքեր լինել:



**Տրակտորների աշխատանքների քերու-  
րյունները**

Տեղերում կատարված հրահանգչական հե-  
տադասումները հայտնաբերում են հետևյալ թի-  
րույունները, վերոնշյալ հաճախ տրակտորների  
աշխատանքները դարձնում են անշահավետ, վերը

խոշոր վնասներ են հասցնում մի քանի կոոպերատիվների:

Տրակտորներն առաջին հերթին հերկում են իրենց անդամների հողերը  
սահմանված վարձով (դեպոսիտային), իսկ կոոպերատիվի անդամների բոլոր  
վարելահողերի հերկն ավարտելուց հետո, ավելի բարձր վարձատրությամբ  
հերկվում են նաև վոչ անդամների հողերը (12—18 սուր. անդամների հա-  
մար և 20—24 սուր. վոչ անդամների համար): Մի դեպոսիտային հողի հերկ-  
ման արժեքը սահմանակիս հաճախ ուշադրություն է հանում ամսորա-  
դրացի ծախսերը, վրի հետևանքով հերկելու պակաս վարձ և սահմանվում,  
և տարվա վերջին պարզվում է, վոր վնաս են բերել տրակտորների աշխա-  
տանքները:

Նման թիրույունները հաճախ արդյունք են վոչ բավարար հրա-  
հանգչական կազմ ունենալու, քանի վոր հրահանգիչները հնարավորու-  
թյուն չեն ունենում ժամանակին լինել իրենց շրջանի բոլոր կոոպերատիվ-  
ներում և տրակտորների աշխատանքների վերաբերյալ թեկուզ ամենատար-  
բական ցուցմունքները տալ: Մյուս կողմից տրակտորիստների վոչ բավա-  
րար կազմը և նրանց անբարեխիղճ վերաբերմունքը նույնպես պատճառ են  
դառնում տրակտորների անշահավետության:

Փորձը ցույց տվեց, վոր անհրաժեշտ է նորից տրակտորիստների  
դասընթացներ բացել, ինչպես և ուշադրություն հետևել նրանց աշխա-  
տանքներին, իսկ տրակտորիստների կողմից անբարեխիղճ վերաբերմունք  
կամ ի չարը գործադրելու դեպքեր հայտնաբերելու ժամանակ՝ խիստ պա-  
տասխանատվությամբ յնթարկել նրանց: Տրակտորիստները հաճախ կանգ  
են առնում մի փոքրիկ մաս պակասելու կամ փչացնելու դեպքում (պտու-  
տակ չկա, կամ պորշներ կարգի չեն և այլն), կամ թե բավարար չափով  
նավթամթերքների (բենզին, յուղ և այլն) պաշար չլինելու պատճառով:

Յերևանում և Ղարաբաղում յեղած տրակտորների և գյուղատնտե-  
սական մեքենաների վերանորոգող յերկու արհեստանոցն ի հարկե չեն կա-  
րող սպասարկել զանազան գավառներում գտնված տրակտորներին:

Զնայած նրան, վոր զոյություն ունեցող տրակտորների արհեստա-  
նոցներն աշխատում են զեֆիցիտով, այնուամենայնիվ Հայկուղկոոպը  
ճրագրել է բացել ևս 3 նոր արհեստանոցներ (Եջմիածնում, Ղամարվում և  
Ստեփանավանում):

Տեղերում տրակտորների աշխատանքը կանոնավորելու, ինչպես և  
հաշվառումն ու հաշվետվությունը կարգավորելու համար մի շարք միջոցներ  
ձեռք առնելուց հետո, պետք է յենթադրել, վոր տրակտորների աշխատանք-  
ների տված պատկերը ցույց կտա ավելի անապահովությունը և կլրջեփորի  
տրակտորների աշխատանքների շահավետ լինելը, հետևապես և կպայցու-  
ցի գյուղացիական տնտեսությունների տրակտորացումն ավելի ցանցելու ան-  
հրաժեշտությունը:

**Վերագիր ծախսեր**

Մատակարարման գործառնություններն ու-  
ղեկցվում են խոշոր վերագիր ծախսերով, վորի  
հետևանքով Գյուղկոոպերացիան հնարավորու-

թյունից զրկվում է ունենալ իր նորմալ հավելուրդները, ուստի և հա-  
ճախակի վնասներ և կրում այդ գործառնություններից:

Ներկա աղյուսակը ցուցադրում է Գյուղատնտեսական Միություննե-  
րի կողմից 1926-27 թվին կրած վերագիր ծախսերի կազմն ու չափը:

№	ԾԱԽՔԵՐԻ ՀՈՒՎԱԾ- ՆԵՐՔ	Հայկուղկոոպը		Պանիրյուղկենտ		Այգիկոոպը	
		Գումար հազար ս.	%-ը գումար- ին	Գումար հազար ս.	%-ը գումար- ին	Գումար հազար ս.	%-ը գումար- ին
1	Փոխադրումն, բեռնելը և իջեցնելը	8,9	10,3	20,0	32,4	0,2	1,7
2	Յերկաթուղային ֆը- րախտ և կայար. ծախ.	54,5	62,9	36,0	58,3	11,6	96,6
3	Պակտորդ, փչացում և կորուստ	0,1	0,1	5,5	9,0	0,01	0,0
4	Փթատուրք, տեղական հարկեր և այլ ծախսեր	23,1	26,7	0,2	0,3	0,2	1,7
	Ընդամենը	86,6	100,0	61,7	10,0	12,0	100,0
	%-ը մատակարարման շրջանառ. նկատմամբ	10,8	—	17,0	—	2,6	—

Այս աղյուսակը թույլ է տալիս յեզրակացնելու, թե վորքան մեծ  
է մատակարարման շրջանառությունը, այնքան խոշոր է վերագիր ծախսե-  
րի բացարձակ թիվը, իսկ տոկոսը շրջանառության նկատմամբ՝ փոքր է:  
Այսպիսով վերագիր ծախսերի ամենամեծ տոկոսը տալիս է Այգիկոոպը  
(24,6%) վորն ավելի քիչ վերագիր ծախսեր և ունեցել (12,0 հազար ս.):

Այս փաստը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է մատակարարման  
աշխատանքները մի տեղում կենտրոնացնելու անհրաժեշտությունը, — ինչ-  
պես այս մասին նշված է վերևում:

Աղյուսակից հանդիլիք յերկրորդ կարևոր հետևումը վերաբերում է  
ծախսերի սարուկտորային: Ծախսերի ամենամեծ մասն ընկնում է յեր-  
կաթուղային և կայարանների ծախսերի վրա, վորը Հայկուղկոոպում կազ-  
մում է բոլոր վերագիր ծախսերի 62,9%, Պանիրյուղկենտում — 58,3%-ը,  
Այգիկոոպում — 96,6%-ը: Ծախսերի ամենաքիչ տոկոսն ընկնում է բնա-  
կան կորուստների վրա և ամենամեծ տոկոսը կազմում է Պանիրյուղկենտ-  
ում (5,5%): Սա բացատրվում է Պանիրյուղկենտում մատակարարման  
ապրանքների բնույթով, վորոնք բնահանրապես բնական կորուստների խո-  
շոր տոկոս են ունենում (ալյուր, թեփ և այլն): Փոխադրման ծախսերը  
նույնպես խոշոր տոկոս են կազմում Պանիրյուղկենտում: Սա բացա-  
տրվում է նրանով, վոր կաթնարտելները ցրված են համարյա բոլոր գա-  
վառներում և մատակարարման ապրանքները փոխադրումը կաթնարտել-  
ներին՝ թանգ և նստում:

Վերջացնելով Գյուղկոոպերացիայի մատակարարման աշխատանքների  
հիմնական մասերի համառոտ բնութագրումը, անհրաժեշտ է ցույց



տալ մի քանի միջոցներ, վորոնք կարող են հնարավորութիւն ստեղծել ավելի ընդարձակելու այդ ուղղութիւնը Գյուղատնտեսական աշխատանքները և ավելի լրիվ բավարարելու գյուղի պահանջները:

**Ֆինանսական բազայի անհրաժեշտութիւնը**

Մատակարարման գործառնութիւնները կատարվում են Գյուղատնտեսական բանկի կողմից արվող վարկային միջոցներով, այն ել վոչ բոլոր տեսակի մատակարարման ապրանքների համար:

Մատակարարման աշխատանքների համար անհրաժեշտ թափ և առողջ հիմունքներ ստեղծելու նպատակով, պետք և ուժեղացնել մատակարարման գործառնութիւնների ֆինանսավորումը: Այս ֆինանսավորումը պետք և համապատասխանի տեղերի պահանջներին և ընդհանրապես Հայգյուղտնտեսական ծրագրին:

Բացի դրանից, անհրաժեշտ և չվարկավորվող ապրանքների համար ընթացիկ տարվանից Հայգյուղտնտեսական կից ստեղծել հատուկ ֆոնդ, վորը կարող և գոյանալ սահմանված վորոշ մուծումներից, վորոնք մուծվելու յեն Հայգյուղտնտեսական անգամ և մատակարարման գործառնութիւններով գրազվող բոլոր կոոպերատիվ կազմակերպութիւնների կողմից:

Միայն այդ պայմաններով հնարավոր կլինի ընդարձակել գյուղին տարրերային աղաների դեմ պայքարելու միջոցների և կատարելագործված մեքենաների ու գործիքների մատակարարումը, վորոնց միջոցով և միայն հնարավոր վերակազմել և մեքենայացման յենթարկել բազմաթիվ գյուղացիական տնտեսութիւնները՝ դրանց կոլլեկտիվացման գործը արագացնելու համար:

**Գ. ՄԹԵՐՄԱՆ-ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Գյուղատնտեսական կոոպերացիայի և սակարար կեիւնը** Հանրապետութիւն տնտեսական կյանքում վերջին ժամանակներս Գյուղտնտեսական սկսել և բազմապատկուցելու համար պարագայը իր միջոցով ընդարձակելու մեծաքանակ վաճառքը, հետապետելու և ուժեղացնելու նրա տնտեսական կարողութիւնը ընդհանուր ապրանքաշրջանառութիւն մեջ: Նկատելի ունենալով այն ամուր բազան, վորի վրա կանգնած և Գյուղատնտեսական կոոպերացիան, պետութիւնը վերջին տարիներում հում նյութի համարյա ամբողջ միջոցները հանձնարարում և Գյուղտնտեսական աշխատանքների ընթացքում ամեն կերպ աշխատել և հալածել մասնավորին և գյուղացիական շուկայում նրա ունեցած դերը հնարավորութիւն սահմաններում հասցնել մինիմումի:

Հանրապետութիւն ապրանքաշրջանառութիւն մեջ Գյուղտնտեսական

ցիւղի ունեցած դերի և դրա գարգացման գինամիկայի մասին պատկերացում և տալիս հետեւյալ աղյուսակը:

**Միլիոն ուր.**

	1924-25 թ.		1925-26 թ.		1926-27 թ.		1928 թիվ (յենթար)	
	Բացարձակ թ.	%	Բացարձակ թ.	%	Բացարձակ թ.	%	Բացարձակ թ.	%
Ամբողջ ապրանքաշրջան.	56.6	100.0	76.30	134.8	91.7	162.0	115.3	203.7
նույն թիւում Գյուղտնտ.	1.3	100.0	9.1	—	16.8	—	24.8	—
%-ը ընդհանուրին	2.3	—	11.9	—	18.3	—	21.5	—
Գյուղատնտ. ապրանքաշր.	9.7	100.0	14.8	152.6	18.3	188.6	25.8	266.0
նույն թիւում Գյուղտնտ.	1.1	100.0	7.7	—	13.6	—	20.2	—
%-ը Գյուղատնտեսական	11.3	—	52.0	—	74.3	—	78.3	—

Ամենից առաջ աչքի յեն ընկնում թե ինչպես յերկու տարվա ընթացքում խիստ կերպով բարձրացել և Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւնը (2,3-ից մինչև 18.3%), ըստ վորում այդ կշիռն առանձնապես ուժեղացել և գյուղատնտեսական ապրանքաշրջանառութիւն մեջ (11,3-ից մինչև 74,3%): Այս հանգամանքը ազատացում և, վոր յերկրի գյուղատնտեսական ապրանքաշրջանառութիւնը գարգացել և ավելի զանդադորեն, քան Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւնը:

Բացի դրանից ազո սակը ցույց և տալիս, վոր նախորդ տարում Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւնը կազմում եր գյուղատնտեսական ապրանքաշրջանառութիւն մոտավորապես յերեք քառորդ մասը (74.3%):

Ծրագրով նախատեսվում և, վոր գյուղատնտեսական ապրանքների իրացման ընթացիկ սեղոնում Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւնը կրարձրանա մինչև յերկրի ընդհանուր ապրանքաշրջանառութիւն 24,8%-ը և նրա գյուղատնտեսական ապրանքաշրջանառութիւն մինչև 72,7%-ը:

Յերկրի գյուղատնտեսական ապրանքաշրջանառութիւնը պայմանավորված և գյուղատնտ. արտադրանքի և հում նյութերի ապրանքայնութիւն տուրի հետագա աճումով: Միջգյուղացիական ապրանքափոխանակութիւնը զգալիորեն ազոում և Գյուղատնտեսական հում նյութերի ապրանքային յեկրի վրա:

Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւն միջոցով ընդարձակելու համար հետաքրքիր և գյուղատնտեսական վորոշել, թե գյուղատնտեսական արտադրանքի վոր մասն և անցնում կոոպերացիայի գծով: Գյուղտնտեսական ապրանքաշրջանառութիւնը 1926-27 լրիվ գործառնական տարվա տվյալները, վոր ընդգրկում են 15 ամիս:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ	Աղյուսակը բնական նույն թիվը 25 26 թ.	Աղյուսակը վին թիվը	%	Աղյուսակը Գյուղատնտեսական պահպանության 27 28 թ.	Աղյուսակը վին թիվը 29 30 թ.
<b>1. Հողագործություն</b>	45984,0	8124,0	18,3	5966,8	70,8
նույն թվում					
ա. Այգեգործ. և զինեգործ.	4657,2	3221,0	69-1	1349,4	41,8
բ. Բամբակագործ.	4190,9	4065,0	97,0	4065,0	100,0
գ. Ծխախոտագործ.	235-6	128,6	55,0	44,1	34,3
դ. Գյուղատնտեսություն	36900,4	1009,4	2,8	508,3	50,6
<b>2. Անասնապահություն</b>	26717,2	7856,0	29,5	1773,9	22,6
նույն թվում					
ա. Կաթնատնտեսություն	13319,0	3006,7	22,6	1152,0	38,3
բ. Անասնապահություն (առանց կաթնատնտեսության)	11384,6	4068,3	35,7	297,2	7,3
գ. Մեղվաբուծություն	239,5	209-8	87,5	32,3	15,4
դ. Շերամապահություն	138,8	103,7	75,4	224,4	100,0
ե. Քոչվարություն	1635,3	467,5	28,6	68,0	14,5
Ը ն գ ա մ հ ն ը	72701,2	16275,0	22,4	7740,7	47,5

Պարզապես նկատվում է, վր Գյուղատնտեսություն ապրանքային արտադրանքի ամբողջ քանակից, վորը Հայկապոլսում գնահատում է 16.275.000 ուրբլի, (ներկայիս գներով) — Գյուղատնտեսության ընդգրկում է զրա մոտավորապես կեսը (47,5% կամ 7.740.700 ուրբլի): Գյուղատնտեսական արտադրանքի յերկու հիմնական խմբերից (հողագործություն և անասնապահություն), Գյուղատնտեսության միջով անցնում է մեծ մասամբ հողագործության արտադրանքը (70,8% ընդդեմ անասնապահության արտադրանքի 22,6%-ն), իսկ նրա (հողագործության) արտադրանքի ապրանքայինության աստիճանը համարյա յերկու անգամ ցածր է անասնապահության արտադրանքի ապրանքայինության աստիճանից (18,3% ընդդեմ 29,5%-ի): Այստեղ կարելի է պարզորեն յեղբակացնել, վոր Գյուղատնտեսության մեծ հեռանկարներ ունի զարգացնելու իր միջերման գործառնությունները — մասնավորապես անասնապահության արտադրանքի նկատմամբ: Յեղ իրոք, նա իր աշխատանքների ծրագրի մեջ մտցրել է հում կաշվեղենի միջերման և զգալիորեն ընդարձակել է ձվի, մեղրի և անասունների միջերման գործը: Անասնապահության ընդգրկումում Գյուղատնտեսության բավականին հեղ և մնացել թոչնատրուծական արտադրանքի (14,5%), մեղվաբուծական արտադրանքի (15,4%) և անասնաբուծական արտադրանքի — առանց կաթնարտադրանքի — (7,3%) միջերման գործում: Կաթնատնտեսության արտադրանքը նույնպես բավարար չափով չի ընդգրկվում Գյուղատնտեսության (Պանիր, յուղ, կենտրոնի) կողմից (38,3%):

Հողագործության ճյուղերից Գյուղատնտեսության ավելի թույլ է ընդգրկում ծխախոտագործության արտադրանքը, վոր կազմում է 34,3% և դաշտավարություն ու բանջարաբուծության արտադրանքը — 50,6% (հաց, կանաչեղեն և այլն):

**Որչեկեթվ պայմանները**

Պետք է հիշատակել, վոր գյուղատնտեսության այս կամ այն արտադրանքի ապրանքային մասի անբավարար ընդգրկումը Գյուղատնտեսության կողմից պայմանավորված են մի շարք պատճառներով, վորոնցից գերակշռողը հան-

դիսանում են՝ կանոնավորող մարմինների կողմից սահմանված գները, Ֆինանսների բացակայությունը, գյուղատնտեսական միջերման նախնական վերամշակման և ապրանքների վերամշակման համար արտադրական ձեռնարկությունների բացակայությունը և այլն, վորոնց վրա անհրաժեշտ չենք համարում մանրամասնորեն կանգ առնել:

Գները նկատմամբ պետք է ասել, վոր Գյուղատնտեսության հաճախակի իր միջերմանը կատարում է վնասներով, վորովհետև միջերման և բացման գները սահմանելիս հաշվի չի առնվում գյուղացիության նյութական շահագրգռումը և կալիուլացիայի այն տարրերը, վորոնք ընկնում են Միություն վրա:

Անհրաժեշտ է սահմանել ավելի ճկուն գներ, վորպեսզի հնարավոր լինի ավելի լրիվ կերպով ընդգրկել կոոպերատիվ տնտեսությունների միջերմանը և թույլ չտալ գրանք վաճառահանել գրտում մասնավորին:

Միջերմանների չափն ավելացնելու մի այլ արգելքը հանդիսանում է Գյուղատնտեսական կոոպերացիայում շրջանառու միջոցների բացակայությունը, վորի հետևանքով նկատվում է միջերմանների տապալման գեղքեր:

Պետք է հնարավորություն ստեղծել զրամական միջոցներով բավարարելու գյուղացուն՝ նրա կարիքի մոմենտում, վորպեսզի նա ստիպված չլինի ընկնել կուլակի ճանկերը, վորը միշտ էլ պատրաստ է ոգտագործել չքավորի կամ միջակի նյութական զմվար պայմանները՝ նրան ավելի շահագրգռելու համար:

Կանտրակտացիայի հիմունքներով գյուղացուն ժամանակին և հաճախակի արվող կանխավճարները նրան ավելի յեն մոտեցնում և կապում Գյուղատնտեսության:

Միջերման գործառնությունների յերբող արգելքը հանդիսանում է չորանոցների, պահեստների, արտադրական ձեռնարկությունների բացակայությունը, վորի հետևանքով հնարավոր չէ գյուղատնտեսական հում նյութերն ապրանքների վերամշակու համար պահել, չորացնել և մշակել հիշվածները: Այս հանգամանքը բավականին ազդում է արտադրանքի վորակին և անուղղակի կերպով իջեցնում է միջերմանների քանակը (ծխախոտ, խաղող, պտուղներ և այլն): Անհրաժեշտ է այդ նպատակի համար ուժեղացնել զրամական միջոցների ներգրումը, վորպիսին նախատեսված է Հայգյուղատնտեսության հնգամյա ծրագրում:

Այս բոլորից բացի, անհրաժեշտ է ծրագրային աշխատանքների համար ստեղծել համապատասխան պայմաններ, վորպեսզի Գյուղատնտեսության կարողանա գործել իր ծրագրի սահմաններում և տարվա կիսում կամ նույնիսկ վերջում չզրազվի նորանոր պատվերներով:

**Ապրանքաբանական** Գյուղատնտեսական կոոպերացիայի առանձին ուրբյան գիճամի- ողակների ապրանքաշրջանառությունը պարզացման և կան բս ողակների գրանում վաճառահանման ապրանքների գերի մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը.



ԳՅՈՒՂԱՏՆՏԵԱԿԱՆ ՈՂԱԿՆԵՐԸ	1925—1926 թիվ			1926—1927 թիվ		
	Ընդամենը	Վաճառահանման արժեքի շրջանում	%-ը	Ընդամենը	Վաճառահանման արժեքի շրջանում	%-ը
Ստորին ց ա ն ց	3460	2487,0	71,9	7871	6073	77,1
	100,0	100,0	—	234,6	244,2	—
Միտ թյուններ	5683	5201	91,5	9015	7555	83,8
	100,0	100,0	—	158,6	145,3	—
Ը ն գ ա մ ե ն ք	9143	7688	84,1	16886	13628	80,6
	100,0	100,0	—	184,7	177,3	—

Գյուղատնտեսական կոոպերացիայի սխեմայի ընդհանուր ապրանքաշրջանառությունը մի տարվա ընթացքում համարյա կրկնապատկվել է, ըստ վորում թեթևակիորեն իջել է միևրման արժեքի շրջանառությունից տեսակարար կշիռը (80,6% 1926—27 թ. ընդդեմ 84,1%-ի 1925—26 թիվին)։ Դրան հակառակ, բարձրացել է ցանցի միևրման շրջանառության տեսակարար կշիռը (71,9%-ից մինչև 77,1%)։ Սա բացատրվում է նրանով, վոր Միտ թյունների 1926—27 թ. ապրանքաշրջանառությունից մեջ մատակարարման ապրանքների շրջանառությունը զգալիորեն բարձրացել է, համեմտվ մինչև 1.370.000 ուլեր։

Այս աղյուսակը նույնպես պարզորեն ցույց է տալիս, վոր թե ցանցի է թե Միտ թյունների միևրման-վաճառահանման ապրանքների շրջանառությունն յերկու տարվա ընթացքում զերակշռող տեղ է ընունում է կազմում է Գյուղկոոպերացիայի ամբողջ ապրանքաշրջանառությունից 4/5 մասից ավելին, ընդ ամին Միտ թյունների միևրման ապրանքաշրջանառությունն ավելի շատ է, քան ստորին ցանցինը։ Սա նշանակում է, վոր առևտրական գործնչությունից ընդգրկված Գյուղկոոպերացիայի նպատակն է հնարավորին չափ բավարարել գյուղատնտեսական հում նյութերի վերաբերյալ պետական արդյունաբերությունից կարիքը, ինչպես է ավելացնել հում նյութերի արտահանումը։

**Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմից մըմբերման հում նյութերը և արտադրանքները յեվ արտադրանքները**

Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմից մըմբերման հում նյութերի տեսակներն ամենից առաջ կախված է նրանից թե ինչ կարող է տալ յերկրի գյուղատնտեսությունը, է թե ինչ պահանջներ կատաչաղվեն պետարդյունաբերությունից և արտաքին ու ներքին շուկաների կողմից։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե Գյուղատնտեսական կոոպերացիան ինչ միևրքներ է ինչ գումարի յե միևրել (արժեքը վերցրաց է միևրման գներով է հազար ուլերիով)։

№ և քանակ	Գյուղատնտեսական միևրման հում նյութերի է արտադրությունից մշակույթի հիմնական խմբերն ու տեսակները.	1925—26 թ.		1926—27 թ.		Աճման %
		Բացարձակ թ	%	Բացարձակ թ.	%	
<b>Ա. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ</b>						
1.	Այգեգործ. (խաղողի) արտադրանքը	258,9	5,4	1137,0	14,7	339,0
2.	Պտղարուծություն	35,0	0,7	212,4	2,7	506,8
3.	Բանջարաբուծություն	—	—	20,4	0,3	—
4.	Դաշտավարություն (Ասանց տեխնիկական կալուստիան)	69,9	1,5	350,9	4,5	402,0
5.	Մարգագետինների արտադրանքը	—	—	137,0	1,8	—
6.	Բամբակագործություն	3939,2	81,1	4065,0	52,5	3,5
7.	Ծխախոտագործություն	15,4	0,3	41,1	0,6	186,3
<b>Ընդամենը հողագործ.</b>		<b>4318,4</b>	<b>89,5</b>	<b>5966,7</b>	<b>77,1</b>	<b>30,8</b>
<b>Բ. ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b>						
1.	Կաթնատնտեսությունից արտադրանքը	392,0	8,2	1152,0	14,9	193,0
2.	Շերամապահություն	41,9	0,9	224,4	2,9	435,5
3.	Քուշնարուծություն	11,0	0,2	68,0	0,9	518,1
4.	Մեղվաբուծություն	9,2	0,2	32,3	0,4	251,1
5.	Անասնապահություն	44,3	1,0	297,2	3,8	573,1
<b>Ընդամենը կենդանաբուծ.</b>		<b>497,4</b>	<b>10,5</b>	<b>1773,9</b>	<b>22,9</b>	<b>256,6</b>
<b>Գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը</b>		<b>4815,8</b>	<b>100,0</b>	<b>7740,7</b>	<b>100,0</b>	<b>60,7</b>

Այստեղից կարելի է հանել չափազանց արժեքավոր յեղրակացություններ, վորոնք ապացուցում են միևրման գործառնությունների ճիշտ ըմբռնումը է վերջին յերկու տարում Հայաստանի Գյուղկոոպերացիայի արտադրությունից չափերը։

Այդ յեղրակացությունները հետևյալներն են.

1. Միևրման ամբողջ միևրքները՝ արտադրությունից հետ միասին, զրամական արտահանությունից ավելացել են 60,7% ընդդեմ 1925—26 թ., ըստ վորում այդ միևրքները հավասար լինելով մոտավորապես 8 միլիոն ուլերու, կազմում են գյուղատնտեսությունից ամբողջ ապրանքային արտադրանքի միայն 50,0%-ը։ Միևրման հետագա ուժեղացումը (նույնպես է արտադրությունից) հենվում է կոոպերացիայի ֆինանսական հնարավորությունների վրա (շրջանառու միջոցների է հիմնական ներգրումների ուժեղացում)։

2. Ինչպես պետք էր սպասել, անասնապահությունից արտադրանքի միևրումներն ուժեղացել են ավելի ինտենսիվ, քան հողագործությունից արտադրանքի միևրումները (256,6% ընդդեմ 30,8%-ի), վորովհետև Գյուղկոոպերացիան ավելի թույլ է ընդգրկել անասնապահությունից ապրանքային արտադրանքը, քան հողագործությունից (22,6% ընդդեմ 70,8%-ի, տես նախորդ աղյուսակը)։ Նշանակում է գյուղատնտեսությունից ամբողջ ապրանքային արտադրանքը պլանամեր ընդգրկելու իմաստով՝ մատակարարումը տարված է ճիշտ։



3 Գյուղկոտակերացիայի միջերումների մեջ գյուղատնտեսական յուրաքանչյուր տեսակի արտադրանքի տեսակարար կշիռն առանձին վերցնելով, մենք տեսնում ենք, վոր հողագործությունյան արտադրանքի տոկոսը 1926—27 թ. պակասում է 1925—26 թ. համեմատությունյամբ (77,1<sup>0</sup>/<sub>6</sub> ընդդեմ 89,5<sup>0</sup>/<sub>6</sub>-ի), շնորհիվ բամբակի արտադրանքի տեսակարար կշիռի, վորը պակասում է 28,7<sup>0</sup>/<sub>6</sub>: Քանի վոր բամբակն ամբողջ 100<sup>0</sup>/<sub>6</sub>-ով անցնում է Գյուղկոտակերացիայի միջով, ուստի այս պակասումը պետք է բացատրել միայն գյուղատնտեսությունյան մյուս ճյուղերի արտադրանքի բարձրացմամբ:

Այստեղ պետք է հիշատակել, վոր բամբակը մեր միջերման մեջ կազմում է ամենարարձք տոկոսը և իր արժեքով հավասար է 1925—26 թ. վողջ միջերման 81,6<sup>0</sup>/<sub>6</sub>-ին, իսկ 1926—27 թ. 52,5<sup>0</sup>/<sub>6</sub>-ին:

4. Գյուղատնտեսական կոտակերացիայի միջերումների մեջ չափազանց չնչին տեղ են բռնում բանջարաբուծությունյան, թուզնարուծությունյան, մեղվաբուծությունյան և անասնաբուծությունյան (առանց կաթնատու անասունների) արտադրանքը, մինչդեռ զբանց թե ապրանքային արտադրանքը և թե տեսակարար կշիռը գյուղացիությունյան ամբողջ ապրանքային արտադրանքի մեջ վորք: չէ: Բացի զբանցից, պահանջ և զրպացվում այդ միջերքների՝ ինչպես ներքին շուկայում (միս կանաչեղեն), նույնպես և արտահանման համար (մեղ, ձու): Այդ պատճառով անհրաժեշտ է թե ընթացիկ տարում և թե հետագայում ուժեղացնել այդ արտադրանքների միջերումը:

